ՕՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Այսուհետեւ ոչինչ Եգիպտոսեան խորամանկ քուրմեր, որ կամէին լինել դիտումեան միայնակ պահապանքը. այսուհետեւ ոչինչ Ձինեական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարներն մուտքը ազգերի մէջ: Այսուհետեւ լոյս եւ ճշմարտութիւն եւ ազատութիւն խաւարի բաբելոնեան գերութիւնից:

Ս. Նալաբեանց:

ՈՒՆԱՂԻՆ ՏԵՐՏԵՂԱՑԻՐ.

ՓԵՏՐՎԱՐ 1858 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԱՄՍԱՏԵՏՐԱԿ 2.

ՄՈՍԿՎԱ,

Imprimerie d'Ernest Barfknecht.

1858.

ՐԸՆԱՆՈՒՐԿՆԵՐ·

ԴՓՍՈՒՀԻ ԴԸ ՇԵՎԸՏՕՂ·

Կլեմանս Թօլերտի գործը ·

Ը·

ՏԵՍՈՒԹԻՒՆ·

—

Մի անգամ առաւնային մուխին գիշերի մէջ, մի ձիաւոր լայն վերարկուով փաթաթված գնում էր Շեվըեօղեան խաղաղ հովտի միջով· Նորա թուխ հանգերձը, այլև նորա ջանքը, որ իւր ձիուն ընթացքը տայ արօտների վերայով և այդպես նորա քայլերի ձայնը լինի առաւել փոքր լսելի, տեղիք էին տալիս մտածելու, թէ այս ձիաւորը, չէր կամենում ճանաչվիլ· Նա հասաւ ամրոցի վանդակաշէն պարսպին, որի դուռը բաց էր, և շուտով անյայտացաւ ծառաստանի թանձր ստուերի մէջ· Ձիաւորը, որ այսպէս խաղաղ և խորհրդաւոր կերպով ներս մտաւ ամրոցի մէջ, էր Շալէ կոմսը, Լուդովիկոս տասներեքերորդի պալատական, ամենապեղեցիկ ասպետը· իսկ կինը, որ ընդունեց նորան, էր աղնիւ և պեղեցիկ դքսուհին դը Շեվրեօզ·

Երիտասարդ մարդը, վերայից հանելով իւր վերարկուն և լայնաշուրթ գլխարկը, երևեցաւ իւր բոլոր վեմ դեղեցկութեան մէջ։ Նա կը լինէր այն միջոցին քսան և չորս տարեկան։ Նորա երկայն, պայծառ շագանակագոյն մազերը այն ժամանակի սովորութեան պէս երկու բաժանած, գագաթի վերայ, խիտ դանդուրներով թափվում էին նորա ուսերի վերայ։ Մեծ կապոյտ աչքերը կենդանացած էին մի առանձին քընքշութեամբ, իսկ սև, և մի փոքր վեր բարձրացրած ընչացքը տալիս էին նորա հանարեա թէ միշտ մտախոհ երեսին մի աղնիւ հպարտութեան կերպարանք. առ հասարակ նորա բոլոր դծագրութիւնքը զուդաստաշաճութեան օրինակ էին. իսկ ձեռքերը համարվում էին առաւել դեղեցիկները պալատի մէջ։

Նա հագած էր սև թաւիշեայ զգեստ ատլասեան վերջաւորներով. սպիտակ բատիստեայ շրջադարձ օձիքի տակից երևում էին ոսկեայ շղթաներ, թանգագին քարերի բազմութիւն շարած էին այն հանգոյցների մէջ, որ զարդարում էին նորա կուրծքը, իսկ կօշիկները յօրինված էին լայն ասղնագործով, որ հասանում էին մինչև կրունկի խթանները։

Այս գիշերային առաջին ժամերը թռան գնացին կոմսի համար շատ արագ և անկատելի կերպով։ Երկար ժամանակ նստած էր նա այն կին մարդու ոտքումը, որին տալիս էր անունս Վալենտինա, մոռանալով բոլոր աշխարհը և վերացած լինելով իւր երջանկութեամբը։ Այս երջանկութիւնը ոչինչ ամպերով մռայլված չէր. և եթէ Վալենտինայի երեսը, որ սիրելի էր կոմսին, ժամանակ առ ժամանակ դունաթափվում էր յանկարծ, եթէ նա թաքցրեց ատլասեան բարձի տակ մի նամակ, երբ որ նորա սիրականը ամենայն ջերմութեամբ համբուրում էր նորա ձեռքերը, եթէ նորա չորս կողմը ցրիւ ընկած թղթեր ու գրիչները յուցանում էին, թէ նա տեսութենից յառաջ պարապած էր մի այլ բանով, քան թէ սպասելով միայն իւր սիրականին, այնու ամենայնիւ այս բոլորը, հասկանալի էրևեցաւ սիրով վառված երիտասարդին և նա մնայ ամենևին հանգիստ։

Նորքա միայն, որ խաղաղ են հոգով, կարող են ուշադիր լինել ամենայն բանի. բայց նորա, որոնց սրտին տիրած էին ախտերը, տեսանում են և մոռանում են միայն ախտի առարկայի վերայ. բոլոր միւս բանները որպէս թէ չը կային նոցա համար։

Դէքսուհին դը Շեվրեօզ հանգստացած էր երկայն աթոռների վերայ, սպիտակ բևհեղեայ զգեստը և մարգարտեայ մանեակը էին նորա բոլոր զարդարանքը, և այս պարզութիւնը համեմատ էր կէս գիշերի խորհրդաւոր ժամերի խաղաղ երջանկութեանը։

Մի այսպիսի րոպէում, երբ այր մարդը բոլորովին անձնատուր է

լինում այն կին մարդուն, որին սիրում էր, և երբ կին մարդը այնու ամենայնիւ աշխատում էր փոխել սիրահարի սիրտը, որ ընծայում էր իւր անձը նորան։ Վալենտինան զուգէ թէ խորհրդով, տուեց իւր խօսակցութեանը մի այնպիսի ձև, որ ցոյց էր տալիս թէ չէ հաւատում իւր սիրահարին և որպէս թէ կասկած ունի կոմս Շալէի սիրու մասին։

«Ո՛վ դքսուհի», բացագանչեց կոմսը, հպարտութեամբ վեր կանգնելով տեղից, զգուշացէք։ Կասկած տանել այնպիսի սիրու վերայ, ինչպէս իմն է, համարեա թէ այնպիսի սեղանակատութիւն է, որպէս թէ մի մարդ կասկած տաներ ընութեան խոհութենի վերայ»։

Վալենտինայի երեսը մի քանի րոպէ վառվեցաւ կարմրութեամբ և թեթև երկիւղով յառաջ տարաւ նա իւր խօսքը այսպէս· — ուրեմն զուք սիրտ կ՚առնուիք, իմ համար յանձն առնուլ զրկանքներ։

«Ամենայն զրկանք յանձն կ՚առնում»։

—Նէ ոչ միայն իմ, այլև նոցա համար, որոնց սիրում եմ։

«Լաւ, երդվում եմ իմ պարծանքով»։

—Նէ մի թէ այնպիսի դիպուածում եմ, եթէ ստիպված էիք վերջնական որոշել իմ թշնամուց։

«Ընտարակոյս»·

—Նէ կը հրաժարվէիք այն հարստութենից, որ կարող էր տալ ձեզ պալատը։

«Նա ունիմ երեսուն հազար էքիւնէկ տարեկան եկամուտ», պատասխանեց կոմսը, տղայական հպարտութեամբ· այսպիսի հարստութեան ունէին պատճառ նախանձելու արքայազնները անգամ։

—Նէ պաշտօնի պատուի օգուտներից, որ պիտոյ է ստանայիք։

«Նա չը խնդրեցի Անժուեան նահանգապետութիւնը և գլխաւոր պալատապետութեան պաշտօնը, այլ ինձանից խնդրած էին, որ յանձն առնում այդ երկու պաշտօնքը»։

—Նէ սուրբ Հոգու կարգի նշանից, որ դուք ցոյս ունէիք ստանալ և որի մասին արհամարհանքով խօսելու չէք· պատճառ, սաստիկ ցանկանում էիք հասանել այդ պատուին։

«Կը հրաժարվէի արդիօք նորանից····· ձեր համար··· ո՛վ Վալենտինա, ձեր մի համբոյրը թանգ է ինձ քան՝ երեք Ֆրանսիայի բոլոր պատուանշանքը»։

Կենդանի և քնքուշ երախտագիտական զգացողութիւն նկարագրվեցաւ մի րոպէ դքսուհու աչքերումը· նա սկսեց յառաջ տանել իւր հարց ու փորձը, բայց ոչ այնպիսի հաստատ ձայնով, ինչպէս յառաջ։

—Ինչպէ՞ս այն հարստութիւնը և պատիւները, որ ձեր միջնորդութեամբ թափելու էր թագաւորի ձեռքը ձեր մեր վերայ. միթէ դուք կը հրաժարվէիք դոյանից իմ համար:

»Ո՛հ դքսուհի. մէջ բերելով իմ մայրը, դուք կարծումէք, որ կը հարկադրէք ինձ յողդողդիլ. Ձեր թաքուցանում, որ ես գուցէ թէ չը կարողանայի տանել մի այդպիսի փորձութեան, բայց քաւ լիցի ձեր կողմից, իմ անձը ենթարկել դորան. ես ոչինչ չեմ կարող առնել իմ մեր համար. հարստութիւնքը ոչինչ բան կարող չէին յաւելցնել նորա երջանկութեան վերայ. պատճառ, մայրս իմ երջանկութիւնը վերագասում ամենայն բարութիւնից, որ բաղդը կամ դիպուածը սովոր է ուղարկել մարդուն. իսկ պատիւները ամենևին անպիտան են նորան. Թէպէտ և թագաւորը թափէր նորա վերայ իւր թագի բոլոր մարգարիտները, դարձ ևս կարող չէին ծածկել նորա սուրբ բարեգործութիւնքը, որով փայլում այս անհամեմատ կնոջ կեանքը....

—Ո՛յ, տեսանում եմ, որ պիտոյ է ինձ իմ հարց ու փորձս բայ թողուլ և հաւատալ քո սիրուն. Այս ասելով պարզեց Վալենտինան դէպ ի կոմսը իւր գեղեցիկ ձեռքը իբրև նշան խաղաղութեան:

»Փոխանակ կուրօրէն ինձ հաւատալու կարող էք դործով փորձել:

—Ո՛հ դուցէ կը պատահի, բայց ոչ այժմ. յետոյ....

»Ոչ յետոյ, այլ այժմ. ասաց կոմսը, ոտքը զարկելով գետնին անհամբերութենից. »պահանջեցէք ինձանից իմ կեանքը այսօր իսկ....

—Ո՛յսօր.... բայագանչեց դքսուհին հառաչելով, —վատաբաղդ Շալէ. միթէ կամէիք դուք հանդէպ գնալ այնպիսի յաւերի, որ երկիւղալի էին պալատական հակառակութեանների մէջ ծերացած մարդերին ևս, և հարկադրուէին դողալ և սարսափիլ այն մատաղահաս կին մարդերին, որ անպիտանութեամբ, անհոգութեամբ և ուրախասիրութեամբ հեռի էին ամենայն ստոյգ անհանգստութենից և վտանգներից...:

Ո՛հ, իմ բարեկամ, գու ստէպ հարցանուէիր ինձանից իմ արտասուքի և հառաչանքների պատճառը.... կամիս խնամել այդ պատճառը:

Ո՛յ» բայագանչեց կոմսը, ընկնելով դարձեալ դքսուհու ոտքը, »հաւատա ինձ քո արտասուքը, քո վշտերը, քո ամենափոքր տրտմութիւնքը, թող խնամամ ևս բոլոր քո միտքը, բոլոր յանկութիւնքը. այնուհետև միայն կը լինիս դու կատարելապէս իմը.... ասա ինձ այդ բոլորը, բայց արա ինձ քո հոգին, և ոչ իմ կեանքը, իմ գալոց օրերը, իմ ամենայն բանը....

—Ամայիր ուրեմն մեծահոգի և հաւատարիմ բարեկամ, որ կայ մի մարդ, որի վատթարութիւնը կամի խլել ինձանից այն բանը որ աշխարհի վերայ ևրած բոլոր բաներից առաւել թանգագին էր ինձ, որ թու-

նաւորումէ թագուհու, իմ պաշտելի խնամածուի կեանքը և թափումէ իւր թոյնը միւս շատերի վերայ։ Այդ մարդը ո՛չ կը ղրկվի իւր իշխանու թենից, ո՛չ կը հեռացվի պալատից։ . . . Հարկաւոր է, որ նա մեռանի, ապա թէ ոչ. ամենայն ինչ խորտակվելու է նորա ամենակործան ուժի հարուածի տակ։

»Ո՛հ, վալենտինա, ինչ պատճառով ծածկումէիր այդ լանը ինձանից մինչև այսօր. այս սուրը վաղուց ահա ազատած կը լինէր քեզ նորանից։

—Ընկե՛ր. դու չը գիտես, թէ ո՛վ է այդ մարդը։

»Գող լինի նա դուքս, պէր, թող արքայազն լինի. իմ ինչ գործն է։

—Ւյա մեծ է քան այդ յիշված մարդիկը։

»Կագաւոնն է։

Շալէն գունաթափ եղաւ և յետ քարշվեցաւ։

—Ո՞նց քան թէ թագաւորը։

»Կարդինալը. ո՛հ, ես հանգստանումեմ. . . . որպիսի ուրախութեամբ պիտոյ է պատերազմ բանալ ես այդ կարմիր վերարկուի հետ, որ վաղուց ահա ծակումէ իմ աչքը։

—Դու ատումես նորան բնական ազդեցութենով, չիմանալով թէ ինչ ատելի բան կար նորա մէջ։ Նա սկսեց իւր թագաւորութիւնը, Մարիա Մեդիչիսը հալածելով. Լուդովիկոսից շինեց նա մի ապերախտ որդի, և հարկադրեց նորան հեռացնել թագուհի մայրը նորա ծանր և դժուար ասպարիզի վերջումը այնպէս, ինչպէս հեռացնումեն մի ծառայ, երբ սա աւարտել էր իւր գործը. նա մնատնեց իւր որդեգիրը կատարեալ անգործութեան. գայիսոնի փոխանակ տուեց նորա ձեռքը բաղէ և նուագարան։ Աչք պահելով թագաւորի բոլոր ընթացքի վերայ, հնկվիզիտորի սեպհական խորամանկ խստութենով, նա չէ դադարում նոյնպէս նեղել ու ճնշել և մատաղահաս թագուհին։ Չէ կարելի մոքով նկարագրել այն բոլոր տառապանքը, որ կրումէ նորա ձեռքից խեղճ, Աւստրիական Աննան։ Նա անբաղդ է իբրև թագուհի, որից խլումէր կարդինալը ամենայն իշխանութիւն և իրաւունք. անբաղդ է իբրև ամուսին, որ ղրկվումէր կարդինալի ձեռքով ընտանեկան ուրախութենից։ Մինչև անգամ նկեղեցու մէջ, ուր նորա հպատակների ամենավերջինը, դատումէ միմիթարութիւն, և ուր ամենայն ինչ հոգևորված է խաղաղութենով և սիրով, մինչև անգամ այս տեղ, սպասումէ թագուհուն ամենախիստ ատելութիւն, մերժված սիրու ատելութիւն. . . .

Վաստիկ ամրոխված դքսուհին դադարեց մի րոպէ. յետոյ ժողովելով միտքը շարունակեց։

»Ո՛նեստրը, որ մեռանումէ պատուասիրութենան ծարաւով և դատ-

նի նախանձու Թուենով, Հալածումէ անիրաւապէս մանաւանդ Թէ այն երեւելի օտարերկրացին, որ ընակվումէ մեր պալատումը, մծտ գրաւելով մեր բոլոր մատաղահաս աղնուականքը, և որին, ինչպէս երեւումէ, յաջողել էր, իւր վերայ դարձուցանել Թագուհու ուշադրութիւնը: Կարդինալը ցանկանումէ ինչպէս և իցէ հեռացնել Բուքինհեմը· նա հաւատացնումէ Թագաւորին, Թէ Անգլիական դեսպանի և Աւստրիական Աննայի մէջ եղած սէրը ոչինչ կարծիքի տակ չէ· նա Թափումէ Լուդովիկոսի սրտի մէջ այն նախանձը, որ պարումէր իւր սեւիական սիրտը, և խօսումեն, Թէ կարողացել է արդէն յօժարեցնել Թագաւորը, որ սա պահանջէր Անգլիայից փոխել իւր դեսպանը: Ես նամակ ստացայ տիկին դը Լիւվինիլից, ուր խօսվումէ այս մասին, իբրև այնպէս բանի վերայ, որ երբէք տարակուսի տակ ընկնելու չէր:

Խորին լռութենով լսումէր դքսուհու խօսքերը Շալէն· այս բոլորը շատ փոքր գրաւումէր նորան և չէր պատճառում նորա հոգու մէջ այն տեսլութիւնը, որ ցանկանումէր դքսուհին պատճառել:

»Չնչ օտար են այս բոլոր հակառակութիւնները, իմ բարեկամ» շարունակեց վալետինան, »դուք դեռ նոր վերադարձել էք Լոնդոնից, ուր մտածումէին այն մասին, որ խլէին Հուգենոթներից մի քանի ամրոցներ: Դուք չը գիտէք այն անարգանքը, որ հասուցանումէ մեզ մեր անհաշտ թշնամին: Եթէ այն երեւելի մարդերից յետոյ, որոնց մասին խօսցայ, համարձակվէի ես անուանել և ինձ, այն ժամանակ դուք կ'իմանայիք որ ինձ ևս բաժին հասած են ամենասաստիկ անարգութիւններ և վշտեր: Ես կը պատմեմ ձեզ միայն, որով կարող էիք գտնել միւս մնացածների վերայ: Մի քանի օր սորանից յառաջ կարդինալը նայելով իմ վերայ իւր խորամանգ աչքերով, ասաց· դ'Անկր մարշալի տիկինը չէ մեռած· կայ մի կին, որ սեւիականումէ ինքեան դանձարանի հարբուտութիւնը, և դէպ ի չարը գործ դնելով Թագուհու հաւատարմութիւնը, վաճառումէ տեղեր ու պաշտօններ:

—Ո՛չդպէ՞ս է խօսել ձեր մասին—բացագանչեց Շալէն քարշելով սուրը,—նա ասել է այդ բանը և դուք միևչև այժմ վրէժխնդիր չէք եղած նորանից:

»Պատճառ, ես չը կամէի, որ ուրիշները խնդրէին իմ վրէժը· ես կամենումէի որ այդ բանը ձեր ձեռքով լինի: Ես չեմ պահանջում ձեզանից յայտնի պատերազմ կարդինալի հետ· այդ անկարելի է, և վտանգաւոր ձեր համար: Նորա ընդդէմ ղինուորված են երիտասարդ աղնուականք, որ գիտէին իւրեանց կոչման չարգը, իւրեանց երաւունքի և պատուի չարգը, որ կամենումէր Րիշելեօն խլել նոցանից: Այդ աղնուականքը սոքա են, Գաստօն, Թագաւորի եղբայրը, Մոնմո-

րանային, երկոքին վանդումքը, Մօժիրօնը, դ՝Անդրագը, ժուանվիլը· մի խօսքով, ամենէքեան նոքա, որոնց երակներուն մէջ խաղումէ աղնուական արիւն։ Միացէք այս բորբոքված, բայց անսիրտ երիտասարդների հետ, վառեցէք նոցա հոգին ձեր հոգու կրակով, հարկադրեցէք նորանց ներգործել, և շտապեցէք կատարել այն նախապատրաստած դաւաճանութիւնը, որի մասին ամենայն ուշացած րոպէ կորստական էր։

Շալէ կոմսը կանգնած էր պքսուհու առաջև և ձեռքը դնելով կուրծքի վերայ, ասայ յաղթական կերպով։

—Իմ պարծանքովս խոստանումեմ ձեզ գործ դնել ամենայն կարելի հնար, ձեր վրէժը հանելու կարդինալից։

»Մի մոռանաք նոյնպէս, որ կը հանդիպի ձեզ մի փոքր ժամանակ հեռանալ Թաղաւորից։

—Գիտեմ։

»Լուդովիկոսը սիրումէ և պաշտպանումէ ձեզ։

—Մի և նոյն է իմ համար, ես խոստացել եմ ձեզ։

»Կա շինել է ձեզ գլխաւոր պալատապետ։

—Երկինքը շինել է ինձ իշխան և աղնուական։

Վալենտինան յած թողից աչքերը, որպես թէ ամաչելով, որ կարողացաւ կասկած տանել· բայց մի րոպէ լուռ կենալով, ասայ յեստոյ քնքշութեամբ։ »Բարեկամ, կանթեղի ղոյսը սկսումէ շեկանալ, շուտով կը լուսանայ օրը···· շտապիր Աստուծոյ սիրու համար, շտապիր հեռանալ, ես չը կամիմ, որ տեսանէին քեզ Հովտի մէջ այսպէս շուտով։

Շալէն հնազանդվեցաւ· նորա համար անցաւ այն դիշերներից մինը, որոնց միջոցին սէրը, այն ժամանակների գլխաւոր բան ու գործը, խառնված տէրութենական գործերի հետ միասին շատ անգամ երևելի դիպուածների պատճառ էր լինում։

Շալէն հանդարտութեամբ իջաւ փոքր և գաղտնի սանդուղքների վերայով, և երբ մնտեցաւ գլխաւոր մուտքին, ուր արեգակի անդրանիկ ճառագայթները փոքր առ փոքր սկսումէին հալածել գիշերի խաւարը, տեսաւ նա մի քանի քայլ իւրեանից յառաջ մի բարձրահասակ կերպարանք···· նա յարձակվումէր ահա նորա վերայ, որ բռնէ նորան, բայց այն րոպէին երբ նորա ձեռքը մնտեցաւ շօշափելու այս ստուերը, սա ծածկվեցաւ պարտէզի թանձր ճանապարհի մէջ և շուտով անյայտացաւ լոլորովին։

Ը.

Ա աստակած այս գիշերի քաղցր տպաւորութիւններից, որ վայելել էր, տուն վերադարձած Շալէ կոմսը, պատրաստվումէր գնալ անկողին, որ մի ժամ հանգիստ առնու։ Ցանկարծ նորա հայեացքը ղարմանալով ընկաւ մի մեծ ծրարի վերայ, որ կնքած էր թագաւորական կնքով և դրած հնոցի վերայ։ Նա մօտեցաւ, բացեց կնիքը և տեսաւ Սուրբ Հոգւոյն աստիճական նշանը իւր հրովարտակով, որի հետ դրած էր և թագաւորի ձեռքով գրած մի տոմսակ։ Ա յսպիսի անսովոր շնորհ ցոյց տուած մի այնպիսի երիտասարդ մարդու, ղարմացք բերեց Շալէ կոմսի վերայ։

»Ո՛վ իմ պաշտելի թագաւոր, ձայն արձակեց նա արտասուքը աչքերում՛,» դու միտք ես բերել ինձ, դու պատրաստել ես ինձ անակընկալ ուրախութիւն նոյն իսկ ժամանակին, երբ ես խոստանումէի կորուսանել քո ընտրած մինիստրը.... Աստուած իմ՛, Աստուած իմ՛, և ես երդուեցի կատարել....

Լսղճտանքի խայթը կտոր կտոր էր առնում կոմսի սիրտը· այս ձայնը ասումէր, թէ նա շատ վատ է արել, բայց նորա հոգուն տիրել էր մի այնպիսի բորբոքված ախտ, նա այնպէս քնքուշ սիրով սիրումէր դքսուհին, որ ոչինչ զղկանք չէր կարող արգելք լինել նորան, և նա կամենալով ապացուցանել իւր երախտագիտութիւնը, այն երջանկութեան փոխարէն, որ նորան բաշխել էր դքսուհին, վճռեց հաստատ մնալ իւր դիտաւորութեան վերայ և կատարել իւր երդումը առանց զանցառութեան։

Մի րոպէ հեռանանք այս երիտասարդ կոմսից, որ անչնաւոր էր այն դժուար և տխուր մտածութիւններին, որ տիրել էին նորան, և մի փոքր յետ դառնանք դէպ ի նորա երևելութիւնը և դէպ ի այն ժամանակը, երբ նա առաջին անգամ երևեցաւ արքայական պալատումը։

Նորա հայրը, շառաւիղումէր Թալէյրանեան իշխանների ցեղից, որ երբևիցե տիրումէին Պերիգորին, որ կարողս չորրորդը միացուց Ֆրանսիական թագի հետ, Հենրիկոս երրորդի ձեռքով ստացել էր իւր նախկին իրաւունքները, այսինքն յետ դարձուցած էր նորան նորա նախահարց հին ամրոցը, սակայն առանց այն իշխանութիւններին, որ ունէին նորա նախահարքը գաւառների վերայ։

Հենրիկոս Շալէ մանուկ կոմսը շատ վաղ ղրկվելով հօրից, մնացել էր իւր մօր Հոգալարձուհեան տակ· թէպէտ և նորա մայրը շատ բարձր խելքով կին էր համարվում՛, այսու ամենայնիւ նորա տուած կրթութիւնը չը կարողացաւ մատաղահաս կոմսի մէջ յառաջացնել մի պատ-

շաճապէս հատատ քնաւորութիւն, այլ ձգեց նորա սրտի մէջ քնքուշ ղգացողութեան և վերին աստիճանի բարեպաշտութեան սերմեր։

Երբ Շալէ կոմսը քսաներկու տարեկան դարձաւ, նորա մայրը տեղեկ տալով այն հին բարեկամների յորդորանքին, որ ունէր թագաւորական դռնումը, հաւանեցաւ դէպ ի թագաւորական դուռը արձակել իւր որդին, որից մինչև այն միջոցը երբէք չէր բաժանված։ Հոկտեմբեր ամիսն էր։ կոմսը պատրաստվումէր առաջին անգամ հեռանալ իւր հայրենական ամրոցից։ առաւօտեան չորս ժամի մօտ Շալէ կոմսուհին, ներս մտաւ իւր որդու սենեակը, որ հրաժարական ողջոյն տայ նորան և ձգէ նորա վրայը այն պատկերը, որ մինչև այն րոպէն կրումէր ինքը իւր վերայ։

Գարկեշտ պարզութիւնը այն թուխ հանդերձների, որ Շալէ կոմսուհին շուտով հագել էր, և նոցա անզարդութիւնը տալիս էր նորան մի սգաւոր կերպարանք։ պատճառ, սովոր էին տեսանել կոմսուհի Շալէն միշտ գեղեցիկ հագված, ինչպէս պատշաճ էր նորա կոչմանը։ Սպիտակ մեղրամոմից ճրագը, որ վառվումէր սենեկի մէջ, լուսաւորումէր նորան թոյլ և մեռեալ լուսով։ Շալէ կոմսուհին նստած էր իւր որդու մօտ, որ քանի ժամ սորանից յառաջ եկանելով անկողնից, որ նայէ և տեսանէ իւր գնալու համար եղած պատրաստութիւնքը, ընկած էր ծնկի վերայ և աղաչումէր Աստուածը, որ տայ իւրեան մի անվտանգ ճանապարհորդութիւն։ Երկար ժամանակ լռութեամբ նայումէր նորա վերայ վշտացած մայրը։ Շալէ կոմսը այնպէս դեղեցիկ էր այս խոնարհ և հեզ դրութեան մէջ, նորա մանուկ ճակատը փայլումէր այնպիսի վերին անշնութեամբ, որ մայրը չը կարողացաւ իւր աչքերը դարձուցանել նորանից։ Վառվող ճրագի լոյսը կողմնակի ընկնելով կոմսի վերայ, անչափ նման բացարձակվումէր նորա կերպարանքի ստուերը. սպիտակ պատի վերայ, որ այդ տեղումը հարթ ու հաւասար էր և ծաղիկներով զարդարած։

Կոմսուհին առաւ կապարագրիչը և շատ ճշդապէս նկարագրեց պատի վերայ այն կերպարանքը, որ այս կերպով մնայ պատի վերայ ծաղիկների մէջ։

»Ես պահպանումեմ այս տեղ գոնե քո մի բանը, իմ որդի» ասաց կոմսուհին։ »քո բացակայութեան ժամանակ, այս սենեակը պիտոյ է զարդարված լինի միշտ այնպես, ինչպէս այսօր, և շրջապատած այն ծաղիկներով, որ դու սիրումէիր։ այս տեղ կը գամ ես ամենայն օր մխիթարվելու քո միշտակումը, և ինձ պիտոյ է թուի, որպէս թէ քո հետ էի միասին»։

—Այրիկ, կարող եմ ես յուսալ, որ իմ աղաչանքը երբեմն կը

Համոզէին ձեղ՝ որ դուք կը յօժարէիք վերջապէս դալ դէպ ի Դուռը և բնակել այն տեղ իմ հետ միասին։

»Ուրանի դու բաղդաւոր կը լինես, ես այդ բանը չեմ առնելու, բայց եթէ երբ և իցէ ամենափոքր անբաղդութիւն քեզ հասանելու լինէր, այն ժամանակ դու երկար կրելու չէիր նորան միայնակ»։

—Այդ ինչ բան է···· հարց արեց կոմսը։

»Այդ, բուի ձայն է», պատասխանեց մայրը դուշնաթափած, »նա, որը լուսացած, վերադառնումէ իւր բոյնը»։

—Բայց նորա ձայնը լսվեցաւ այն ժամանակ, երբ դուք խօսումէիք անբաղդութեան վերայ·····

Ամենայն բան պատրաստ էր ճանապարհորդութեան համար· առաջոյի ցածումը լսվեցան ծառաների ձայներ և ձիերի խրխնջոց։

Շալէ կոմսուհին և նորա որդին բայց արեցին պատուհանը, որ ստուգեն, թէ բաւական լուսացած էր արդէն օրը, կամ կարելի էր ճանապարհ դուրս գնալ։ Այս պատուհանը նայումէր դէպ ի այն ճանապարհը, որի վերայով պիտոյ է փարիզ գնար երիտասարդ ճանապարհորդը, և այն րոպէին երբ նորա մեծեցան պատուհանին, երկնքի հաստատութենից բաժանվեցաւ մի աստղ և անցանելով մեզ կապոյտ կամարի վերայով, ընկաւ նոյն իսկ ճանապարհի վերայ։

Այս երկրորդ գուշակութեան վերայ, որ այն նաներահաւատ ժամանակներում համարվումէր մի ճակատագրական բան, Շալէ կոմսուհին չը կարողացաւ զսպել իւր արտասուքը, և սիրտը վշտերով ու յաւերով լցված, բարեաւ մնա արեց իւր որդու հետ։

Շալէ կոմսը սկզբումն մի քանի ամիս միայն մնաց Ֆրանսիական պալատում· դեռ ևս նոր սկսել էր այն տեղ ծանօթանալ, և ահա գնաց Մոնմորանսու հետ պատերազմ ընդդէմ Հուգենօթներին, ուր այս երկու երիտասարդ մարդիկը փառաւորեցին իւրեանց անձը։

Շալէն տան և ուրախանալ բայակայութիւններից յետոյ վերադարձաւ դէպ ի Դուռը, և արդարև այն տեղ, այն ոսկեփայլ պալատականների մէջ կը մնար ամենևին անծանօթ, եթէ մի դիպուած չուղղէր նորա վիճակը։

Սէն—Թերմանեան ամրոցումը ստեպ լինումէին նուագածութեան և երգեցողութեան հանդէսներ· այն տեղ կարելի էր լսել երբեմն և Իտալական երգիչների, որ Մարիա Մեդիչեսը մի քանի տարի յառաջ բերել էր տուած իւր սիրական Տօսկանէայից։ Էուդովիկոսը, որ չէր սիրում այն բանը, որ նորա միտքն էր ձգում իւր դէպ ի աքսոր դատապարտված մայրը, աշխատումէր այնպիսի կերպարանք ցոյց տալ, որպէս թէ այս զբօսանքը ամենևին չէին վրաղեցնում նորա ուշադրութիւնը։

Հոսացած մի պատուհանի խոր կամարի տակ, տեսաւ նա մի բազմութիւն մանուկ պալատականների որ, փոխանակ լսելու, խօսումէին միմեանց հետ. Թագաւորը նշանացի արեց նոցա, որ շարունակէին իրեանց խօսակցութիւնները, և արմունկները հաստատած պատուհանի վերայ, մնածելով նայումէր նաւականներին որ խաղաղ ու հանդիստ լողումէին գետի մէջ։

»Ա՛յ» ասումէր Շալէ կոմսը, որ նոյնպէս գտանվումէր այս մանուկ պալատականների մէջ, »ո՛չ» իտալական տէհօրը իւր ձայնով և անվերջանալի բեկբեկանքով չարժէ մի անճաշօթ երգեցողն ստուերին ևս. ես այդ երգիչի ձայնը լսեցի պատահաբար մի քանի օր յառաջ»։

—Ո՞ւր և ինչ տեղ,—հարց արեցին նորանից։

»Չեմ կարող ասել ճշդապէս, բայց այդ պատահեցաւ Սէն—Ժերմանեան անտառի ամենաթանձր տեղումն. երգիչի ձայնը արձակվումէր մի փոքրիկ աշտարակից, որ ծածկված էր ծառերի քամակում և շինվածէ ևս խուլ տեղում»։

—Այդ բանը պատմիր մեզ Շալէ,—ասաց Թագաւորը, որի ուշադրութիւնը երևումէր թէ զարթնել էր։

»Վիշերը բոլորովին մթնել էր. զբօսնելով անտառի մէջ, մնոլորվեցայ ես ճանապարհից, այս և այն կողմն վազելով. այն լուռ ու մունջ ճանապարհների վերայ չգիտէի, թէ որը նորանից կը հանէր ինձ դէպի ամրոցը։ Յանկարծ իմ լսողութիւնը զգաց մի նուագարանի ձայն, որի հետ կապակից էր մի տխուր երգեցողութիւն։ Ես գնայի դէպի այն կողմը, ուստի լսումէր այս երաժշտութիւնը և շուտով տեսայ իմ անձը շատ թանձր և համարեա թէ անանցանելի թուփերի մէջ. խոր խաւարը շրջապատել էր ինձ, բայց աչքերս, շուտով սովորելով խաւարին և օգնութիւն ստանալով մեղմ լուսիցը, որ երևումէր առաջևս, կարողացան տեսանել այն փոքրիկ աղօտերև աշտարակը, որի սրածայր գագաթը առաւել բարձր չէր քան թէ այն կաղնիքը, որոնցով շրջապատած էր նա, և որ ունէր միայն մի նեղ պատուհան, ուստի հնչումէին երաժշտութեան ձայները, որ գրաւել էին իմ ուշադրութիւնը, և երևումէր լոյսը, որի մասին խօսեցի այս րոպէիս։

Երգեցողութեան ձայնը լսվումէր շարունակ, և իմ ականջը երբէք փորձած չէր այնպիսի քաղցր, այնպիսի կախարդիչ ներդաշնակութիւն, որպիսի թափվումէր այն միջոցին իմ չորս կողմանը։

—Չես կարող արդեօք միտք բերել մի քանի խօսք այն երգեցողութենից,—հարց արեց Թագաւորը։

»Ո՛չ. ես կարող եմ բոլոր երգը կրկնել։ Նա հոգիացած էր մի առանձին տխրութենով։ Երևումէր, որ դորա երգիչը աշխարհային ու-

նայնութեան փորձը առած էր կատարելապէս, և նորա ձայնի հնչմունքը նման էին հրեշտակի գանգատի. այնպէս քնքուշ էր այդ ձայնը, այնպէս մաքուր, մինչև թվումեր, թէ սոխակը որ վերջացնելով իւր տաղի մի տունը, սկսանումեր մի այլ, իսկոյն դադարումեր, երբ այս տխուր երգեցողութեան ձայնը վերտին արձակվումեր աշտարակից։ Ջտեսանելով նորան, որ երդումեր, կարող էի ես նրաշխաւոր լինել, թէ նա երիտասարդ և գեղեցիկ մարդ էր, որ նորա երեսը յատկանումեր գունատութեամբ և տխրութեամբ, որ նորա աչքերը ցոյց էին տալիս նորա հոգու բարութիւնը, և պղտորված էին արտասուքով.... Ո՛հ, ոչ. ես երբէք չեմ մոռանալու այն առանձնայատ երգիչը և այն յափշտակիչ երաժշտութիւնը, որ այն գիշերը լսելի էր միայն ինձ, սոխակին և անտառի խորհրդաւոր լռութեանը... »

Միւս օրը Ջալէ կոմսը, ստացաւ պլնատապետութեան հրովարտակ. այս կոչումը ինքն ըստ ինքեան թէև չուներ ոչինչ պաշտօն ու պարտականութիւնք, բայց նա շատ կարճ ճանապարհով մօտեցնումեր նորան թագաւորին։

Այս խորհրդաւոր երգիչը, էր ինքն Լու դովիկոս Երիտասաներորդը։ Թագաւորը, կամեցաւ մօտենալ իւրեան այն մարդը, որ լաւ քան թէ ուրիշները գիտեր դնահատել իւր քանքարը, որ ինքը բարձր էր համարում ամենայն բանից։

Ընձեռատուր լինելով մեծամեծի աղղեցութեանը, թագաւորը շատ անգամ առանձնանումեր իւր քնարուվը այն աշտարակի մէջ, որի մօտ Ջալէ կոմսը լսել էր նորա երգելը։

Երիտասարդ կոմսի վիճակը թագաւորական դռնումը շատ փառաւոր էր. պակաս էր նորան մի բան միայն, այսինքն յարակցութիւն մի պալատական տիկնոջ հետ, որի սէրը կարող լիներ յարուցանել ուրիշների նախանձը դէպ ի կոմսը. բայց և այս երջանկութիւնը չետ չը մնաց երկար. գեղեցկութիւնը, երկնային պարգև է, բայց մի շուտանցական պարգև. ժամանակը խլելով նորա փայլը, խլումէ նոյնպէս և նորա նշանաւորութիւնը։ Բայց եթէ այդ գեղեցկութիւնը մի երևելի աստիճանաւորի բաժին էր ընկած, այն ժամանակ նա դառնումէ պատուութեան սեփականութիւն, և խօսքի նիւթ է լինում, անբաժան այն աստիճանաւորի յիշատակից։ Ա՛յսպէս պատահեցաւ և Բուբլինհիմին, որ Լուդովիկոս ԺԳ-ի դռնումը Անգլիական դեսպան էր։ Նա Ֆրանսիայում մնաց միայն ընդ ամենն երկու տարի, և այն օրից ամբողջ երեք դար չը կարողացան ոչնչացնել այն անթարգմանելի ղնայլանքը, որ երևումէ երևակայութեանը, նորա անունը յիշելու ժամանակ։

Երբ նա երևեցաւ Սէն—Ժերմանեան պալատում, ամենեքեան մի

ապահ հետաքրքրութենով աշխատութեին իմանալ, թէ պալատի գեղեցիկներից որի՞ բաղդն է արդեօք սէր ընդունել այս մարդու մէջ։ Յառաջ կարծութեին թէ այս նախանձելի վիճակը ընկած է դը Շեվրեօզ դքսուհուն, որ փայլութեր դեռ ևս իւր բոլոր գեղեցկութենովը և պարծենութեր Աւստրիական Աննայի սիրածի անունով։

Ուշադրութիւնը, որ ցոյց էր տալիս այս փառաւոր դեսպանը դէպ ի այս տիկինը և այն երանութիւնը, որ փայլութեր այս տիկնոջ յաղթական երեսի վերայ, արդէն տեղիք չէին տալիս ոչինչ երկբայութեան, թէ նա էր այն ընտրված երջանիկ տիկինը. և ահա յանկարծ յայտնից միանգամ թագուհին, թէ Բուքինհեմը իւր հետ կցորդ պիտոյ է լինի մի պարահանդէսի։

Աւստրիական Աննայի կողմից մի այսպիսի անօրինակ ողորմութիւն դէպ ի մի օտար երկրացի, այն շփոթութիւնը, որի մէջ ընկնութեր թագուհին տեսանելով դեսպանը և մանաւանդ թէ այն խորին ատելութիւնը, որ ցոյց էր տալիս նա դէպ ի դեսպանի թշնամիքը, այս բոլորը հարկադրութեին մտածել, թէ այն երևելի Բրիտանացին համարձակվել է դարձուցանել իւր հայեացքը այն կնոջ վերայ, որի ճակատը պսակված էր թագով, և թէ մինչև անգամ արքայական գահի բարձրութենից արհամարհված չէ դեսպանի սէրը։

Այս դրութեան մէջ էին գործերը, երբ Շալէ կոմսը երեկոյին մի անգամ հանդիպելով Մոնմորանսուն և խօսելով զանազան առարկաների մասին, դարձուց վերջապէս խօսքը պալատական գեղեցիկների վերայ։

»Երդվումեմ իմ պարծանքով», բացագանչեց երիտասարդ կոմսը, այս տեղ ոչ ոք չկայ այնպէս գեղեցիկ, ինչպէս դը Շեվրեօզ դքսուհին»։

Ես իմ կողմից, նախապատիւ եմ համարում մատաղահաս թագուհին, — ասաց Մոնմորանսին մի փոքր ժամանակ մտածելուց յետոյ։

»Աւստրիական Աննայի գեղեցկութիւնը, բոլորովին այլ տեսակ է քան թէ դը Շեվրեօզ դքսուհու գեղեցկութիւնը. նորա երկուքը ևս բաժին են ստացել բնութենից այնպիսի պատուականութիւն, որ բոլորովին հակառակաբանում ենոյա ստիճանին. Աննան նման է պարկեշտ մանուշակի, իսկ Վալենտինան հպարտ և փառաւոր վարդի»։

—Այդպիսի դիպուածում, նա աշնանային վարդ է, ասաց Մոնմորանսին։

»Ո՛ւ ծիծաղիր, Մոնմորանսի. առաջին անգամ երբ տեսայ ես այդ կինը, երբ նորա հայեացքը հանդիպեցան իմ հայեացքին, ես զգայի, որ նա մեծ աղդեցութիւն պիտի ունենայ իմ կեանքի վերայ»։

—Մինչ պերիպորում դեռ ևս հաւատում են նախազգացութեան. բայց ինչ. այն ուշադրութիւնը, որ փառաւոր դեսպանը ցոյց է տա-

լես դքսուհուն և այն յարևհաճութիւնը, որով դքսուհին ընդունում Նորան, հարկադրումն կարծել, որ քեզ չէ պատահելու պատերազմիլ Նորա հետ, սիրու դրօշակի տակ։

»Նայց խօսումեն, թէ Բուքինհեմը սառնասիրտ է դէպ ի գեղեցիկները, որ կանգնած էին գահի աստիճանների վերայ· տեսանում միայն Նորան, որ ունէր իսկական գահը, և թէ նա միայն կարողացել էր իւր վերայ դարձուցանել Նորա ուշադրութիւնը»։

—Կարելի է·

»Ուրեմն, ինչ պատճառով ասացիր դու ինձ, թէ դեսպանի սէրը դէպ ի դքսուհին, ոչինչ երկբայութեան տակ չէ, մինչ այժմ ինքդ խոստովանուսես, թէ նա պարապած է թագուհու սիրովը»։

—Այն պատճառով, որ միևը խաւան չէ միւսին։ Այս մարդու սիրտը պարունակում իւր մէջ անհատանելի դանձեր· սիրելի Հենրիկոս, դու ինքդ երբեմն կը փորձես այդ բանը։

»Ո՛չ· դու ղրպարտուսես····»

—Ուրեմն, փոխանակ որ ղուր տեղը ժամանակ կորուսանես իմ վերայ բարկանալով, սկսիր ներգործել···· ցած դիր դքսուհու ոտքումը քո սէրը, իրագործիր քո յոյսերը, մնիր պատերազմի մէջ և դուրս եկ յաղթանակով· այդ ամենալաւ հնարն է ապացուցանելու ինձ, թէ ուղիղ չէի ես։

Շալէ կոմսը ականջ դրեց խորհրդին, որ Նորա սիրտը վաղուց ահա հշնջումեր։ Նա ամենայն տեղ սկսեց հետևել դքսուհուն, աշխատումեր անդադար Նորա հետ լինել միասին և հաճոյակատար գտանվիլ ամենայն բանում։ Ծիրանի ու կապոյտ գոյները դքսուհու աչքումը նախապատիւ էին համարվում քան թէ ուրիշները, և Շալէ կոմսը այս գոյներով զարդարեց իւր ծառայքը, կառքը, նշանը· յաղթող մնալով նա, ցած էր դնում Նորա ոտքումը այն ամենայն պսակները, որ ստանում էր, և ամենայն օր գրում էր Նորան ամենաջերմեռանդ և սիրալորքոք նամակներ։

Վեղեցիկ դքսուհին բաւական ժամանակ սառն էր դէպ ի իւր երիտասարդ պաշտողն սիրու ապացոյցները և թվում էր, թէ երբէք ուշադիր չէր Նորա վերայ։ Այս բանը արդէն սկսել էր յուսահատեցնել կոմսը, մինչև որ մի անգամ յանկարծ և բոլորովին անակնկալ, ստացաւ Նա դքսուհուց մի պատասխան, որ լրացուց Նորա ուրախութիւնը և իրագործեց Նորա բոլոր յոյսերը։

Այն երեկոյին, որ նախընթաց էր այս օրին, թագուհին պար եկաւ Բուքինհեմի հետ մի շատ կենդանի և գեղեցիկ Սպանիական պար, և յանկարծ ղգաց իւր մէջ տկարութիւն։ Միւս առաւօտին, այն կանայքը, որ սովորաբար ներկայ էին լինում Նորա զգեստաւորվելուն և շատ լաւ

գիտէին նորա մատանիքը, նկատեցին, որ նոյանիկ միևը պակաս է, և թէ նա փայլուակր Անգլիական դեսպանի մատնուածը։

Ահա այն օրը դը Շեվրեօզ դքսուհին գրեց իւր պատասխանը Շալէ կոմսին։

Գ.

«Այս գիշերը խաւար է, ինչպէս դժոխք. չես իմանում թէ դեպ ի ո՞ր կողմը շրջես ձիդ»։

—Ուանի փայլողութիւնը երբեք ախորժելի չէ եղած ոչ սիրահարված և ոչ դաւաճան մարդերի. և դու, Շալէ, լինելով և սիրահարված և դաւաճան, չէ պիտոյ դանգատես գիշերային մթութեան վերայ։

«Դորա հակառակ, ես մտածում եմ, սիրելի Մոնմորանսի, որ ոչ այսպէս եմ և ոչ այնպէս։ Ես յօժարութեամբ կը տայի իմ կեանքը նոցա, որոնց անձը սիրում եմ. նոցա փրկութեան համար, պատրաստ էի ամենայն ղրկանք յանձն առնուլ առանց նայելու այն անգունդի վերայ, որ լինելու էր ոտքիս տակումը. բայց այդ ամենամանչիչ պատուասիրութիւնը, այդ խորհրդաւոր, սարսափելի ախտերը, որ հալածեն երկաթը, և թաք են կենում մութի ու մառախուղի մէջ, իմ համար չեն. ես ստեղծուած չեմ նոցա համար։ Մի հարստութիւն որ յարմար էր իմ կոչմանը, մօրս ներկայութիւնը, որ ընծայել էր ինձ իւր բոլոր կեանքը, և սէրը այն կնոջ, որին ես ուրախութեամբ կը տայի իմ հոգու բոլոր ղգայմունքը և մտածութիւնքը. սոքա են ահա այն բոլոր բաները, որոնց ցանկանում էս։ Մենք դաւառական բնակիչներ ենք, պատուասիրութենից հեռի. մեզ տուած է մի առաւել քնքուշ ղգայողութիւն, հոգու հաստատութիւն և մեր ցանկութեան մէջ .....

—Ո՛չ, սիրական կոմս. եթէ մեք լինէինք Վօրբոնեան գահլենեներում, ես ուրախութեամբ վէճ կը բանայի քո հետ բնաւորութենների գանազանութեան և հոգու թուլութեան ու հաստատութեան վերայ. բայց մի չար բաղդով մեք բոլորովին այլ դրութեան մէջ ենք։ Մեր ջորս կողմը խաւար գիշեր է, մեր առաջև կայ մի գժուար անցանելի նեղ ճանապարհ, և մեք շտապում ենք, թէ և կամայ կամայ, տեսանել այն մարդիկը, որ պատրաստում էին մի մեծ փոփոխութիւն տէրութեան մէջ, որ կարող էր մեր գլխի գինը լինել։ Եւ այսպէս լաւ չէ՞, որ դադար առնունք և աշխատինք հաշիւ ու համար տալ մեզ, թէ ուր ենք գնում և ինչ խորհրդով։

«Ես կարծում եմ, որ մեք երկուքս էս վաղուց գիտենք այդ բանը»։

—Այո՛, բայց ընդհանրապէս։ Եւ ես կարծում եմ, որ եթէ այս

առարկայի վերայ մի քանի հարցմունք առաջարկէի քեզ, դու շատ հեշտ պատասխանելու չէիր դոյա· զոր օրինակ, ուր ենք գնում մեք այժմ այսպիսի մուրճն դիշերուայ։

»Ընքայաղն Գաստօնի մօտ, ինչքան ես գիտեմ, այն պիտաւորութեամբ, որ խօսենք այն հնարների վերայ, թէ ինչ կերպով կարող ենք կործանել իւր տեղից Դիժոնի եպիսկոպոսը, որ անուանվում այժմ կարդինալ դը Րիշելիեօ»։

—Շատ բարի, բայց ինչու՞ համար։

«Նորա համար, որ թագաւորի եղբայր Գաստօնը, և թագուհի Աւստրիական Աննան ատում են նորան»։

—Այդ նորա՞ ինչ պատճառով ատում են։

«Գաստօնը նորա համար, որ կարդինալը հետայնում նորան թագաւորից»։

—Ապա թագուհին։

Շալէ կոմսը լռեց։

«Դու լուռ ես կենում», ասաց Մոնմորանսին, բարկ· ուրնին, ես կը պատասխանեմ քո փոխանակ· Րիշելիեան ատելի է Աննային այն պատճառով, որ նա վարվում էր շատ մեծարական կերպով Անգլիական հոյակապ դեսպանի հետ, որ, ինչպես խօսում են, առաւել բաղդաւոր է, քան թէ կարդինալը· բայց այս բաղդաւորութիւնը կարծես թէ բոլորովին անախորժ է Շալէ կոմսին, որի հետ, բաղդի շնորհիւով, խօսակից եմ այժմ, որ և ուրախանում դուքս Բուքինհեմի յառաջադիմութիւնների վերայ· պատճառ, այդ յառաջադիմութիւնը հետայնում նորան դը Շեվրեօզ դքսուհուց, որին·····

—Ով Աստուած կը սիրես, լուռ կաց,—բացագանչեց Շալէ կոմսը, որին բաղդը պարկեշտացրել էր,—այս մասին ոչ ոք բան չասես, մի՛ հաւատար մինչև անգամ և գիշերի լռութեանը։

»Չ՛կ սիրելի, նա չէ կարող լսել մեր խօսքը, և եթէ աստղերը փոխանակ ամպերի տակ ծածկվելու, նայէին մեր վերայ, հաւատի կը լինէին, որ երիտասարդ, գեղեցիկ, քաջ Շալէ կոմսը ոչինչ ժամանակ կարող չէր, թէև շատ պարկեշտ էր, թաքցնել իւր յառաջադիմութիւնը····բայց, դառնանք դէպ ի մեր խնդիրը· ինչ կը լինի, եթէ կորչի կարդինալը»։

—Բադաւորի հնարհները կը թափվին Գաստօնի վերայ· բայց ի տրանիոյ նա կը ստանայ Շարթրեան, Բլուայեան և Դիժոնեան գեղեցիկ դքսութիւնների կառավարութիւնը։

«Մենք ինչ կ՛ստանանք դորանից»·

Մենք····մեք····մեք ձրի կը խմենք Բուրգունեան գինին։

»Ւ՜ս այսպէս, այս բոլոր բաներէ փոխանակ, եթէ մեք կենդանի մնանք, մեր բաժինը լինելու է միայն մի կնոջ ժպիտ և մի փառաւոր ընթրիք· շատ շնորհակալ եմ»։

— Մ՚ունմորանսի· եթէ այդպէս ես մտածում դու, ուրեմն ինչ պատճառով միաւորվեցար մեր հետ···· դու լուռ ես մնում, բարի· ուրեմն, ես կը պատասխանեմ քո փոխանակ· այն պատճառով, որ քո հայրը և պապը ունեցել են կոնետաբլի կոչումը, իսկ դու առանց միտ դնելու քո փառաւոր քաջագործութիւններին, ղուր տեղը սպասում ես այդ կոչմանը։ Ա՚յսպիսի անիրաւութիւնը հարկադրում է քեզ միանալ Րիշելիեօ կարդինալի հակառակորդների հետ։

«Կարելի է···· բայց լոյսը, որ դու տեսանում ես այն տեղ, և ձիւերի խրխնջոցը, որ հասանում է մեզ, հարկադրում են ինձ մտածել, որ մեք հասանք վերջապէս արքայազնի դաղտնի պատսպարանին»։

Ն՚րիտասարդ մարդիկը արդարև հասան իւրեանց ճանապարհորդութեան նպատակին, և մի րոպէ յառաջ, լինելով գիշերի մթութեան մէջ, յանկարծ երևեցան փառաւոր դահլիճների մէջ, որ վառվում էին ճրագներից և զարդարած էին ոսկով ու ծաղիկներով։ Ա՚յս դահլիճների մինի մէջ դրած էր սեղան, որի չորս կողմումը նստոտած էին գաստոնի քնաթաթախ կողմնակիցքը· նոքա էին Հենրիկոս Հորրորդի որդիքը, երկոքին Վ՚անդոմքը, Սուասսոնները, Լօնգվիլները, դ՚Էլբրօֆ և դ՚Էպերնոն դուքսերը, Մարկիզ դը լա Վ՚ալետքը, դը կանդալ կոմսը և Գաստոնի այլ բարեկամքը որ, ինչպէս ինքը Գաստոնը, սիրող էին բերկրութեան և ղուարճութեան, որ այնպէս սեպհական է երիտասարդ հասակին, և որից նորա երկչոտ եղբայրը օտարանում էր։

Ա՚յս էր պատճառը, որ դահլիճը ցոյց էր տալիս մի ուրախ խնջոյքի ժողովարան, քան թէ դաւաճանների բոյն։

Ա՚յս ժողովի գլխաւոր խորհուրդը էր, համեղ ընթրիք վայելել և ուրախանալ· ինչ որ վերաբերվում է դաւաճանութեան առարկային, այն համարվում էր երկրորդական բան, և նորա մասին ինչպէս երևում է կարելի էր յետոյ էս մտածել։ Եւ այսպէս արքայազնի մօտ բոլոր հաւաքված բարեկամները սկսեցին ուրախութեամբ ընթրիք ուտել, և միայն վերջին կերակրից յետոյ Գաստոնը մի կարճ յառաջաբանութեամբ առաջադրեց հետևեալ կերպը։ Որովհետև կարդինալը այն միջոցին գրտանվում էր Լիմուրեան ամարանոցումն քաղաքից դուրս, որ մօտ էր Ֆօնտենէբլօին, այս պատճառով կարծում էր Գաստոնը թէ հարկաւոր էր գնալ այն տեղ, որս առնելու անունով, և ճանապարհի վերայ մտանել Մ՚ենիստրի տունը, որպէս թէ նախաճաշիկ խնդրելու համար։ Այն տեղ դժուար լինելու էր որսորդներին կռիւ սկսանել տան մարդկերի հետ։

ներս կը մտանէին արքայաղնի ճանապարհորդակից ձիաւորքը և այս ընդհանուր խառնակութեան մէջ կը սպանվէր կարդինալը։

«Ո՛արդասպանութիւն։» ասաց Մոնմորանսին, և ամբոխը կարմրութեամբ ներկեց նորա երեսը։

— Սպանել այդ մարդը, կամ սպանել մի վարազ, (վայրի խոզ) որ աւերումէր մեր անտառները, բոլորովին մի և նոյն է։ Ճշմարիտ, Րիշելիեօ կարդինալը աւելի լաւ չէր, քան թէ մի վարազ — պատասխանեց Գաստոնը, և այսպէս մեք գնումենք մի կարդինալ որսալու։ այդպէս չէ՞, պարոններ։ այս վճռած բան է։

«Ո՛վ կը հասուցանէ կարդինալին սահմանած հարուածը»։

Ընկերքին լռումեն։

— Այս ինչ բան է, ոչ ով չէ՛ պատասխանում։ — Գաստոնը յօնքերը հաւաքած, նայեց մին մին բոլոր բազմականների երեսին։

— Ոչ ով չէ՛ պատասխանում։ — կրկնեց նա, — շատ բարի։ ուրեմն ես ինքս կը կատարեմ այդ գործը։

«Ոչ, արքայաղն, ոչ»։ բացագանչեց Շալէն, «ես թոյլ չեմ տալու ձեղ մինչև այդ տեղ անարգել ձեր անձը, որ ձեր յատուկ ձեռքով գործ կատարէիք այն տեղ, ուր ձեզ պիտոյ է միայն հրամայել։ ես յանձն եմ առնում ղարկել Րիշելիեօին»։

— Այո՛ ձեղ իմ ձեռքը, կոմս Շալէ, ես երբէք չեմ մոռանալու այս րոպէն, — ասաց Թագաւորի եղբայրը։

«Վեցցէ Շալէ։» բացագանչեցին բոլոր բազմականները, և դինին փրփրեցաւ ըիւրեղեան բաժակների մէջ, որ խմումէին երիտասարդ քաջն կենացը [1]։

Լուսաբացին բոլորեքեան բաժանվեցան միմեանցից և ջոկ ջոկ ճանապարհ ընկան դէպ ի փարիզ, և դէպ ի Սէն — ժերման, ուր այն ժամանակին գտանվումէր պալատը։

Շալէն գնումէր մենակ, առանձին ճանապարհով ֆօնդենեբլոյեան անտառի եղերքով։ անտառի մօտ կար բաւական խոր փոս, որ լըցված էր ջրով սաստիկ անձրևից, որ արդէն մի քանի ժամ անդադար գալիս էր։ Երիտասարդ կոմսի բաւական շոյտ ընթացքից, նորա սրի կապը կտրվեցաւ, և դլորվելով փոսի մէջ ամբացաւ նորա զառիվայրումը, մի ծառի ճիւղի վերայ, մի քանի ոտնաչափ բարձր, ջրի մակերեւոյթից։ Այս սրակապը զարդարած թանդագին գոհարներով ընծայել էր կոմսին Վալենտինան։ Շալէ կոմսը մտածումէր, թէ ինչ կերպով

---

[1]) ,,կենաց խմել,,, այսինքն մի մարդու կեանք բարեմաղթելով դինի խմել, կամ նորա կեանքի համար խմել. այս ոճը կարծեմ թէ ընդհանուր լինի հայերի մէջ։

կարող է վերստին ստանալ իւր դէպ ի փոսը գլորված սրակապը, և յանկարծ տեսաւ իւր քամհակումը մի մարդ, որ թռաւ իջաւ փոսի մէջ, բռնեց կապը և շուտով դուրս էր գալիս ջրիցը։ Շալէն կարծելով, թէ դա մի խաբեբայ մարդ էր, կամեցաւ ընկնել նորա քամակից, բայց այն մարդը ինքը մնտեցաւ կոմսին և տուեց վեր առած թանդագին բանը։

— Շ՚նորհակալ եմ քեզանից, բարեկամ՛, — ասաց կոմսը։ — ինչպէս երևումէ, դու երկիւղ չունիս ոտքերդ թացացնելուց։

«Շ՚ալէ կոմսին մնտեցնելու համար, կարելի էր յանձն առնուլ այդ բանը»։

Կոմսը տեսանելով, որ ճանաչեցին նորան, դարձուց իւր քննող հայեացքը այս անծանօթ մարդու վերայ, որպէս զի իւր կողմից ինքը ևս հաւաստե, թէ այո՛ չէր ճանաչում այդ մարդը։

Այս մարդու բարձր հասակը, կարծումէր նա թէ մի տեղ տեսած է։ կարելի է տեսել էր նորան ստուերի պէս, որ լուսաբացի առաջին ճառագայթների երևելովը սահել էր կոմսի աչքից Շևլրեօզեան գազանանոցի ճանապարհներումը։ ։ ։ կոմսը չը մնալով այս մտածումների մէջ, տուեց նորան մի քանի դրամ և շարունակեց իւր ճանապարհը։

Այն - ժերմանեան լրիկ ամրոցը երևեցաւ անտառի քամակից, որ լուսաւորված էր մտանող արևի վերջին ճառագայթներով։ Ամրոցի մօտ եղած պարտէզների մէջ զբօսնումէին այն րոպէին ջոկ ջոկ կամ բազմութեամբ պալատի երևելի մարդիկը, սպասելով այն ժամին, երբ բացվելու էին արքայական բնակարանի դահլիճները, ուր պիտոյ է սկսան վեր պարահանդէս։

— Տեսանենք պարոնները, — բացագանչեց յանկարծ Բաստամպիները, այսպէս շարունակելով սկսած խօսակցութիւնը իւր շրջակայ երիտասարդների հետ։ — ով ձեղանից ղո՞հ կը բերէ իւր հարստութիւնը այն կնոջ համար, որին սիրումէր։

«Ես», բացագանչեցին մի և նոյն ժամանակ բոլոր երիտասարդքը։

— Ես դուք ղո՞հ կը բերէ՞ք նոյնպէս և ձեր կեանքը։

«Ես կեանքը», պատասխանեցին մի քանի ձայներ։

— Ես թագաւորի դէպ ի ձեզ բարի հնո՞րհը։

»Այո՛», պատասխանեց մի միայն Շալէ կոմսը։

Այս միջոցին ամրոցի ճակատը լուսաւորվեցաւ յանկարծ ամենափառաւոր կերպով։ Բացած պատուհաններից երևումէին ինչքան հազար պատրաստված դահլիճներում զանազան գոյներով բիւրեղեան ճրագարանները, որ պատած էին ծաղիկներով։ Բոլոր պարտէզի մէջ գտանվողքը շտապումէին դէպ ի ամրոցը։ Նոցանից երկուքը միայն, փոխանակ Թռչելու և դնալու դէպ ի ամրոցը, ինչպէս Թռչումէ Թիթեռնակը դէպ

ի ճրագը, ուղղեցին իւրեանց դնացքը դէպ ի պարտէզն այն բաժինը, ուր մատուռից ընկած ստուերը թանձրանում էր գիշերային խաւարից, և ուր միայն մի աղօտ կանթեղ վառվում էր ամենայն գիշեր, գոթական կերպով շինած մատուռի ճակատում:

Դը Շեվըեօզ դքսուհին և Շալէ կոմսը, (նոքա էին այն երկու մարդիկը) բազմեցան լուռ ու մունջ փշատապատ նստարանի վերայ: Դքսուհին, անձնատուր եղած մտայղ ու տրտում մտածութիւնների, որ պատառոտում էին նորա սիրտը, իսկ կոմսը կատարեալ համարելով իւր երջանկութիւնը, ըստ որում կարող էր յայտնել նորան որին սիրում էր, թէ իւր հրաբորբոք ցանկութիւնը շուտով կատարվելու էր, թէ նա ամենայն բան ըստ էր ըերում սիրուն· իւր ապահովութիւնը, իւր գալոց օրերը, թագաւորի բարեկամութիւնը, իւր շնորհակալութիւնը, իւր պարտականութիւնը: Այն ղմայլեցուցիչ րոպէն, երբ նա կարող էր ասել իւր սիրական կնոջը, թէ ահա ինչ բան կատարեցի քո համար, մոռնում էր արդէն· բայց նա դեռ ևս հեռացնում էր այդ րոպէն, որ առաւել լաւ, առաւել կատարելապէս կարողանայ վայելել նորա երջանկութիւնը:

Նայեց և յառաջ դքսուհին միջահատեց լռութիւնը և ասաց տխուր և ողբալի ձայնով, «Հենրիկոս, դու այս րոպէիս սուտ խօսեցիր»:

—Ե՞ս, դքսուհի:

»Այո, դու ասացիր, թէ պատրաստ ես ըերել քո սիրական կնոջը ամենայն բան աշխարհի երեսին, ես չեմ տեսանում այդ բանը»:

—Վալենտինա, այդ յանդիմանութիւնը անզգայ է:

»Ոչ, ոչ, այս յանդիմանութիւն չէ· դորա հակառակ լուռութիւն կ'առնես ինձ, չը կատարելով քո խոստումնըդ···· այն անդադար վիշտերը որ հասուցանում ինձ իմ թշնամին, այն հալածանքը, որ նա յառաջացնում իմ մէջ այն ցաւեցուցիչ մտածութիւնը, որ ես սխալվել եմ կարծելով սէր գտանել քո մէջ· այն ծանր և տխուր ստուգութիւնը, որ պատել է այժմ իմ հոգու վերայ· ահա սոքա ըոլորը հարկադրումն ինձ վճռել, կատարել այն դիտաւորութիւնը, որ վաղուց դոյացուցել է ահը իմ սրտի մէջ···· ես հրաժարվումեմ պալատից ու աշխարհից·····»:

Այս րոպէիս լսվեցաւ ամրոցի բաց պատուհաններին միջով ուրախ և ներդաշնակ երաժշտութեան ձայն:

—Լսիր, Վալենտինա, —ասաց Շալէն· «այս աշխարհը գանջում քեզ· նա ասում, թէ դեռ ևս խունկ ու կնդրուկ է պատրաստել քո համար, թէ ընդունելու էր քեզ իւր գրկի մէջ···· նորա ձայնը զուր չէ լսվում, ականջ դնենք նորան: Դը Շեվըեօզ դքսուհին, հանեց իւր

պղեստի տակից մի թուղթ. «ահա, Հենրիկոս, մի նամակ, գնա կանթեղի մօտ և ընթերցիր. այդ նամակը ուղարկված ինձ է կարմելիտեան վանքի մայրապետից»։

—Այս ինչ բան է, Վալենտինա,—հարց արեց Շալէն, յետ տալով նորան թուղթը, որ շուտով և հարևանցի կարդացել էր։

«Ահ վանքի մայրոց պատերի մէջ շուտով կը մոռանամ ես ամենայն հոգս և ամենայն զուր և խաբեբայ յոյսեր, որ թունաւորումէին մեր կեանքը»։

Շալէն հեռացաւ մի քանի քայլ և վերադառնալով Վալենտինայի մօտ, տուեց նորան մի փունջ վարդ, որ այն րոպէին քաղել էր։

«Մինչեան ժամ անցանելուց յետոյ, որքան այս վինջի մէջ վարդեր կան», ասաց նա, «քո վըճիռը կը հանվի քո թշնամուց, և դու կը երևիս պալատի մէջ առաւել մեծակարող, առաւել հզօր, քան թէ եղած էիր երբ և իցէ»։

—Արդեօք ճշմարիտ է ասածդ։

Երդվումեմ»։

Ես դու, Հենրիկոս, դո՛ւ...

Այս կամ պիտի մեռանիմ, կամ պիտի սիրես ինձ»։

Այս անգքից մի քանի րոպէ յետոյ, դը Շեվրեօզ դքսուհին արդէն խնջոյքի միջումն էր, այնպիսի պայծառ երեսով, որ նորա վերայ ուրախութիւնը շողշողումէր աւելի փառաւորապէս, քան թէ զարդերի անդամանդները. իսկ Շալէն գնումէր այն ճանապարհով, որ հանումէր դէպ ի Լիմուր, ուր պիտոյ է հաւաքվէին կարդինալի թշնամիքը։

Գ.

Ութշեւեօ կարդինալի տունը, որ անուանվումէր Լիմուր, փարիզ և Ֆօնտենեբլօ քաղաքների միջոցումը, երևելի էր իւր պարզ դեղեցկութեամբ։ Պարտէզը, որ շրջապատումէր նորան, զարդարած չէր խուզած ծառերով. այլ ճանապարհը, որ տանումէր դէպ ի տունը, զարդարած էր բարձրահասակ կաղնիներով, բայց չունէր կանաչ դաշտավայր։ Պալատականքը, որ գուշակումէին, թէ երիտասարդ եպիսկոպոսի կարողութիւնը պիտի ժամանակով ստանայ առաւել յառաջադիմութիւն, այնքան ստէպ շրջշրջումէին այս ճանապարհի վերայ, որ ոտնակոխ էին արել բոլոր դաշտավայրը։ Լուսաբացի առաջին ճառագայթները արձակվեցան այս ճանապարհի վերայ, լուսաւորելով արքայազն Գաստօնի խումբը, որի առաջից գնումէր ինքը արքայազնը, իւր աջ կողմումն ունելով Շալէ կոմսը։ Նոցա քովիկից փառահեղ հագուստով գնու-

մէին այն բոլոր երիտասարդ մարդիկը, որոնք դեռ ևս օրամուտին դադաթած էին իւրեանց աղքատութեան վերայ, մինչ այսօր բոլորի կուրծքերը զարդարած էին թանգագին քարերով. նոքա ամենեքեան հագնեալ էին որսորդական կերպով և ուրախ անհոգութեամբ շտապումէին սպանել կարդինալը նորա սեպհական տան մէջ:

Մանկլաւիկները դնումէին քամակից. նոցա հանգերձքը լինելով մի շատ կարճ կանաչագոյն վերարկու, և նոյն դունով բաճկոն, և կարմիր վարտիք, որ կապած էին ոսկեթել կապերով, ցուցանումէին, թէ այդ մանկլաւիկները պատկանումէին թագաւորի եղբօր պալատին:

Րիշելիեան միայնակ էր իւր ամարանոցի մէջ քաղաքից դուրս. դէպ ի այդ տեղ մօտենումէին վաթսուն հատ շատ լաւ ղրահաւորված մարդիկ, շատ հաստատ իւրեանց մտքումը դրած, որ այս տան տէրը միւս աշխարհ ուղարկեն:

Թէպէտ և այս դարանագործ մարդիկը շատ անհմուտ էին այսպիսի գործերի մէջ, այնու ամենայնիւ չէր կարելի մտածել, թէ կարդինալը կարող էր աղատվիլ այն փորձութենից, որ պատրաստել էին նորան այս գլուխ կտրողները:

Մի քանի րոպէից յետոյ այն ատելի Հոգևորի սրտումը սիրտ ցըցվեր Թրի բարակ ու նուրբ սրած ծայրը, և եթէ հարկաւոր լինէր, յիսուն ինն ևս նոյնպիսի սրեր պատրաստ էին օգնութիւն հասանելու առաջին սրին.... իրաքանչիւր օք ղգումէր, թէ հեռի չէ այս րոպէն, և սորա մօտենալը մի դաղտնի սարսուռ ներեց ամենեցուն սրտի վերայ.... արդէն հեռի չէր տունը.... մնումէր միայն անցանել ճանապարհը.... նոքա մօտենումեն նորա ծայրին և կանգնումեն պատշգամբի մօտ:

Հանկարծ նորա առաջին աստիճանի վերայ երևումէ Րիշելիեան, դարձուցանելով դէմքը դէպ ի գաստօնը, ասումէ նա. «Ձեր արքայական բարձրութիւնը բարեհաճել է այցելութիւն առնել իմ տանը. ես շատ երջանիկ կը համարէի իմ անձը, եթէ թոյլ տայիք ինձ ընդունել ձեր սէս հիւրը ամենայն պատշաճ պատուով. բայց որովհետև դուք կամիք այս տեղ հանդստանալ միայն, ուրեմն շատ քաղցր էր ինձ թողուլ իմ տունը ձեր կամքին ու հրամանին:

Կարդինալը ասելով այս խօսքերը, բայց պատասխանի չը սպասելով, խոնարհութեամբ գլուխ տուեց, յետոյ նստեց կառքը, որ պատրաստ կանգնած էր, և հեռացաւ ամենևին արագապէս:

Դաւադիրքը զարմացած նայումէին մինը միւսի վերայ, չը գիտելով թէ ինչ պիտոյ է առնել, բարկանալ արդեօք, թէ ծիծաղել.... բայց շուտով ծիծաղը ստացաւ աւելի տեղիք և նոքա ազատակելով ու ծիծաղելով տուն մնան, ուր նոցա կորիճութեան առաջև բացվեցաւ

մի պատերազմ վայրի հաւերի հետ։ Ա՛յս հաւերից հանեցին նոքա իւրեանց վըհժը, և շուտով այս խաղաղ տան սենեակները թնդացին աղաղակից ու երգից, որ այդ տունը գուցէ երբէք լսած չէր։

Նախաճաշիկը, թէև շատ շտապ պատրաստած, այնու ամենայնիւ շատ համեղ էր· այս բոլոր չար երիտասարդները, որոնց սիրտը ընդունակ չէր երկար ու բարակ չարութեան, և որոնք ուտումէին ծիծաղելով, ուրախութեամբ շրջապատեցին սեղանը։ Վերջին կերակրից յետոյ սկսվեցաւ գինարբուքիւնը, և առաջարկեցին բաժակներ դատարկել սորա և նորա կենացը։ Մինի կենաց խմելու ժամանակին, երկու միմեանց զարկված բաժակները կոտրվեցան և միջի գինիքը խառնվեցան։

»Հարսանիք կը լինի, հարսանիք կը լինի, ձայն տուեցին ամենեքեան···· ով է ամուսնանում ձեզանից, պարոններ։

Այս սովորական դիպուածը աչքի տակ ընկնելու չէր, եթէ գրեթէ նոյն րոպէին թագաւորական մանկլաւիկներից մինը, որ հասել էր փարիզից, չը մատուցանէր Գաստոնին մի ծրար, կնքած Լուդովիկոս ԺԳ-ի կնքով։

Ընքայազնը քանդեց կնիքը···· ծրարը պարունակումէր իւր մէջ մի երկար նամակ, որով թագաւորը նոր ի նորոյ խնդրումէր իւր եղբօրից և առաւել շատ աղաչանքով, քան թէ երբ և իցէ խնդրած էր, ամուսնանալ օրիորդ Մոնպանսիէի հետ, խոստանալով, եթէ Գաստոնը հաւան էր այդ բանին, մոռանալու է ինքը բոլոր անցածը և հաշտվելու կատարելապէս Նորին Բարձրութեան հետ։

Նամակի հետ դրած էր մի ահագին հարստութեան ցուցակ, որ առաջարկված հարսը որպէս բաժինք բերելու էր փեսային, և պատկերը հարմնացուի, օրիորդ Մոնպանսիէի որ մեծացած լինելով հարաւային Ֆրանսիայում, յայտնի չէր դեռ ևս պալատի մէջ։

»Ահա պարոններ»· բացագանչեց Գաստոնը, «ահա ձեզ մի այլ գործ կարդինալի կողմից, որ անտարակոյս թելադրել էր թագաւորին գրել այս նամակը։ Բայց մի և նոյն է, ես հաւատարիմ կը մնամ իմ բարեկամներին, թէև հասանելու լիներ ինձ աղքատութիւն և մահ։ Թող կարդինալը խլէ ինձանից իմ ստացուածքը, եղբօրս բարեկամութիւնը, այսու ամենայնիւ ես կը մնամ կամակից նոցա հետ, որոնց հալածումէ նա։ Ես պատկանումեմ Ֆրանսիական ազնուական տոհմին, ես պարտական եմ պաշտպանել նորա հին իրաւունքները, և որքան առաւել կարդինալը ընդդէմ դուրս գայ այն իրաւունքներին, ես այնքան ևս աւելի չերմութեամբ պիտի հակառակ լինիմ նոցա»։

—Ազգի արքայազնը, ապրի մեր ազնուական կորիճը։

Այս բացագանչութեանների մէջ Շալէն միայն մնաց անհանգիստ մի

գաղտնի երկիւղից, թէև սրտումը ուրախանումէր այն բանի վերայ, որ իւրեանց մտքի մէջ դրած գործը ստացաւ այսպիսի ընթացք։ Մարդասպանութիւնը, այն ժամանակին մի մեծ, երևելի բանի կարգումն չէր։ բայց Շալէի բնաւորութեան թուլութիւնը դրդումէր նորան յետ քարշվիլ այնպիսի բաներից, ուր նորա կամքը պիտոյ է երևէր ինքնապէս գործակատար։

Չունելով կամքի հաստատութիւն և վճռականութիւն, որ անշուշտ պէտք են այր մարդերի, դոցա փոխանակ ունէր նա մի բարի, սիրող, և մեծահոգի սիրտ։ Անառակ պալատը, ուր նա գտանվումէր, չը կարողացաւ գին դնել այդ արժանաւորութիւններին։ այդ արժանաւորութիւնքը չճանաչեցին, ոչ երիտասարդ կոմսի բարեկամքը, և ոչ, գուցէ թէ այն կինը, որի համար պատրաստ էր կոմսը ամենայն ինչ զոհ բերել։ Մի և մի հատ արարած միայն բոլոր աշխարհի վերայ սիրումէր նորան այնպիսի սիրով, որին արժանի էր նա.... այդ, նորա մայրն էր, մի աղնիւ կին որ դեռ ևս պահպանումէր իւր հոգու մէջ ջերմ հաւատ դէպ ի Աստուած, և մեծարութիւն դէպ ի Շուշանեանց գահը[1]։

—

Ի՛ր Շեվրեօզ դքսուհին մենակ էր, և հանգստացած փոքրիկ և յաճ նստարանի վերայ, երևումէր տխուր, և արտասուքի հետքերը երևումէին նորա գունաթափ թշերի վերայ։ Շալէ կոմսը, որին ճանաչումէին ամրոցի սպասաւորքը, խաղաղութեամբ ներս մտաւ դքսուհու առանձնարանը։

»Ա՛հ լար, Վալենտինա», ասաց նա։ «մի՛ լար, դեռ ևս կարող է ամենայն ինչ ուղղվիլ։ և Րիշելիեօն չաղատվեցաւ մեր ձեռքից այնպէս, որ ամենևին ապահով լինի մեզանից»։

—Ա՛հ,—բացագանչեց դքսուհին բռնելով Շալէի ձեռքը և սեղմերով նորան իւր կուրծքի վերայ,—մի՛ կարծիր իմ մէջ այնքան անձնասիրութիւն։ Թէ Աստուած կը սիրես, այդպիսի կասկած մի՛ տանիր իմ վերայ.... իմ լաւս չէ իմ վերայ այլ քո վերայ, ով իմ սիրական... ինչ որ այսօր պալատումը խօսվեցաւ, էր միայն կարդինալի և մի անյայտ դաւաճանութեան մասին.... քո անունը ստէպ ստէպ կրկնվումէր.... ես լսեցի այդ բոլոր բանները.... և չը գիտելով ոչինչ, վշտանումէի և տանջվումէի զարհուրելի անհանգստութեան մէջ։ Ո՛հ, ի՛նչպէս հարկաւոր էր ինձ տեսանել քեզ, Հենրիկոս։

Շալէն առանց մի բան թաքցնելու, պատմեց Վալենտինային, ինչ որ պատահել էր կարդինալի տանը....

---

[1]) Շուշանեան գահ ասվելով իմացվումէ Խուրբոնեան տունը, որի նշանը էր Շուշան։

»Ա՛յ անբաղդ, դու այժմ ինչ ես մտածում առնել։

—Ես խոստացել եմ աղատել քեզ Րիշելիեւ կարդինալից։

»Այդ դու ինչպէս կարողացար այդպէս անզգուշաբար քո կեանքը վտանգի տակ ձգել»

—Իմ պատիժը կը լինէր միայն մի ժամանակաւոր աքսոր։

»Ա՛հ. ո՛չ. այդ քո կարծիքը ղուր է. ամենայն մարդ խօսում է այն վտանգի վերայ, որ պիտոյ է շուտով հասանի քեզ.... ճշմարիտ է, իմանալով մեր հաղորդակցութիւնը միմեանց հետ, գուցէ թէ գիտութեամբ մեծացնում էին իմ առաջև այն անբաղդութիւնը, որ պիտոյ է գայ քո գլխին. բայց մի և նոյն է. քեզ արժան էր արդէն ճանապարհ դուրս դալ դէպ ի Հոլլանդիա....»

—Այ՛ թէ պէտք էր մտածել քեզ, ով Վալենտինա, մտածել քեզ մի այնպիսի վտանգի երկիւղից, որ գուցէ թէ իրագործված էր միայն երևակայութեան մէջ....

»Հաստատումն, թէ մարդասէրը մահու պատիժ կը տայ իւր սիրական կարդինալի սպանողներին»։

—Ռուդովիկոսը խիստ մարդ չէ՛։

»Նա դեռ ևս ժամանակ չէ ունեցել այդպէս լինելու. նա այնքան երիտասարդ է, բայց սպասենք.... ով գիտէ, թէ ինչ կը լինի ապագայում....

Տխուր գուշակութիւնն ծածկեց դքսուհու երեսը. սիրտը խռոված այն վտանգից, որ պիտի հասանէր երիտասարդ սիրողին, նա ուղղեց նորա վերայ իւր արտասուալից հայեացքը և լուռ լուռ շօշափումէր կոմսի թուխ և թաւ մազերի գանգուրները....

Մի քանի ժամից յետոյ, Շալէ կոմսը գնաց Շեվրեօզեան հովտի միջով, որի խոր տեղումը կառուցած էր դքսուհու ամրոցը, փակված ծառերի թանձր ստուերով։ Աշունը մեծեներումէր իւր վախճանին. Շալէն հեռանալով իւր սիրական կնոջ բնակարանից, քաղումէր ճանապարհի վերայ պատահած վերջին ծաղիկները, ինչպէս մի րոպէ յառաջ քաղեց վերջին ուրախութեան վարդերը, որ սահմանված էին նորան իւր կեանքի մէջ։

Ե.

«Ո՛նչ սառն է, ինչ կոշտ է այս երկիրը.... Ա՛հ, թէ Աստուած կը սիրես, ըմբռ այս տեղ մի փոքր յարդ.... Մի ամիս յառաջ ով կարող էր հաւատալ, թէ մի խուրձ յարդ լինելու էր ինձ այսքան ցանկալի ու փափագելի»։

Լանտապետը մոտեցաւ Շալէ կոմսին և ձգեց մի փոքր յարդ։ «Ի՛նչ ծանր են այս շղթայքը, նոքա կտրուէն իմ ձեռքերը, ճնշուէն իմ մարմինը.... գեղեցիկ ապարանաջանք, հիանալի՛ օղամանեակք նորա Հաւիար, որի ձեռքերի վերայ մի ժամանակ փայլուէին Ֆրանսիայի ամենապատուական զոհարները, և որի կուրծքը ծածկած էր ոսկի օղերով, որ կրուէին իւրեանց վերայ սուրբ Միքայէլի և սուրբ Հոգւոյն ասպետութեան նշանները.»

Լանտապետը վեր առաւ ուռնելին և մի փոքր լայնացուց ձեռքի կապերը, այնպէս, որ յետոյ չէին կտրուէ Հենրիկոսի ձեռքերը։ Նոյն րոպէին, երբ լանտապետը խոնարհեցուց իւր գլուխը դէպ ի երիտասարդ կոմսի ձեռքերը, աշխատելով լայնացնել նորա կապանքի օղերը, մի նուաղ լոյս անցանելով նեղ, վանդակաշէն պատուհանի միջով, ընկաւ այս մարդու երեսի վերայ։

«Ինձ թվումէ, թէ ես ճանաչումեմ քեզ, «ինչ է քո անունը»։

—Լամոն։

«Երդեօք պատահած չե՞մ ես քեզ ուր և իցէ»։

—Վէպ ի Ֆօնտենեբլօ ճանապարհի վերայ մի քանի քայլ հեռի Լիմուրից։

«Ուր դու բարձրացրեցիր իմ սրակապը»։

—Այո՛, կոմս, ես առ ժամանակ մի թողեցի նանտէսը այն պատճառով, որ այն տեղից դէպ ի Վենսեննան բանտը փոխադրեմ պարոն Օրնան կալանաւորը [1]) և վերադառնալով այս տեղ պատահեցի ձեզ։

«Ապա դու ինչ կերպով կարողացար ճանաչել ինձ»։

—Ես տեսայ Ձեր պայծառութիւնը.... հրապարակական տօնեբուէ.... Երախտապարտ լինելով դէպ ի ձեր առատաձեռնութիւնը, ձեզ այս տեղ բերելուց յետոյ, խնդրեցի ես, որ թոյլ տան ինձ լինել ձեր բանտապետը, և իմ խնդիրը անտես չեղաւ։

«Ախ՛ղէ Լամոն, քո պաշտօնը մի նախանձելի գործ չէ. ես ցաւումեմ քո վերայ»։

—Շատուց է արդէն, որ ես բնակվումեմ բանտի պարիսպների մէջ. շատուց ծանօթ եմ ես այն մարդերի հետ, որ օրէնքի խստութեամբ քարոզված են որպէս զրկված իւրեանց պատուից, արժանաւորութենից և հարստութենից, բայց երբէք չեմ պատահած այնպիսի մի արդելականի, որ աղդէր իմ մէջ այնքան յարգութիւն դէպ ի իւր անձը, և որի ցաւին այնքան միաշունչ մասնակից լինէին բոլոր նորա բարեկամքը։

---

[1]) Սա էր գանձոնի գաւառակը, որ բանտարկվել էր կարդինալ Բիշելիեօի հրամանով։

«Ուրեմն դեռ ևս ինձ չեն մոռացել»։

—Հաւ լինի. ամենեքեան մտածումն միայն քո վերայ, ամենայն մանրամասնութեամբ հարց ու փորձ են առնում այն բաների վերայ, որ պատկանում էին ձեր բանտարգելութեանը. դադարումն փողոցի մէջ, որ մի լուր իմանան ձեր գործի մասին. չեն հասկանում, թէ ինչ կերպով այն բարձր աստիճանից կարողացաք դուք ընկնել բանտի մէջ.... բայց դուք, կոմս, ի հարկէ անյոյս չէք։

«Յոհուլթիւն Աստուծոյ, ա՛չ, նախ և յառաջ Գաստոնը բարձի թողլ չէ առնելու ինձ. նա ալնիւ է և չէ մոռանալու իւր բարեկամը»։

Նաց ի գորանից այն կինը, որ ձեզ սիրումէ մեծ զօրութիւն ունի։

«Այ՛ո, նա ամենայն ինչ կարող է ծանուցանել Թագուհուն, իսկ սա իւր կողմից Թագաւորին, երբ որ կարդինալը չէր գտանվում երկու աչուսինների մէջ տեղումը»։

—Ձեր պայծառութիւն, ունիք դեռ ևս այսպիսի հզօր բարեկամներ։

«Լսիատ շատ, բայց ես հաւատացած եմ, որ նոքա խաւումեն, պար են գալիս և որս են գնում, նկատելով, որ իւրեանց միջից պակաս էր մի որսորդ.... Եւ յայս ունիմ միայն իմ մօր վերայ.... Ո՛հ, մայր իմ, մայր իմ.... միայն թէ կարողանայի շօշափել իք մի, որ քեզ էր պատկանում. այնուհետև իմ չարչարանքը այնքան խիստ լինելու չէին»։

Նանտապետը հանեց իւր ծոցից մի թուղթ։

—Կոմս, ահա ձեր մօր նամակը։

«Այ՛, նամակ.» և նա սեղմեց իւր կուրծքին նամակի հետ միասին և այն ձեռքը, որ տալիս էր նամակը։

Նամակը կրակ վառեց և լուսաւորեց կանթեղը, որ կախած էր պատից, յետոյ դնելով գլխարկի վերայ մի թերթ թուղթ, սկսեց միբանգրել։

Այս միջոցին արգելականը սաստիկ փափագով կարդումէր մի այսպիսի նամակ։

Հալէ կոմսուհին իւր որդուն [1]).

Վանտէս, Հոկտեմբերի 17 Թուականին։

«Իմ որդի, երդմնեցնումեմ քեզ քո մօր և Աստուծոյ անունով, որ նայումէ մեր վերայ. ղրահաւորվիր հաստատուն հոգով անբաղդութեան մէջ, որ հասել է քեզ։ Դու կը փրկվիս, Հենրիկոս, և կը փրկվիս շուտով. ամենայն ինչ, որ միայն կարելի է, քո համար գործ կը

[1]) Բնագիրը նամակի օրինակը։

դրվի· խնդիրք, աղաչանք, ոսկի, հրապոյրք, ամենայն ինչ, ամենայն... անհնարին է, որ այդպիսի ընչին դատապարտութիւն չը քակտվի ինքն ըստ ինքեան, և մի այնպիսի անմեղութիւն, ինչպէս քոն է, չը խոստովանվի։

Վա՛յ հաւատալ, այդ իմ մի հատ խորհուրդն է, իմ որդի, որ կապումէ իմ սիրտը այս կեանքի հետ.... Նոյն իսկ պատահարի երեկոյից մինչև Սեպտեմբերը, ես այնքան չարչարվեցայ, որ իմ լեզուն երբէք կարողանալու չէ նկարագրել այդ բոլորը· ես չէի հաւատալու, թէ կարելի է տանել այսքան տանջանքի։ Քո տառապանքի նկարագիրը անդադար իմ աչքի առաջև է· ինձ թվումէ, որպէս թէ մի դև կրծումէր իմ սիրտը· ինձ ատելի է այն լինութիւնը, որի մէջ ապրումեմ ես· այն անօթքը, այն զարդարանքը, այն կրակը, այն լոյսը, որից զրկված ես դու· այս բոլորը խոցոտումէ իմ աչքը· ես ապրումեմ միմիայն հացով ու ջրով, քնումեմ քարի վերայ, և կրումեմ մաղևղէն հանդերձ... Ների՛ր ինձ, իմ որդի, որ ասումեմ քեզ այս բոլորը· բայց ինձ թվումէ թէ քո չարչարանքը թեթևանալու էին այն հաւատով, թէ կայ աշխարհի վերայ մի սիրտ, որ զգումէ քո բոլոր վիշտը և մասնակից է քո բոլոր վատաբաղդութեանը....

Ո՛հ, գուցէ դու մտածումես, թէ քո պալատական բարեկամքը մոռացել են քեզ· կարելի է բանտի վանդակաշէն պատուհանի միջով թռչուամ հասանումէր քեզ նոցա ուրախութեննների ձայնը.... Ա՛հ, եթէ այդ բոլորը ստոյգ է, դու կարող ես գոնէ ասել ինքդ քեզ, թէ այն բարեկամը, որ հաւատարիմ էր, քան թէ քո միւս այլ բարեկամները, և որ սիրումէր քեզ, ապրումէ այժմ ինչպէս դու, առանձնութեան, զրկանքի և չարչարանքի մէջ, և թէ երբ յուսահատութեան արտասուքը գլորվումէր քո թշերի վերայով, միւս այլ այդպիսի արտասուք փայլումէր այդ բարեկամի աչքերումը։

Նախախնամութեան կամքն էր, այսպէս խիստ պատժել քո մայրը, այն պարծանքի համար, որ նա պարծենումէր քեզանով, և այն ուրախութենների համար, որոնց պատճառը դու էիր.... Բայց չէ պիտոյ մել գժգոհ լինել Աստուծուց։ Այս նամակը, որ նա տուեց ինձ կարողութիւն դրելու, է արդէն անտարակոյս թեթևութիւն մեր չարբանքներին... Աստուած թող արժանացնէ ինձ տեսանելու քո աղատութիւնը։»

Ո՛րչափ Շալէ կոմսը կարդումէր իւր մօր նամակը, որ թրջած էր արտասուքով, բանտապետը դրումէր հետևեալը։

Նորին Սրբազնութեան կարդինալ դը Բիշելիեօ սպասաւոր Լամնի յայտարարութիւնը Հոկտեմբերի 29ից։

«Արքային կարդինալի ուղարկած հրամանին հանձայն, ես մի փո-
«քըր թևեւացրեցի արդելականի դրուելիւնը, որ այս ճանապարհով
«կարողանայի որսալ նորա հաւատը դէպ ի ինձ. ես տուեցի նորան մր
«նամակը, որ յառաջուց յանձնած էր Նորին Սրբազնութեան հաւա-
«նութեանը: Ես այսօր կարդվելով նորա մօտ իբրև բանտապետ, ահա
«թէ ինչ կարող եմ յաւելացնել իմ յառաջուց տուած ծանօթութեն-
«ների վերայ:»

«Այս նոյն իսկ արդելականի բերանից կարողացայ քաղել ամենայն
«ինչ: Նա կցորդ է գտանված դաւաճանութեանը, նախ և յառաջ լի-
«նելով արքայազն Գաստոնի և երկու վանդոմների բարեկամ. երկրորդ,
«սաստիկ սիրելով դքսուհի դը Շեվրեօզը, որ յայտնի թշնամի է Նո-
«րին Սրբազնութեան, պարոն մինիստրին»:

«Իւր այժմեան դրութեան մէջ նա իւր յոյսը դրել է Նորին արքայա-
կան Բարձրութեան վերայ, դքսուհու բարեխօսութեան վերայ թագաւո-
րի մօտ, և առաւելապէս իւր մօր սիրու և հաստատ բնաւորութեան վերայ»:

«Արդելականը, ինչպէս երևում է, բնաւ չէ զղջում իւր գործի վե-
«րայ, և միտք չունի փոխել իւր սիրտը և դիտաւորութիւնքը դէպ ի
«Նորին Սրբազնութիւնը, եթէ ազատութիւն ստանար: Խոստովանու-
«թիւնը, որ նա կատարեց, հերիք է, նորա մահու դատավճիռը հաս-
«տատ ու անփոփոխելի պահելու համար:»

—

Դը Շեվրեօզ դքսուհին սկսել էր հաղնվել: Նորա վերայի զգես-
տը էր սպիտակ ատլասից. հանդերձի երկայն մէջքը ցուցանուելով կրողի
զուգակշիռ իրանը: Նորա մանեակը բաղկանուելի մի շարք խոշոր մար-
գարիտներից, մարգարտեայ կապերով հիւսած էին նորա պայծառ շագա-
նակագոյն մազերը, որ սանտրած դէպ ի յետ, ոլորած առանձին առան-
ձին գանգուրներով, կազմուելին նորա գլխի վերայ մի տեսակ թագ, որի
մէջ փայլուելին խոշոր մարգարիտներ:

Ամենամարդ անգլեացի աղախինը, որ էր դուքս Բուքինհեմի սպա-
սաւորներից մինի դուստրը, որին առել էր իւր մօտ դքսուհի դը Շեվ-
րեօզը իւր սպասաւորութեան համար, նայուելով նորա վերայ զարմանա-
լով և ցաւելով:

— Օ՛հ, beautiful. ինչ գեղեցկութիւն և ինչ վայելչութիւն. ինչ-
պէս կարող էք դուք, ով դքսուհի, միշտ այդպէս գեղեցիկ լինել այն
վշտերի մէջ, որ կորստուելին ձեր սիրտը:

Ինչ պիտոյ է առնել. արտասուքը հետք չէ թողում հնոջ երեսի
վերայ. և մեր իսկական արհեստը այն է միայն, որ ամենաղարհուրելի
հոգեկան վշտերի մէջ կարողանայինք երևել միշտ գեղեցիկ, միշտ նա-

ղևլի։ Ա՛յն օրից, որ Արքայական տունը դատնվումէ Նանտէսի մէջ, այն օրից, որ մեք լինակումենք այս քաղաքի մէջ, ուր չարաբաղդ Շալէն մաշվումէ բանտումը, ես միշտ հրաժարվեցայ մանակից լինել ուրախութիւններին, որ իմ աչքին սրբապղծութիւն էին երևումէ այս տարաբաղդութեան մէջ։ Բայց Թագուհին համարեա թէ միայն մնալով կարդինալականների կանանց մէջ, կարօտումէ ինձ, և ես չեմ կարող Թողուլ նորան միայն։ . . .

— Ո՛հա ձեր հովարարը դքսուհի, ձեր վերարկուն։

Դքսուհին վեր կալաւ այս բանները ուշադրութեան մէջ, օրպէս թէ ինքը իւրեան ասելով։

— Ա՛յո՛, պէտք է դեղեցիկ լինել, ծիծաղելու նիւթ չը լինելու համար։ . . . Ո՛հ։ ծանր, արհամարհելի պարտականութիւն։

Very good! . . . Դուք, դքսուհի, այս հանդերձի մէջ երևումէք աոաւել մատաղահաս։

— Կարելի է։ Ինչ ժամանակ ես քսան տարեկան էի, ամենայն կերպ հանդերձը լաւ էր գալիս ինձ, իսկ այժմ ես պիտի քննելով ընտրեմ իմ համար հանդերձ և զարդ։ . . .

Բայց դուք, դքսուհի, և այժմ ևս սիրելի էք, ինչպէս յառաջ։ իսկ մեր երջանիկ Անգլիայումը, սէրն է դեղեցկութեան չափը։

— Ա՛յո՛, այո՛, ես հաւատում եմ, ինձ դեռ ևս շատ սիրումեն, բայց այդ, ձերը չէր։

«Ներեցէք, դքսուհի, նայեցէք, թէ ինչքան կենդանութիւն կայ ձեր աչքերումը, որոնք դեռ այս րոպէիս այնքան շատ արտասուեցին։ . . .

— Ա՛յո՛, իմ աչքերը չոր են, բայց նա, որ ինձ սիրելով մանանկից էր եղած այն չիմար դաւաճանութեանը, մաշվումէ այժմ կապանքի մէջ։ . . . այլև եթէ այդ սէրը լինէր այնպէս, ինչպէս նա կարծումէ։ . . . բայց ո՛չ, ես երբէք չեմ սիրած նորան այնպիսի սիրով, որին արժանի էր նա։ իմ սէրը նորա հետ զրկված էր այն երկնային կայծից, որ փոխարկումէ նորան դէպ ի մի հրեղէն հոսանք։ . . . երբ որ ես հրաժարվեցայ Բուքենհեմից, որ իւր վերայ էր դարձուցել Թագուհու աչքերը, երբ որ ունեցայ այն սարսափելի անձնուրացութիւնը բայց Թողուլ այն մարդը, որին սիրումէի։ ես հարկադրվեցայ այս զրհի վերայ յաւելացնել մի նոր զրհ, և սկսանել մի նոր հաղորդակցութիւն, որ Աւստրիական Աննայն հանդիսատ մնար բոլորովին և իւր յաղթութեանն մէջ։ ես կատարեցի այս։ . . . բայց զրհը պատահեց սարսափելի։ . . .

«Ա՛յո՛, այդ վեր էր, քան թէ ձեր ոյժը, և այն օրից դուք բոլորովին փոփոխվեցաք։ Համարձակութիւն էր արդեօք ասել ձեզ, դքսուհի։

հի, թէ բարեպաշտութիւնը, որով դուք յառաջ նշանաւոր էիք, հեռացել է ձեզանից . . .

Ո՛չ· ես խլեցի ինձանից այն բաղդաւորութիւնը, որ Աստուծուց էր ուղարկած· ես կապված էի մի այնպիսի մարդու հետ, որի նմանը չը կայ աշխարհումս, և ինքս իմ ձեռքով կտրեցի այն կապերը, որ միաւորումէին ինձ նորա հետ, թող տալով նորան ուրիշ կնոջ· ես ինքս ե՛ղայ այն դժոխային ղօրութիւնը, որ կտրատումէ սիրտը և թունաւորումէ ամբողջ կեանքը·

«Ա՛յս դուք մինչև այժմ ևս սիրումէք մեր փառաւոր Լօրդը·

— Ա՛յո՛, ես սիրումեմ նորան . . . . լինումեն րոպէներ, որ ես պատրաստ էի ընկնել նորա ոտքերը· Սիրելի լինել Բուքենհեմին, սիրելի այն մարդուն, որի ճակատումը փայլումեն երեք թագաւորութիւննեերի մեծութիւնք· այդպիսի բաղդ, որին արժանի չէ ոչ մի հասարակ կին . . . . Ա՛հ, ես էի այն կինը, որին բաղդը սահմանել էր այս երջանկութիւնը, և այդ մարդը ասումէր ինձ ,,թէ սիրումէ ինձ . . . . Նա, Բուքենհեմը սիրումէր ինձ . . . . Ո՛հ, Աստուած·

«Ա՛յ դուք կարողացաք այդպէս շուտով հրաժարվել նորանից·

— Ա՛յո՛· պատճառ, ես լաւ համարեցի հեռթարկել այն նախանձաւորութեան տանջանքներին իմ անձը, քան թէ թագուհին . . . . Ես սիրելի էի Բուքենհեմին, բայց դորանից յառաջ սիրելի ու բարեկամ էի Աւստրիական Աննային· Ես կամենումեմ մեռանել, կրելով այդ անունը· այս կամքը ղօրաւոր է իմ մէջ, և աւելի ղօրաւոր, քան թէ սէրը· Բարձր աստիճան և իշխանութիւն անպատճառ հարկաւոր են ինձ· ես չեմ կարող ապրել առանց նոցա, և նոքա կապելով ինձ աշխարհի հետ, շինումեն իմ սէրը ստրուկ·

Մի ղարհուրելի դիպուածով ժառանգեցի ես մի և նոյն ժամանակին հարստութիւնը և կոչումը դ՝Անքր Մարշալի կնոջ, այն կնոջ, որ այրվեցաւ Գրեվևան հրապարակի մէջ նորա համար, որ արժանացել իւր թագուհու «սիրականի» անունին· Ա՜յն թանգագին բաները, այն ոսկի շղթայքը, այն ապարանջանքը, որ բոլորը պատկանումէին Գալիգէյ կօնչենուն, կրումէր նա, և կարելի է թէ սիրումէր նորանց· Ա՜յն վենետիկեան գնդասեղը, որի մէջ ասումեն, թէ Թոյն էր պահում, այն մատանին, որի համար ասումեն, թէ կախարդը ընծայել է նորան գիշերով եկեղեցու բակումը, այն բոլոր բաները դիպել են այդ կնոջը, որ գուցէ թէ կապակից լինելով նզոված էակների հետ, այլև մանակից լինելով սրբապիղծ արուեստների գաղտնիքին, ուսել էր շըշթայել միշտ իւր հետ Մարիա Մեդիչիսի սիրտը· Եւ այս բոլոր գանձերը այժմ պատկանումեն ինձ· նոքա իւրեանց մէջ պահել են այն Թոյնը

որով նա ապականել էր այդ գանձերը· նոքա այդ թոյնը խառնումեն իմ արիւնի մէջ, այրումեն, լափումեն նորան· և այս երկու զարհուրելի ախտերը, սէրը և պատուասիրութիւնը սպանումեն ինձանում բոլոր միւս զգացողութիւնքը··· Ո՛հ, Աստուած իմ, Աստուած· ինչո՞ւ թոյլ տուեցիր այդ գևերին տիրել ողորմելի կնոջ սրտին···։

— Դքսուհի, ուր ժամը զարկումէ, ձեզ ժամանակ է։

«Այո ժամանակ է· մեք պար ենք գալիս այս երեկոյ· մեք, կարելի է ասել, պիտոյ է կաքաւենք Շալէի պատժվելու օրին· պատճառ, արիւնը հետք չէ թողում այլ մարդերի ձեռքերի վերայ, ինչպէս արտասուքը կին մարդերի վերայ···· ինձ ժամանակ է։

Դքսուհին, այս խօսքերը ասած, ընկաւ աթոռի վերայ գունաթափ և վաստակած չարչարանքներից։

Այս րոպէին ներս բերեցին մի սպասաւոր, պալատական հանդերձով, որ յանձնեց դքսուհուն մի ծրար թագաւորական կնքով և հեռացաւ։

Լուդովիկոսը գրումէր դքսուհի դը Շեվրէօզին, թէ Շալէն կարող է գտանել ողորմութիւն և մի պայմանով, որ դքսուհին կատարելու էր· նորին մեծութիւնը ինքը կամենումէր յայտնել դքսուհուն այդ պայմանը միւս օրի առաւօտու ինն ժամուն, երբ որ կը տեսանէր նորան։

Ալենտինան կարդալով այս նամակը ծնկի վերայ, շատ արտասուք թափեց։

— Աստուած իմ, գո՛հ եմ քեզանից· Շալէն կը փրկվի։

Ը·

ԹԱԳԱՒՈՐԻ ԱՌԱՆՁՆԱՐԱՆԸ։

1626 Փետրուարի Հոկտեմբերի 28 ի առաւօտուն Նանտէսեան բանտի շինութեան վերայ նստել էր թանձր և խաւար մառախուղ։

Մի քանի անցաւորք միայն երևումէին այս հանդարտ թէ անբնակ տեղումը, և այս մարդերի մէջ որպէս ստուեր երևումէր մի բարձրահասակ կերպարանք, երկայն վերարկուով և սև գիմակով երեսի վերայ· այս ստուերատեսակ կերպարանքը նկատելի անհանգստութեամբ մնում էր դալիս հին բանտի պատշգամի չորս կողմով։

Որ Շեվրէօզ դքսուհին, սկսեալ այն օրից, երբ պալատի հետ միասին եկել էր Նանտէս, ուր Շալէ կոմսը արդէն աւելի քան թէ մի ամիս մնշվումէր բանտի մէջ, չէր ունեցել այնքան վստահութիւն, որ մօտենար այս սարսափելի բնակարանին։ Միանգամ միայն, Փետրուար կառքի մէջ անցանելով Բոփէեան հրապարակի վերայից, տեսաւ նա

հեռուից նեղ փողոցի ծայրումը այս զարհուրելի շինուածը, և նորա սիրտը այնպէս սեղմվեցաւ նորա կրծքումը, որ փոքր մնաց, որ կորուսաներ իւր զգայութիւնքը... Բայց այժմ ամենայն ինչ փոխված էր. այժմ նա հաստատ գիտէր, որ Շալէն պիտի փրկվի. պատճառ, իւր հոգու մէջ ուխտ էր դրել — կատարել այն պայմանը, որ պահանջելու էին նորանից, թէև շատ ծանր և դժուար լինէր այն:

Այս երդումը տուած, սպասումէր նա հին ժամին, որ սահմանած միջոցն էր թագաւորը տեսանելու, և շտապեց նայել այն պատերի վերայ, որ մի փոքր յառաջ բերել էին նորա վերայ այնպիսի զարհուրանք: Զգելով իւր փառաւոր հանդերձների վերայ մի մոխրագոյն վերարկու և դնելով երեսին մի սեւ դիմակ, թողեց նա իւր ուղեկիցքը հրապարակի վերայ և մնտեցաւ այն օթևանին, ուր արգելված էր անբաղդ երիտասարդը:

Ընտարակոյս, շատ փոքր յուսալի էր կարողանալ մնտենալ բանտարկածին, և ծանուցանել նորան, թէ նա ազատվելու է. բայց նա կարող էր գոնէ մերձենալ այն պատերին, որոնց ներսումը մնշվումէր կոմսը. կարող էր շնչել այն օդը, որ շնչումէր կոմսը. ուր բաց ի սոքանից երբեմն պատահումն դիպուածներ, որ չէ կարելի յառաջուց դուշակել.... Գուցէ կը յայտնի նորան մի բան իմանալ անբաղդի մասին:

Երդէն կէս ժամ անցաւ, մինչ դքսուհին շրջշրջումէ այս մռայլոտ պատերի մօտ, չը կարողանալով հեռանալ նոցանից. յառաջ տանելով իւր հետաքննութիւնը, հասաւ նա վերջապէս մի նեղ փողոցի, բանտի դռների մինի մօտ, որի հանդէպ կար պանդոկ: Մի բարձրահասակ, նուազ գունաթափ մարդ դուրս եկաւ այն տեղից:

Դա բանտապետներից մինն էր, և յատկապէս նա, որ պահումէր կոմս Շալէին: Երևումէր, թէ նա պանդոկումը թողել էր իւր բարեկամքը, որոնք աղաչումէին նորան այդպէս շուտով չը հրաժարվիլ իւրեանցից. այսպէս կարելի էր եղրափակել այն բանից, որ նա կանգնելով դեռ ևս կիսափակ դրան շեմքի վերայ, ասաց:

— Ո՛չ. ոչ. պիտոյ է ինձ վերադառնալ դէպ ի իմ պաշտօնը:

Դը Շեվրեօզ դքսուհին, լսելով այս խօսքերը, յանկարծ հոգի ստացաւ և յարձակվեցաւ դէպ ի այն դուռը, որի միջով պիտի ներս մտանէր բանտապետը:

— Կացէք. ձայն տուեց նա, բան ունիմ խօսելու ձեր հետ. թէ Աստուած կը սիրէք, լսեցէք ինձ....

Ի՞նչ հարկաւոր է քեզ, իմ նաղելի, ես պատրաստ եմ լսելու քեզ, տիկին...:

Բանտապետի խօսակցութեան ձևը այսպէս յանկարծ փոփոխվեցաւ

այն պատճառով, որ բանտապետը դքսուհու շարժողութեան միջոցին նկատեց հասարակ վերարկուի տակ մի փառաւոր զգեստաւորութիւն, որ կարող էր պատկանել երևելի տիկնոջ միայն։

Այս միջոցին դքսուհին ստանալով բանտապետի կամքը· լսել նորա ասելիքը, չը գիտէր, թէ ինչ խօսէ· դքսուհին տեսանելով բանտապետը, ժամանակ չը գտաւ մտածելու առաջին րոպէումը, թէ ինչ օգուտ կարող է յառաջանալ այս դիպուածից և դադարեցրեց նորան, չը գիտելով ամենևին, թէ ինչ՛ւ համար·

Բանտապետը, ասելով, բայց պատասխան չը ստանալով, կամենումէր հեռանալ։ Դքսուհին հանեց իւր մատից բոլիլանտի մատանին և տուեց բանտապետին, որ մնայ մի փոքր ևս, և ասաց·

— Դուք գնումէք կոմս Շալէի մօտ։

«Այո, տիրուհի· ինչ բանով կարող էի օգտակար լինել ձեզ։

— Նոյն կամիմ··· Ա՛հ··· Թոյլ տուեցնէք ինձ··· ձեր ներկայութեամբ տեսանել նորան մի րոպէ··· պահանջեցէք դորա փոխարէն ինչ վարձ և կամիք։

«Այդ անկարելի է։

— Ուրեմն հասուցէք նորան գոնէ մի նամակ····

«Իմ պահպանութեան յանձնված բանտարկեալը չէ կարող նամակ ընդունել։

— Ուրեմն ասացէք նորան····

«Նոյն ոչինչ չեմ կարող ասել նորան։

— Ա՛հ, Աստուած իմ, Աստուած իմ։

Նոյն յուսահատութեան մէջ դքսուհին չը գիտէր, թէ ինչ առնէ և ինչ որոշէ··· Յանկարծ մի գեղեցիկ խորհուրդ վեր փայլեցաւ նորա մտքումն, նա վեր կալաւ մի ծաղկափունջ երեք վարդից կապած, որ դրած էր նորա գոգումն և ասաց բանտապետին, տալով նորան իւր բոլոր ոսկին, որքան ունէր իւր մօտ։

— Տո՛նէ դուք մի՛ հրաժարվիք տալ Շալէին այս ծաղիկները, սոցա մէջ մի վտանգաւոր բան չը կայ····

Դքսուհին կարծումէր, որ Շալէն, ստանալով այս ծաղկափունջը կը հասկանայ, թէ ով էր նորա ուղարկողը, և կ՝ընդունէ որպէս մի բարի գուշակութիւն։

Բանտապետը, տեսանելով այսպիսի գեղեցիկ տիկին, որ յանձնումէր նորան այդ ծաղկափունջը, ղրկաց, որ անարժան էր ձեռքով մնտնալ նորան· նա պատառեց իւր ծոցի մէջ գտանված տետրակից մի թերթ թուղթ, պատատեց նորա մէջ ծաղկի ծղօտները և խոստացաւ հասուցանել նորանց բանտարկած կոմսին։

— Ա՛նծահոգի եղիք, ասաց դքսուհին այն բանտապետ մարդուն, և թողեցէք ինձ մի քանի բառ կապարեայ գրչով գրել այդ թղթի վերայ։

Ձայնը, որով ասվեցան այս խօսքերը, հնչեց մի այնպիսի քաղցր զմայլեցուցիչ կերպով, որ բանտապետը չը կարողացաւ ընդդիմանալ։ Նա տուեց դքսուհուն գրիչ և թանաքաման։ Վալենտինան, սիրտը լըցված ուրախութեամբ, և յիշելով այն խօսքերը, որ Շալէն ասել էր Նորան Լիմուրեան անցքից յառաջ, գրեց շտապով։ «Երբ կ'անցանեն այնքան ժամեր, որքան վարդեր կայնի այս ծաղկափնջի մէջ, դու կը ազատվիս քո թշնամու ձեռքից։

Ա՛յս գործը կատարած, դքսուհին հրաժարվեցաւ բանտապետից և շտապեց դէպի իւր պատգարակը։ Երանելի յուսով, թէ Շալէն շուտով կը ստանայ Նորա ծաղիկները և կը մխիթարվի, ճանաչելով այն ձեռքը, որ գրել էր այս նամակը։

—

Լուդովիկոս ԺԳ-ը ընակուէր այն միջոցին Նանտէսեան ապարանքումը, որ շինել էին Բրիտանեան դուքսերը։ Այնարձակ սենեակները այն բաժնի, որի մէջ նա ընակուէր, չունելով արքայական պճնազարդութիւն, նշանաւոր էին իւրեանց մնայլ կերպարանքով և լուսնեակով, որ թագաւորուէր այն տեղ։

Ներսէսենեկումը, ուր արդէն անցանուէր մառախլապատ և ցուրտ առաւօտու նուաղ լոյսը, կայնի երկու մեծ պատուհաններ, զանազան գունաւոր ապակիներով։ Այս պատուհանների միջոցում եղած պատի մօտ գրած էր մի մեծ ընկուզեայ պահարան, որի մօտ նստել էր մի սպասաւոր և ձեռքերը խաչած կրծքի վերայ, սաստիկ յօրանջումէր։ Նորա հանդէպ մի ընկուզի փայտի պատուանդանի վերայ կանգնած էր մի կերպարանք, որ այս և այն կողմը շրջումէր դլուխը և թարթուռ էր աչքերը։ որպէս թէ ծաղը առնելով սպասաւորին, յօրանջումէր և ինքը....

Հետևեալ սենեակը, թագաւորի առանձնարանը նոյնպէս տխուր էր և մռայլոտ, ինչպէս նախասենեակը։ Պատերի վերայ կախած էին ղէնքեր, քարտեղներ, շատ պատկերներ։ Խաչելութիւն, Նուագարան, որսորդական եղջիւր և վերջապէս արեղայական վերարկու, որ թագաւորը սիրումէր երբեմն ձգել իւր վերայ։ Մեծ հնոցումը կրակը վառվումէր։ բայց նա բացարձակումէր միայն մի թոյլ լոյս և չէր ջերմացնում սենեակները, որոնց մէջ միշումէր գերեզմանական սառնութիւն։

Լուդովիկոսի ըոլորովին սև հանդերձքը տալիս էին Նորան սուգի և տխրութեան կերպարանք։ Թագաւորը շատ թոյլ առողջութենով և

կալմուածքով, գունաթափած էր և մոատանջ։ Նա նստել էր ցած թողած իւր ցանցառ մազերով ծածկած գլուխը թոյլ և անզօր ձեռքերի վերայ, և անշարժ նայումէր մի բանի վերայ, որ կար նորա առաջև։

Մեծ սեղանի վերայ, ուր ընկած էին աղօթարաններ, օրհնարաններ, մեռելի գանգ, դրած էր նոյնպէս մի փոքրիկ արկղ փիլի ոսկրից, ոսկի շէնքով, զարդարած շատ գեղեցիկ և խնկաւորած զանազան անուշահոտ ջրերով, սա ոչինչ յարմարութիւն չունէր շրջակայ առարկաների հետ։

Այս արկղիկը լցած մոմեր տումնակներով, մի քանիքը ևս ընկած էին սեղանի վերայ, գոնել էին Շալէ կոմսի մօտ, նորա բռնվելու րոպէին և Րիշելիեօի հրամանով մատուցած էին թագաւորին. ահա այս արկղի վերայ էին բևեռած Լուդովիկոսի աչքերը այնպէս անշարժ կերպով։

Նորա ձեռքը խառնելով տումնակները, բարկութեամբ սեղմումէր նորանց։ Այս տումնակները գրած էր դը Շեվրեօզ դքսուհին դէպ ի Շալէ կոմսը, այս երկուքի երջանիկ սիրու կարճատև միջոցումը։

— Լաւ, ասաց թագաւորը, նայելով չորս կողմը, — այս նամակները ասումեն ճշմարիտը.... Ահա այն նուագարանը, որի համար ինձ բամբասումեն և որով ես փարատումեմ իմ տխրութիւնը, որ կրծոտումէր իմ սիրտը... Ահա այն աբեղայական վերարկուն, որ ես հագնումեմ երբեմն...

— Լաւ, դքսուհի, այս ևս ճշմարիտ է. դուք չը գիտէք, որ ես պատատված այս վերարկուի մէջ ամբողջ գիշերներ անցուցել եմ ծնկի վերայ, Աստուծոյ սեղանի առաջև, և թէ այդ րոպէներում միայն եղել եմ կատարեալապէս երջանիկ... երբ ես սաղմոս էի երգում, ինձ թըվումէր, թէ միշտ կրումէի այս վերարկուն։ Այն ժամանակ ես մոռանումէի քոլորը. մի կատարեալ հանդարտութիւն թագաւորումէր իմ շրջակայքումը. ես այն ժամանակ թշնամիք չունէի, չունէի եղբայր, որ սպասումէր իմ մահին, որ տիրէր իմ գահին և իմ կնոջը. չը կար այն մինիստրը, որ խոնարհեցներ ինձ իւր կարողութենով, չը կար այն ժողովուրդը, որ երեսիս էր զարկում իւր կատականքը և ծաղրը... ես մոռանումէի, և այս է այն յանցանքը, որի համար դատապարտումեն ինձ... Աստուած, Աստուած, ինչու համար ցանկանումեն դուքա, որ ևս առաւել անբաղդ լինիմ ես, ինչու համար յանդիմանումեն ինձ այն կարճ րոպէների համար, որ ուրախութիւն էին բերում ինձ....

Նա սառն արտասուքը, որ Լուդովիկոսը ի զուր աշխատումէր զսպել, գլորվեցաւ նորա աչքերից։ Նա սարսափելով շտապեց սրբել նորան...

— Ո՛հ, ձայն արձակեց նա եթէ նորքա տեսանէին այս արտասուքը, այնուհետև դարձեալ կ՝անուանէին ինձ թոյլ... թոյլ... Մի՞թէ ես

Թոյլ էի պատերազմի դաշտումը, ուր Բասսոմպիեր ծերունին խօսելով իմ վերայ, ասաց «ես երբէք տեսած չեմ այսպիսի քաջ կորիճ։ Մ'թէ ես վախեցայ մահից։ ։ ։

Այլ ինձ բամբասումն, իմ վերայ ծիծաղումն այն պատճառով, որ ինձ ոչ ոք չէ սիրում։ ։ ։ Ո՛րքան թշնամիք, որքան մատնիչք, որոնց բարերարութիւն էի արած, շրջապատումն ինձ։ ։ ։ Ինչքան վիշտեր ամենայն կողմից թափումն նորա իմ վերայ, և ես ձեռքումս ունելով պատժելու հնարքներ, պիտոյ է բռնակալ համարվիմ, եթէ գործ դնէի դորանց։ ։ ։ Ո՛վ Աստուած, Աստուած։ չհամարձակվիլ ոչ սիրել, ոչ ատել։ ։ ։ այս մի զարհուրելի բան է։ ։ ։ այսպիսի կեանքը մահից վատթար է։ ։ ։ Ինն ժամն զարկեց։ պատուհանի տակ լսվեցաւ մի կառքի դղրդիւն։ եկաւորը դը Շեվրեօզ դքսուհին էր։ Թագաւորը ուղղվեցաւ աշխատելով, որքան կարելի է առաւել հաստատութիւն տալ իւրեան։ ի վերայ այդր ամենայնի մի երկչոտութիւն եկաւ նորա վերայ այս կինը տեսանելու ժամանակ։ այս կինը, որին կարող էր նա ընդունել որպէս Թագաւոր և որպէս դատաւոր։

Այլ դքսուհին, կոխելով արքայական շեմքը, ինքը ևս լցված էր ահով ու երկիւղով։ նորա հոգու սովորական հաստատութիւնը մնա էր ահա հրաժարվիլ նորանից։ առաւօտեան այցելութենից յետոյ, որ արել էր բանի շրջակայքումը, վերադառնալով դէպ ի տուն, տխրած էր, նկատելով այն դունաթափութիւնը և ուշաթափութիւնը որ երևումէին նորա երեսի վերայ, նա հաղիւ թէ գուաւ այնքան միջոց, որ մինչև Թագաւորին տեսանելու սահմանած ժամանակը, կարողանար ուղղել իւր սարք ու կարգը։

Այս կամենումէր գեղեցիկ երևիլ Թագաւորին այն խորհրդով, որ իւր գեղեցկութիւնը կարողանայ միջնորդ լինել Լուդովիկոսի բարկութիւնը շիջուցանելու և մեղմելու համար, բայց դքսուհին շատ տհաճ էր այն բանի վերայ, որ իւր սրտի խառնակութիւնը և իւր մարմնի վատաճակութիւնը զրկումէին նորա գեղեցկութիւնը իւր սովորական փայլողութենից։

Վոքա էին նորա պատճառը, որ նա ահ ու դողով մնտեցաւ Լուդովիկոս ԺԴ-ին, մի այնպիսի մարդու, որ ինքն Աստուած միւս մարդերից աւելի վերագաս էր արել։ Դքսուհին ծունր կրկնեց։ Թագաւորը սառն նայելով նորա վերայ, նշանացի արեց, որ նստի յատկապէս նորա համար պատրաստած աթոռի վերայ։

—Դքսուհի, ասաց Թագաւորը, յառաջ քան թէ կարող էի իմ յանկութիւնը ձեզ յայտնել, հարկաւոր եմ համարում ես ձիշդ սահմանել մեր յարակցութիւնը միմեանց հետ։ երբ դուք դեռ ևս շատ

մատաղահաս էիք, ես ձեզ կին չը ընտրեցի կենետալը դը Շիւնին, որին ճանաչեց Փրանսիան ինձանից յետոյ իւրեան տէր։ Ձեզ չը թո ղեցի ես նորա մահից յետոյ նորա բոլոր պատիւ ու անունը, բոլոր հարստութիւնքը, որոնց վերայ ունէիք դուք միայն այն իրաւունքները, որ ինձ հաճոյ եղաւ մի առանձին շնորհով պարգևել ձեզ։ Ցետոյ դարձեալ չամուսնացուցի ես ձեզ դուքս Շեվրեօզի հետ, Փրանսիայի պերի և դուքս Գիլի եղբօր հետ։

»Ընենևին այդպէս, թագաւոր»։

—Այս բոլորը մի՛թէ բաւական ապացոյց չէր, որ ես առաւել սիրումէի ձեզ, քան թէ նորա, որ թաւիւմէին ձեր առաջև կեղծաւոր խօսքեր և դովասանութիւն, ոչինչ բան չը գործելով ձեր համար։ Արդեօք այս միևը ապացոյց չէր իմ դէպի ձեզ քնքուշ ձգտողութեանը, որ ոչինչ փոխարէն չէր պահանջում ձեզանից և պահումէր այն պարկեշտութիւնը, որ թոյլ էր տալիս նորան թաւիել ձեր վերայ ամենայն տեսակ բարութիւնք առանց արատաւորելու ձեր պատիւը։

Ո՛չ թագաւոր··· այդ բոլորը ճշմարիտ է, ես ղգումեմ ձեր բոլոր շնորհները···

—Ընչա, թէ ես ինչպէս եմ եղած դէպ ի ձեզ և դուք ինչպէս փոխարինած էք ինձ։

Թագաւորը տուեց նորան արկղի մէջ գտանված նամակներից միևը։

—Կարդացէք, դքսուհի, այնպէս, որ ես ևս լսեի· ես պարզ սրտով ասացի ձեզ, թէ ինչպէս էին իմ սրտի բերմունքը դէպ ի ձեզ, այժմ ձեր կարդն է նոյն օրինակին հետևել։

Դքսուհին հարկաւորված էր ձայնով կարդալ այն վշտացուցիչ խօսքերը և դարձուածները, որ գրել էր ինքը այն մարդու համար, որ այժմ նստած էր նորա առաջև և լսութեամբ ականջ էր դնում նորան։ Իւրաքանչիւր արտաբերած բառ այնպիսի չարչարանքի դին էին, որ ասես թէ կարմրացրած երկաթով մի կտոր կեղեքումէին նորա սրտից։ Սառն քրտինքը, դուրս երևելով նորա ճակատի վերայ, խառնվումէր արտասուքի հետ, որ թաւիւմէր աչքերից, և երբ որ այս տանջանքը աւարտեցաւ, դքսուհին չարչարված, թուլացած ընկաւ թագաւորի ոտքերը, մի խուլ հեծեծանք արձակելով։

—Ընչո՛, ասաց դքսուհին· այս բոլորը չափից ու սահմանից դուրս ղարհուրելի է··· Բայց Շալէն յանցաւոր չէ այս անարժան նամակների մէջ· նա երբէք չէ արտաբերել և մի վշտացուցիչ բառ Ձեր մեծութեան վերայ։ Նա յանցաւոր չէ, թագաւոր, և նորա համար եկել եմ ես աղաչել ձեզ··· Դուք այնքան ողորմած էք···։

«Ողորմած· լայց դուք, հաւաքված ձեր խելքների հետ, վճռել

էիք Թէ Ֆրանսիական Թագաւորը անգութ է։

— Ո՛հ Թագաւոր, ներեցէք, խնայեցէք...

«Խնայել· Մի՛Թէ դուք խնայել էք ինձ...

Բայց դուք տեսանելով ինձ գունաթափ, չարչարված, չէիք դադարում Հալածել ինձ ձեր դառն կատականքներով։ Ես վաղուց ահա Հրաժարված եմ իմ կոչմանը արժանաւոր փայլուն և փառաւոր Հանդերձներից և կրումեմ նոցա փոխանակ մշանջենաւոր Թխազգեստութիւն։ Ահա կնճիռները, որ ծածկել են իմ երեսը, այս տկարութիւնքը, այս բոլորը ցոյց են տալիս ձեզ մի մարդ, որ վաղուց ահա և տարաժամ դատապատված էր դէպ ի դերեզման, բայց դոքա չը կապեցին ձեր ձեռքը Հալածելուց ինձ կատականքներով, զըպարտութեամբ, ձեր չարութեան անվերջանալի Թունովը։

— Թագաւոր, խնայեցէք, ես մեռանումեմ ձեր ոտքումը...

Դքսուհին արդարև այնպէս գունաթափած էր, որ Թագաւորը վեր բարձրացրեց նորան և նստեցրեց աթոռի վերայ։

«Ահա՛ժամ մնումէ ինձ աղաչել Ձեր մեծութիւնը Աստուծոյ անունով միայն» ասաց դքսուհին քաջալերված ձայնով...։

— Իդպէս ևս արժան էր ձեզ· պատճառ, ես պիտոյ է ներդործեմ ոչ իբրև Թագաւոր, այլ որպէս քրիստոնեայ, և ոչ մարդերի Համար, այլ Աստուծոյ։ Ձեր Հաղորդակցութիւնը կամն Շալէի Հետ, յայտնի է ամբողջ պալատին։ Ցօժարեցէք Հարսնանալ նորան և Հեռանալ նորա Հետ միասին Ֆրանսիայից· այս պայմանով կը ներեմ ես նորա անՀաւատարմութեանը և ձեր ապերախտութեանը...։

Դքսուհին լսելով այս խօսքերը, չը կարողացաւ վճռել, Թէ Հնար էր կատարել Թագաւորի պահանջողութիւնը· նա չը կարողացաւ ոչինչ պատասխան տալ· Թվումէր, Թէ խելքը Թռել է գլխիցը և որպէս Թէ սիրտը քարացել է նորա կուրծքի մէջ։

Ընդհակառակն Լուդովիկոսը ասաց նորան, Թէ Շալէի գործը կարող է վերջանալ միայն մահու պատժով, և եթէ դքսուհին Հաւան էր այն կարճ միջոցին, որ տևելու էր մինչև դատավճռի կատարվելը, ստորագրել ամուսնութեան պայմանագրութիւնը գլխապարտված Շալէի Հետ, այնուհետև գտանելու է նա Թագաւորի շնորհը։

Այս բոլոր բաների վերայ Թագաւորը յաւելացրեց· Թէ դքսուհին մտածելու Համար ունի միայն երկու օր ժամանակ, բայց դքսուհին այնպէս Թուլացած լինելով, որ կարող չէր պատասխանել, Հրամայեց Թագաւորը, որ առաջնորդեն նորան մինչև նորա կառքը։

Ը.

ՇԱՐԹԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ։

Այդ օրը կոմս Շալէի բանտումը ամենայն ինչ պայծառացած էր ուրախութենով. առաւօտից սկսած նայումէր նա երեք վարդերի վերայ, որ բերեցին իւրեանց հետ բադդ և յոյս։ Արևը ցրուելով ամպերը, ներս մտաւ վերջապէս բանտի նեղ պատուհանից և լուսաւորեց ոսկեդէն ճառագայթով այն ծաղկափունջը, որ Շալէ կոմսը անցուցել էր պատի վերայ ամրացրած երկաթի օղի մէջ։ Բանտապետը ձանձրանալով վերջապէս միայնակ գինարբուքենից, քնել էր իւր փայտեայ աթոռի վերայ, գլուխը ցած թողած կուրծքի վերայ և դեռ ևս լսնած ձեռքումը դատարկ բաժակը։ Ոչ ոք խափանելու չէր արգելականի մտածութեններին. կոմսը նստելով յարդեայ մահճի մէջ ձեռքերը խաչած սրտի վերայ, նայումէր անշարժ վալենտինայի ծաղկափնջին և ուրախական ժպիտը խաղումէր նորա շրթունքի վերայ։

Յանկարծ թնդանօթի ձայնը, որ լսվումէր մօտից, դղրդումէ բանտի պատերը։ Շալէն ակամայ զարհուրումէ.... փաղցր մտածութիւնքը, որ փոքր ինչ յառաջ միխիթարումէին նորան, թռչումեն, գնումեն. նա դարձեալ լսումէ իւր շղթաների ձայնը, դարձեալ զգումէ բանտի լոլորը արհաւիրքը։

Բանտապետը, շարժվելով աթոռի վերայ, զարթնումէ, աչքերը տրորելով.... կրկին լսվումէ թնդանօթի ձայնը։

— Ի՞նչ է այս ռմբաձգութեան խորհուրդը, հարցանումէ Շալէն։

«Ոչինչ» պատասխանումէ բանտապետը. այս ռմբարձակութիւնքը հրատարակումեն արքայազն Վաստոնի հարսանիքը։

Վաստոնը ամուսնանումէ, ձայն արձակեց արգելականը — Աստուած. նա հաշտվեցաւ Բիշելիեօի հետ և թողեց իւր բարեկամքը...

Ու Շալէն յուսահատութեան մէջ ընկաւ յարդի վերայ։ Լսմները դուրս եկաւ այն միջոցին, որ տեսանէ այս հանդիսի պատրաստութիւնքը։ Երիտասարդ կոմսը մնաց միայն, իւր տխրութեան հետ. Արքայազնի անհաւատարմութիւնը մնհաբեր հարուած էր Շալէի սրտին.... Այս մտածութիւնը յուսակտուր առնելով Շալէ կոմսը, կատաղեցնումէր նորան....

Ամբողջ վեց ժամ մնաց նա անշարժ, զարհուրելի անզգայութեան մէջ, և այս վեց ժամը շատ տարիների չարչարանք արժէին. նոքա տպաւորեցին նորա ճակատումը խորշոմներ.... Աչքերը ներս ընկան, մազերը սպիտակեցան և նա յանկարծ քսան տարով ծերացաւ։

Լաւինը զարմացած այսպիսի արագ փոխակերպութեան վերայ, աշխատեց տալ իւր արգելականին, որքան կարելի էր քաջալերութիւն և ասաց։

— Ես տեղ, մօտիկ մի սանդուղք կայ, որ ամայի թողած է վաղուց· այդ սանդուղքի վերայով կարելի է ելանել դէպ ի բանտի բուրգի վերին պատշգամը, առանց պահապանների իմանալուն.... կամիք, որ ես տանեմ ձեզ այն տեղ։

Դուք կը տեսանէք բազմութիւնը, որ պալատից երթալու է Բենեդիկտոսի եկեղեցին, ուր պիտոյ է կատարվի Նորին Բարձրութեան պսակի խորհուրդը գեղեցիկ Մօնպանսիէ օրիորդի հետ։

Մի քանի րոպէից յետոյ Շալէ կոմսը և նորա ընկերը արդէն գտանվումեն բուրգի գլխումը նորա մի նեղ պատուհանի մօտ։ Կոմսը փոքր ինչ յառաջ այնքան գեղեցիկ, այնքան երիտասարդ լինելով, այժմ կանգնած էր այնտեղ դունաթափ և խորշոմներով ծածկած երեսով.... Նայումէր այն ճոխ բազմութեան վերայ, նայումէր պալատի վերայ, որին մի փոքր յառաջ պատկանումէր և ինքը, և որ այժմ անցանումէր այնպէս ուրախ, այնպէս անհոգ նորա գերեզմանի մօտից։

Յանկարծ բարձր աղաղակներ լսվեցան ամբոխից, որ ծածկել էր հրապարակը և փողոցը։ Ժողովուրդը տեսաւ Արքայաղն Գաստոնը, որ այսօր հասարակաց հարցասիրութեան նիւթ էր և ուրախ արարողութեան հանդիսացոյց։ Տեսանելով այս մարդը, որ մոլորեցուցել էր Շալէ կոմսին դէպ ի ապստամբութիւն, որ ձգել էր նորան բանտի մէջ, որ բոլոր ցաւերի դուռները հաւաքելով նորա գլխի վերայ, թողած էր նորան էշաֆօտի պատուանդանումը· մի սարսուռ տիրեց անթաղդ երիտասարդին· նորա աչքերը փակվեցան և բանտապետը տարաւ նորան համարեա թէ անղգայ, գարձեալ դէպ ի բանտ։

Շալէի ուշը վերայ գալով, փոքր առ փոքր հանդարտեց նա և սառն աչքով սկսեց սպասել մահին, որ արդէն դուշակումէր ինքը։

Այլ այսու ամենայնիւ նա միշտ դարձուցանումէր իւր աչքերը դէպ ի այն երեք վարդերը, որոնց թառամած թերթերը սկսել էին արդէն թափվիլ գետնի վերայ։

Գաստոնի անհաւատարմութիւնը տեսանելով, յոյս ունէր նա դեռ ևս իւր սիրականի օգնութեան վերայ, և հաւատի էր որ Վալենտինան բարձի թողլ առնելու չէ նորան։

Այն միջոցին, երբ նա այս բաների վերայ մտածելով կարծումէր իւր անձը արգելանքից ազատված, ահա եկան ասելու նորան, թէ ժողոված գատաստանը հրաւիրումէ կոմսին երևնել իւր առաջև։ Պատրաստված լինելով դէպ ի այս սարսափելի րոպէն և հոգի ստանալով իւր աղ-

Նուական արիւնից, որ վազումէր նորա երակների մէջ, Շալէն անխռով հոգով լսեց իւր դատավճիռը։

Այդ այս դատակնիքը սարսափելի էր, նա դատապարտումէր Շալէ կոմսը դէպ ի մահ, որ պիտոյ է կատարվէր Նանտէսի մէջ, Բոքէյեան հրապարակում։ անբաղդի գլուխը պիտոյ է նիղակի վերայ ցցած ամրանար Սօվետուրեան դռնումը, իսկ մարմինը, չորս կտոր արած դահճի ձեռքով, պիտոյ է կախվէր քաղաքի չորս երեսների փողոցներում։ Այլև նորա անունը պիտի խայտառակվէր անպատվութեամբ մինչև գալոյ երկար ու ձիգ ժամանակները, իսկ նորա ամրոցը փորվելու էր հիմքից և հաւասարվելու հողի հետ։

.... Լանը աւարտած էր։ Թառամած վարդերը թափվեցան, նորա թերթերը ընկած էին սառն գետնի վերայ, և խոր լռութիւնը թագաւորում դատապարտվածի բանտի չորս կողմում։

Երեկոյեան տասն ժամն էր։ պատիժը պիտի կատարվէր հետեւեալ օրին։ Շալէն անօգնական Թողած բոլոր աշխարհից, անշարժ դրած էր յարդի վերայ։ մի աղջամուղջ խաւար շրջապատել էր նորան և բանտի մէջ երեւումէր մի այնպիսի խոր լռութիւն, ինչպէս գերեզմանում։ Ցանկարծ դռնի ճեղքից փայլեց մի կարմրագոյն լոյս և լուսի հետ լսվեցաւ նիղակների դղրդիւն։ Շալէն կարծեց, Թէ ահա դահիճը մօտենում էն նորան, Թէ նորա պատժի րոպէն շուտացուցել էին այն խորհրդով, որ գիշերը միայն լինէր վկայ այս գործողութեանը։

Այս մտքի մէջ ևս առաւել հաստատեց նորան կարմիր հանդերձի երևելը, որ փայլեց նորա աչքին դուռի բացվելովը, շէմքի վերայ։ նա փակեց աչքերը, կցեց ձեռքերը և վերուղղեց իւր հոգին դէպ ի Աստուած.... յետոյ յաղթելով այս րոպէի պարհուրանքին, վեր կացաւ յարդի վերայից...։

Ահա դը Րիշելիեօ կարդինալը կանգնած էր նորա առաջև։

Ը.

ՎԵՐՋԸ։

Շալէ կոմսը շղթաներով լեռնաւորված, տանջանքներից Թուլացած, Հպարտ Հպարտ նստած էր կարդինալի հանդէպ և սորա վերայ ուղղելով իւր համարձակ, մի Հպարտ ատելութեամբ սպառնացող հայեացքը։

Րիշելիեօն գունաթափ, աչքերը ցած Թողած, կանգնել էր նորա առաջև, որպես Թէ չէր համարձակվում նայել նորա վերայ։ այնու ա-

մենայնիւ նորա երեսի կերպարանքի վերայ երեւումէր հաստատ վճռականութիւն և անղգայ սառնութիւն։

Շալէի շրթունքի վերայ փայլումէր դեռ ևս ժպիտը և նա ասայ կարդինալին, որ արած էր այս զարհուրելի այցելութիւնը։

— Դուք, ի հարկէ եկած էք նայել Շալէ կոմսի վերայ, այն պատճառով, որ ձեր ամենակործան կարողութեան չափ ու կշիռը ճանաչէիք։

«Սխալվումէք։ ես չէի պատրաստում և ոչ ևս կամէի ձեր կորուստը։ Նորա հանար, որ աշխատումէր իշխանութիւն ձեռք բերել մարդկերի վերայ, այնպիսուն սպանած մարդը կարող էր միայն արգելք լինել և ոչ թէ հնար իւր դիտաւորութիւնը գործով յառաջ տանելու։

— Ինչ պատճառով այժմ կամենումէք ձեր ոտքի տակ ձգել այդ արգելքը։

«Մի՛ ասացէք, թէ ես խնդրումէի ձեր կեանքը։ դորա հակառակ, ես եկած եմ առաջարկելու ձեզ այն հնարը, որ կարող էր փրկել ձեզ։

— Այդ մի փոքր յուշ է, պատասխանեց Շալէն, ժողովելով իւր հոգու բոլոր ղօրութիւնը ընդդէմ փորձութեան։

«Դուք, կոմս, տեղիք ունիք հաւատալու իմ խօսքերին։ պատճառ որ դորա բղխումէին ուղղակի իմ սրտից։ Եթէ ատելութեամբ վառված լինելով դուք, ինքներդ մտածել էիք սպանել ինձ Լիմուրի մէջ, ուրեմն դուք իմ թշնամին էք, և ես պարտական եմ յանձնել դատաստանին կատարել նորա կապած դատակնիքը։ իսկ թէ դորա հակառակ, դուք մտածումիք այդ բանի մէջ ուրիշների խորհրդով, որ մեծ ազդեցութիւն ունէին ձեր վերայ, այնուհետև տուեցէք ինձ այդ մարդերի անունները և ես աւելի պատճառ չունենալով երկիւղ կրել ձեզանից ապագայումը, կը խնդրեմ թագաւորից, որ ողորմի ձեզ։

— Դուք կամենումիք ինձ մատնիչ և ըզպարտիչ շինել, և վստահացել էք գալ այս տեղ այդպիսի առաջարկութիւնք առնելու ինձ, որովհետև լսած էիք, որպես թէ Շալէ կոմսը թոյլ բնաւորութեան տէր է, երկչոտ և թեթևամիտ մարդ է։ Այդ բոլորը այդպես է, կարդինալ, բայց դեռ ամենը չէին ասել ձեզ։ ձեզ չէին ասել, որ այդ Շալէի սիրտը միշտ արնիւ էր և թէ նա, ոչինչ ժամանակ կարող չէ անհաւատարիմ գտանվիլ դէպ ի իւր բարեկամները։

«Ես կամէի միայն լսել ձեր օրինաւոր խոստովանութիւնը, որ կարողանայի որ և իցէ կերպով փրկել ձեզ։ ես ոչինչ չունիմ ձեզ ասելու ձեր դաւակիցների մասին։ . . . Դուք վատ էք ճանաչումէ մարդիկ։

— Դուցէ առաւել լաւ, քան թէ դուք։ պատճառ, ես մարդերին եմ պատկանում։ Ես տեսել եմ խաղաղ օթևանները, ուր դուք երբէք մտած չէք, եղած եմ ղօրքի կարգերում, ուր դուք երևումիք որպես

գլխաւոր։ Դուք կամիք թագաւորել ձեր խորամանկութեամբը, որ ոչ ինչ ժամանակ կարող չէ մարդերի սիրտը գրաւել դէպ ի իւր կողմը։

Այդ ձեր ըոլոր խելքովը չէք կարող երբէք սիրելի լինել ժողովրդին, դուք կարող էք լինել նորա իշխանը։ Փրանսիսկոս Առաջինի մի հատ խօսքը, Հենրիկոս Չորրորդի մի կտոր հացը, որ նա բաշխումէր փարիզեցոց, հաւաքումէին նոցա մեծ ժողովրդի բազմութիւնը, որ վառված էին սիրով դէպ ի այդ մարդիկը։ . . . Բայց Լուդովիկոս ԺԳ-ի և ձեր քաղաքականութիւնը ոչինչ մարդու սիրտ չէն քարշելու իւրեանց մեծ։ և ձեր անունը կը մնայ միայն որպէս յիշատակարան խելքի և ահ ու սարսափանքի, բայց ոչ սիրու և օրհնութեան։

«Ինձ երևումէ, որ այժմ յանցաւորը ես եմ, իսկ դատաւորը դուք, կոմս, ասաց Րիշելիեօն։

— Ո՛նչ ղարմանք· այդ պաշտօնները այնքան անսովոր բան չէն, ինչպէս դուք կարծումէք։

«Ա՛շմարի՛տ»։

— Այո՛, թէպետ և դուք շատ կարող մարդ էիք, այնու ամենայնիւ, դուք շատ անգամ առաւել ծանրաբեռնած էիք լինում, քան թէ մեք։ . . Այդ աբեղայական վերարկուն կտրատումէ, ձնշումէ ձեր սիրտը· . . և դուք գիտէք, որ այդ պատիժը առաւել ղարհուրելի է, քան թէ այն ըոլոր պատիժները, որ կարող էիք տալ ձեր թշնամիներին։ Այդ հեշտասէր պալատումը դուք միայն պիտի երևիք խստակրօն հոգևոր, այնտեղ ինքը օդը վարակված է սիրով և դուք միայն չէիք համարձակվում ընդել նորան . . . իւրաքանչիւր ախտաւոր հայեացք, իւրաքանչիւր համբոյր, որ դուք տեսանումէիք գաղտնի, մի և նոյն է, ինչպէս դաշնակի հարուած ձեր սրտումը, և ես գրեթէ հաւատում եմ, որ ձեր խըստութիւնը յառաջանումէ այն անդադար ըորբոքական սրտից, որ կայ ձեր մէջ։ Դուք հալածումէք Բուքենհեմը, որպէս թագուհու սիրական, ինձ որպէս սիրական դը Շեվրեօզ դքսուհու և որպէս յանցաւոր· . . . Այո՛, կարդինալ, դուք տեսանումէք, որ կարող էք պատժել, բայց խաբել ոչ։

«Ներեցէք, որ շալէ կոմսը որ այնպէս արհամարհումէր մատնիչների պաշտօնը, այս րոպէիս անհաւատարիմ դատնվեցաւ դէպ ի պալատի երկու երևելի տիկինները և դէպ ի Անգլիական դեսպանը։

— Ես անհաւատարիմ դատնվեմ թագուհուն և վալենտինային։

«Համերեցէք, կոմս, որովհետև ձեզ այդքան քաջ յայտնի են սիրու չարչարանքը, հառաչանքը և արտասուքը, որ ես պիտոյ է ծածկեմ թագուհուց և դը Շեվրեօզ դքսուհուց, ուրեմն դուք ոչ ոքից աւելի կարող չէիք տեղեկանալ այդ գաղտնիքին, քան թէ դոյն իսկ

տիկիններից··· Ա՛յդ գաղտնիքը այլապէս չէին կարող ասվիլ ձեզ, եթէ ոչ դանգատելով իմ խստութեան, իմ բռնութեան, իմ քաղաքականութեան կարգի վերայ, և դուք այդ տիկինների առանձնարաններումը ուսանելով առել ինձ, ի հարկէ այն տեղ ևս ուխտել էք սպանել ինձ։

— Ա՛յդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ անարգ ղըպարտութիւն։

«Դուք շատ լաւ գիտէք, որ ես ճշմարիտ եմ խօսում։ Խոստովանեցէք, որ ինձ նոյնպէս շատ բան յայտնի է, ինչպէս և ձեզ· այս խոստովանութիւնը չէ փոխելու ձեր խորհրդակիցների դրութիւնը, բայց կը փրկէ ձեր կեանքը։

— Ասացէ՛ք ասաց ձեզ, որ ես կամքի ընդունել ձեղանից այդ կեանքը։ կարդինալ դը Րիշելիեօի մեծահոգութիւնը, ճշմարիտ, այնպէս մեքուր է, որ կարելի է հաւատալ նորան··· Սպանելով մի երիտասարդ, մի աղնուատոհմ, ծաղկափթիթ հասակի մէջ մարդ, դուք չէք հերիքանալու դորանով· իւրաքանչիւր վտանգաւոր թշնամի պիտի զոհ լինի ձեզ· մի անհասանելի տնօրէնութեամբ բաղդի պիտոյ է խորտակէք դուք այն մարդիկը, որ թանգ արժէին Ֆրանսիային և ժողովուրդը ատելու է ձեզ վերջապէս··· Դուք կը ծառայէք թագաւորին և նա կը սկսանէ միայն վախենալ ձեղանից· ձեր բոլոր կեանքումը դուք պիտի աշխատէք աղդի բարօրութեան համար, բայց այդ աղգը պիտի հատուցանէ ձեզ ատելութիւն և նզովք։ Նոյն իսկ պատմութիւնը արդարացնելու չէ ձեզ, և ապագայքը պատմելու են միայն ձեր արած չարագործութիւնքը։

Շալէն այս խօսքերը ասելու միջոցին, նայուածքը ուղղակի կարդինալի աչքերին, որպէս մարդարէ, որ մերկացնումը նորա առաջև ապագայն, և այս հայեացքը Րիշելիեօի համար անտանելի զարհուրելի էր։

Շալէն թուլացած, խոնարհեցրեց գլուխը կուրծքի վերայ և ծածկեց ձեռքերով երեսը· երբ նա վերստին բարձրացրեց աչքերը, կարդինալը հեռացած էր արդէն բանտից։

Նայց միթէ դը Շեվրեօզ դքսուհին այդպիսի սառնասիրտ խստութեամբ կարողացաւ կորուսանել այն երիտասարդ և աղնիւ կտրիճը, որ ամենայն բան զոհ էր ըներած նորան· միթէ հրաժարվեցաւ նա Շալէի կեանքը փրկելուց այն պայմաններով, որ առաջարկումէր նորան թագաւորը· միթէ նորա մէջ այնքան զօրաւոր էր իւր անձնապաշտութիւնը, որ չէր կարող նա վճռել գործը· ա՛խ, ա՛խ, այսպիսի խստութիւն, այս պիսի վատթարութիւն սեպհական չէ մի կնոջ սրտի·

Հոկտեմբերի 27ի առաւօտուն, վերջին ժամերին, Շալէի պատժըվելուց յառաջ, այն կարճ միջոցումը, երբ պիտի վճռվէր այսպէս կամ այնպէս, դը Շեվրեօզ դքսուհին նստած էր միայն իւր սենեկի մէջ։ Նա աղօթելով ու յիշատակելով այն մարդը, որ այնքան սիրած էր նորան,

աշխատումէր հաստատել իւր սիրտը այնպիսի ըղձութեամբ, որ անպատճառ հարկաւոր էր ըղձալիութեան համար, որ դքսուհին պատրաստվումէր կատարել· բայց այն րոպէին, երբ որ նա վեր կացաւ տեղից, որ դնայ յայտնէ Լուդովիկոս ԺԳ-ին, թէ ընդունումէր նորա առաջարկած պայմանները, նորա հոգին սպառվումէ, նա դողումէ, նորա ծնկները ծալվումեն, նա չէ կարող յառաջ շարժել իւր քայլափոխքը, և ստիպուած է բռնել պատերից, որ վայր չընկնի: Բայց ահա վերստին արիանումէ նա, հանումէ Շալէի պատկերը և ծնկի վերայ ընկած նորա առաջև, ուխտ է դնում փրկելու նորան· սորանից յետոյ վեր է թռչում տեղիցը և պահանջումէ իւր կառքը· · · Բայց ներս մտած սպասաւորը տալիս է նորան մի նամակ, դքսուհին նշանացի է առնում, որ թողուն նորան մենակ, մի րոպէ ևս յետացնումէ իւր գնալը:

Այս նամակը գրած էր նորան Բուքենհեմը, և նորա բովանդակութիւնը էր այսպէս·

«Ալենտինա, պատուասիրութիւնը չէ կարող երկար ժամանակ խաբել մեր սիրտը· եթէ ես մի րոպէ կուրացած էի հպարտութեամբ, տեսանելով Գրանսիական թագուհու սիրարորբոք ձգտողութիւնը դէպ ի ինձ, դու պիտոյ է ներես ինձ· պատճառ, միւս անգամ դարձուցանումեմ երեսս դէպ ի քեզ: Քեզ տիրելու համար, թողումեմ ես պալատը, ուր Աւստրիական Աննայի բարկութիւնը կարող էր հալածել և մեզ և մեր ղուգաւորութիւնը: Ես հրաժարվումեմ ամենայն գործից, որ պիտոյ էր ինձ կատարել Գրանսիայի մէջ, այն փառքից ևս, որից իմ բաժինը պիտոյ է հասանէր ինձ: Հաւատալով, որ դու ևս նոյն չափով ըղձալիր կը լինիս իմ համար, սպասումեմ քեզ»:

«Բուքենհեմ»:

Դքսուհին նայեց այս նամակի վերայ վայրկեան և անխելացած աչքերով, քննեց իւր մէջ այս թանդագին մարդու ձեռքի դրութիւնը, տեսաւ փառաւոր կնիքը, Անգլիական կնիքներից ամենափառաւորը և երևելին, և պատուասիրութեան կրակը բորբոքվերով նորա երակների մէջ, հալեց ու մաշեց նորա սիրտը· · · · մի բաղդաւորութիւն, որի նմանը չը կար աշխարհի երեսին, կարող էր գտնել նորա բաժինը: Մի րոպէ յառաջ, մի րոպէ յետ, նա կարող էր կին գտնել Բուքենհեմի· որպէս զի հեռանայ այս սարսափելի փորձութենից, նա վեր թռաւ, ձգեց վերարկուն իւր վերայ և դուրս էր վազում սենեկից· · · Բայց նորա աչքերը դարձեալ հանդիպեցան Բուքենհեմի նամակին, և

Նա Թուլացած ընկնում աթոռի վերայ . . . . Ուղղելով իւր անշարժ հայեացքը ժամացույցի սլաքի վերայ , զննում նորա ընթացքը , ճօճանակի իւրաքանչիւր ղարկը թափանցում նորա սրտի մէջ , որպէս մի դաշնակի հարուած :

Ա՛ճահատական սլաքը յառաջ է շարժվում . շուտով կը հասանէ նա կէս օրին , — պատժի կատարվելու սահմանեալ րոպէին , այն սոսկալի րոպէին , որի մէջ արդէն շատ գլուխներ թռած էին . . . . Ցանկարծ Վալենտինայի ականջը լսում մի թաղման զանգակահարութիւն . նորան կէս ժամ միջոց է մնում : Նա կամենում յարձակվել դէպ ի դուրը , բայց զօրութիւնը սպառվում , նա վայր է ընկնում , որպէս անդղդայ , և գլուխը զարկվելով մարմարոնեայ յատակին , ստանում մի խոր վէրք :

Այս միջոցին ինչ պատահեց Շալէին բանտում . ինչպէս անցուց նա այս խորհրդաւոր ժամերը , իւր կեանքի զարհուրելի վճռահատական րոպէից յառաջ : Այս ժամերը այնպէս սուրբ են , այնպէս ցաւալից , որ մարդիկ չէ պիտոյ միջամուխ լինին նոցա գաղտնիքի մէջ . այսպիսի ժամերում աչքերը լաց չեն լինում հասարակ արտասուքով , շրթունքը չեն արտաբերում սովորական աղօթքներ . այսպիսի ժամերում մարդու և Աստուծոյ մէջ կատարվում մի խորհրդաւոր և վեհմտիտ խօսակցութիւն , որ միւսերը հասկանալ կարող չեն . . .

Այսպէս պատահեց և Շալէի հետ , այս խօսակցութիւնը ամիրայրեց նորա սիրտը այրական զօրութեամբ և նա սկսեց հոգ տանել այն բանին միայն , որ ընդունէ մնչը այնպիսի հաստատութեամբ , որ արժանի էր նորա երակների մէջ խաղացած արիւնին : Նա հագաւ իւր նոր հանդերձը , յարդարեց վերջին անգամ իւր գեղեցիկ մազերը , զարդարեց կուրծքը ժապաւէններով և դուրս եկաւ բանտից այնպէս գեղեցիկ , այնպէս փառահեղ , ինչպէս էր այն ժամանակին , երբ բոլոր թագաւորական պալատը խելքը կորուսանում նորա գեղեցկութեան վերայ :

Այն րոպէներում , երբ նա դադարեց աղօթելուց , նորա մի հատ մտածութիւնը էր իւր մայրը . նա կարող չէր ինքն իւրեան հաշիւ ու համար տալ , թէ ինչ պատճառով դեռ ևս յոյս ուներ մի բանի վերայ : Նորան թվում էր , թէ մօրը կը յաջողվի հանդել (հաւանեցնել) թագաւորը . և ինչպէս կարող էր որդին բոլորովին հրաժարվիլ այս մտածութենից , իմանալով մայրական սէրը , նորա բոլոր անչափ ու անսահման կշիռը :

Շալէ կոմնուհին արդարև գործ դրեց ամենայն կարելի հնար իւր որդու փրկութեան համար . շատ արտասուք և շատ ոսկի թափեց իւր որդու վերայ կարգած դատաւորների առաջև : Յառաջացած լինելով

Մօնելուկ երևելի ազգատոհմից, որ յայտնի էր իւր անփոփոխ հաւատարմութեամբ Ֆրանսիայի թագաւորներին, յանձն առաւ նա վերջումը ծուներ խոնարհեցնել Դաստոնի առաջև և աղաչեց նորան օգնութիւն հասանել, բայց նա սառնութեամբ պատասխանեց նորան, թէ «ոչինչ կարող չէ առնել»:

Խարեպաշտ և ամբիծ Շալէ կոմսուհին լաց էր լինում դը Շեվրեօզ դքսուհու առաջև:

«Ահա գրեց թագաւորին այնպիսի նամակներ, որոնց նմանը գուցէ թէ երբեք չէ գրված մի կին մարդու ձեռքով, և պատմութիւնը պահել է այդ նամակները, որպէս մայրական վշտի սրբազան յիշատակներ [1]:

Շալէ կոմսը գանչեց իւր մօտ պահապաններից մինը և հարցրեց, արդեօք կարող էր նա մի լուր ստանալ իւր մօր մասին, յառաջ քան թէ դուրս էր ելած բանտից:

Նորան պատասխանեցին, թէ Շալէ կոմսուհին աղաչանքով ու պաղատանքով կարողացել է վերջապէս մի ողորմութիւն դատնել. թագաւորը թոյլ էր տուել մօրը, թաղել իւր որդու մարմինը պատշաճաւոր պատուով և ազատել էր չորս կտոր ճեղքելուց և անարգ կախաղանից: Շալէն գոհացաւ Աստուծուց այս շնորհի համար և արտասուեց, լսելով մօր անունը:

Խուր հանդէսը շարժվեցաւ դէպ ի Նանտէսեան հրապարակը: Գլխապարտվածը պահանջեց, որ թոյլ տան նորան ոտով գնալ այն տեղ, որ ժողովուրդը կարողանայ տեսանել, թէ նա հաստատ հոգով գնումէր դէպ ի մահ:

Նայց քաղաքը դատարկ էր. ժողովուրդը, վոխանակ հաւաքվելու և շտապելու դէպ ի այս արիւնհեղութեան հանդէսը, չը կամեցաւ ներկայ գտանվիլ դորան:

Վողոյներումն լուսութիւն էր և տխրութիւն. Հոկտեմբերի ամպոտ օրը տխուր նայումէր երկրի վերայ. իսկ օդը հնչեցնումէր միայն տըրտմութեան ձայնարկութիւնքը, որ լսվումէին ղանգակատնից:

Շալէն գնալով քահանայի և դահճի միջով, ստեպ նայումէր Աստուծոյ պաշտօնէի վերայ, որի հայեացքը լցված սրբազան հոգեշարժութեամբ, պահպանումէր Շալէի արիութիւնը.... Ցանկարծ նորա միւս ընկերի կարմիր հանդերձի վերջը ընկաւ նորա ոտքի տակ և նա սարսափելով նայեց այս զարհուրելի մարդու վերայ: Զարմանալով նորա բարձր հասակի վերայ, նայեց նորա երեսին.... Այս այն մարդն

---

[1]) Recueil des pièces intéressantes pour servir à l'histoire du règne de Louis XIII et de Louis XIV.

էր, որին տեսել էր Շալէ կոմսը դլ Շնվրեօլ դքսուհու ամրոցից դուրս գալով, որին պատահել էր Գաստոնի տնից հեռանալով, և որին գտել էր դարձեալ իւր բանտի մէջ. կարճ ասեմ, այն Լամոնը, որ երեւել էր նորա մօտ որպէս Րիշելիեօ կարդինալի լրտես և որպէս սպասաւոր դահճի, որի միջոցանակ պիտոյ է գործ կատարէր այն օրին [1]):

Այս մարդու կերպարանքը այն վերջին երկրաւոր առարկան էր, որի վերայ դադարեց Շալէի հայեացքը. սկսեալ այս րոպէից, տեսաւ նա միայն երկինքը:

Այս տրտում հանդէսի ժամանակ, Շալէ կոմսուհին, թուլացած հոգևոր տանջանքներից, որ առաւել ցաւեցուցիչ էին, քան թէ ամենայն տեսակ վիշտ ու տառապանք, աղօթումէր Ֆրանսիսկեան վանքի եկեղեցումը, ուր թոյլ էր տուած նորան թաղել իւր որդու մարմինը: Ամբողջ օրը ոչինչ բան չը խոովեց այն մռայլ խաղաղութիւնը, որ թագաւորումէր եկեղեցու կամարների տակ. պատճառ, անբաղդ Շալէի մարմինը պիտոյ է մնար էշաֆօտի վերայ, մինչև օրը բոլորովին մթանար.... վերջապէս հասաւ գիշերը:

Շալէ կոմսուհին տարածված սեղանի առաջև, այնպէս սառն էր ինչպէս մարմարիոնը, որի վերայ ծունր էր դնում: Նորա առաջև վերայգրած քարի տեղումը երևումէր խոր փորած գերեզմանը, լապտերը գերեզմանի եղրումը դրած լուսաւորումէր այս խաւար դատարկութիւնը. ոչ մի անուն չէր կարող գրվիլ Շալէի գերեզմանաքարի վերայ, և Շալէի գերեզմանը կարող էր միայն ճանաչվիլ այցելու մօր ներկայութենից, բայց և այս մօր արտասուքը երկար թաւիվելու չէին.... այդ գերեզմանի վերայ....

Վիշերը վերայ հասանելով, աւագ սեղանումը վառվեցան երկու մոմ, և մի քանի աբեղայք եկան հոգեհանգիստ կատարելու: Այս երգեցողութիւնը հնչելով եկեղեցու բարձր կամարների տակ, թվումէր որպէս մի այլ աշխարհից եկած ձայն, անմարմին զօրութենների ձայն, որ գանչուփին իւրեանց մօտ հանգուցելու հոգին:

Շալէ կոմսուհին սպասումէր, նա դողումէր, եթէ լսվումէր մի ամենափոքր աղաղակ: Վերջապէս երկու աբեղայք ներս մտան եկեղեցին և սկսեցին կամաց կամաց մօտենալ հանգստարանին....

Ոյժ անհաւասար քայլափոխերից, որ լսվումէին եկեղեցու կամարների տակ, կարելի էր հասկանալ, որ կրումէին մի ծանրութիւն....

---

[1]) Շալէի բարեկամքը անյոյս լինելով ներողութիւն ստանալու, փախուցած էին նրանից քաղաքի դահիճը և այսպէս կարծումէին ժամանակ ստանալ: Բայց այս բանը միայն առաւել ցաւեցուցիչ արեց անբաղդի մահը. պատճառ, Շալէն յանձնվեցաւ առաւել անփորձ դահճի գործակատարութեան:

Կոմսուհին ընդունելով իւր որդու մարմինը, յարձակվեցաւ նորա սառած լանջքի վերայ և գրկեց իւր մեռուցած զաւակը, տրուի տրուի լինելով սիրտը։

Այն ժամանակ զգաց նա երեսի վերայ արիւն, որ դեռ ևս կաթում էր այս գլխատեալ մարմնից և վայր ընկաւ իւր որդու մօտ, նոյնպէս անդգայ ինչպէս որդին. . . . . Երբ դը Շևվրեօզ դքսուհին զգաստացաւ ուշաթափութենից, տեսաւ նա, որ շրջապատումէին նորան քաղաքական կառավարութեան պահապանքը. նա բանտարկվեցաւ Թագաւորի հրամանով և տարվեցաւ Լօտրինգիա դէպ ի իւր սեպհական Դամպիերեան ամրոցը, ուր կացաւ նա որպէս կալանաւոր։

Խուքենհեմը մի քանի օրից յետոյ հեռացաւ Փրանսիայից, ոչնչացնելով խաղաղութեան պայմանքը այս անբաղդ աշխարհի հետ, ուր կորստական ախտերը պատերազմ էին բորբոքում Թագաւորի և նորա ժողովրդի մէջ, և ուր արիւնը հոսում էր դեռի նման։

Իշխելիեօ կարդինալը, այս ողբալի անցքերի գլխաւոր պատճառը, ոչ թէ միայն վնասի չը հասաւ, այլ շատ բան ևս շահվեցաւ. Թագաւորը երկիւղ ունենալով այն վտանգից, որի ներքոյ գտանվում էր իւր մինիստրի կեանքը, սկսեց աւելի խնամատարութիւն ցուցանել նորան. և այս ժամանակից կարդինալը իշխանութիւն ստացաւ կարգելու իւր համար իւր յատուկ պահապանքը։

Մ. Նալբանդեանց։

ՎԱՑՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ։

«Հայրիկ, ասաց դուստրը հօրը,
Կապոյտ երկնքի վերայ
Որքան աստղեր փայլումեն վառ,
Ասես համար, թիւ չը կայ.
Ասումեն որ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքում.
Ճշմարիտ է ասա, հայրիկ,
Իմը որ տեղ է փայլում»։
— Այո, դստրիկ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար,

Եւ մեղանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իւր համար։

«Ո՛յրիկ, տես տես, աստղը թռաւ,
Ցետքից պայծառ գիծ թողեց։
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց»։

— Ո՛հ իմ դստրիկ, հանդիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում, իւր կեանքումը
Խիղճ ասածը չը գիտէր։
Աղքատները նորա դռնից
Գիշեր ցերեկ հալածված։
Մի մարդ չը կար նորան ծանօթ,
Որ չը լինէր վշտացած։

«Ո՛յրիկ, տես տես, աստղ թռաւ,
Ցետքից պայծառ գիծ թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց»։

— Ով իմ ղաւակ, մի՛ վրդովվիր,
Դա աղջկայ մի աստղ էր,
Որ իւր հօր ու մօրը խօսքը
Իւր կեանքումը յարգած չէր։
Նա փախել էր իւրեանց տնից։...
Մուր էր քսել տան վերայ։...
Իւր ծնողքը լացուցել էր,
Ինչքը վատնել անխնայ։

«Ո՛յրիկ, դարձեալ թռաւ մի աստղ,
Վայր ընկաւ նա երկնքից։
Հայրիկ, ո՞վն աստղն էր արդեօք,
Որ զրկվեցաւ իւր տեղից»։

Ո՛հ դստրիկս, հանդիստ կացիր,
Կեղծաւորի դա աստղ էր,
Որ իւր օրում ուղիղ մի խօսք
Մարդու երբէք ասած չէր։
Փարիսական իւր ձևերով
Աշխարհք խաբեց, զարմացուց,
Այդ պատճառով Աստուած նորա
Աստղն լոյսը խլացրուց։

«Հայրիկ, տես տես, միւս աստղ թռաւ
Եւ գիծ անգամ չը թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց»։

— Ո՛հ սիրական, խաղաղ մնա,
Բռնակալի դա աստղ էր,
Որ աշխարհը իւրեան գերի
Ծնած օրից կարծել էր։
Շատ հալածանք, շատ նեղութիւն,
Պատճառեց նա իւր կեանքում։
Շատ տուն քանդեց, շատ մարդ ղրկեց,
Գութ չունեցաւ իւր սրտում։

«Պա այն ինչ աստղ է, հայրիկ,
Որ այնպէս պարզ վառվռում,
Նորա մաքուր պայծառ լոյսը
Ձորս կողմը բակ բռնել է»։

—Ո՛հ իմ դստրիկ, աղօթք արա
Դա ծերունու մի աստղ է,
Որ իւր կեանքում ոչինչ մարդու
Ոչինչ վնաս տուած չէ։
Ա՛յն լուսաւոր բակն է նորա
Առաքինի գործքերը։
Աղօթք արա, որ երկարվին
Նորա կեանքի թելերը։

—

Հ՛ատ օր չանցաւ, երկնքիցը
Մի այլ վառ աստղ պակասեց։
Ո՛վ աստղիկն էր որ ընկաւ,
Բան հարցանող չերևեց։
Մինչ դեռ լուսինը արծաթափայլ
Լոյս էր տալիս գիշերին,
Խորհրդաւոր մինչ տիրել էր
Անվրդով խոր լռութիւն։
Մի սրտաթափ, մաղերն արձակ
Վազեց աղջիկ սգաւոր
Դէպ ի գեղի գերեզմանը,
Ծունկ չոքեց մի շիրմի մօտ։

«Հայրիկ, աստղիկդ չէ փայլում,
Դու յաւիտեան քնեցիր.
Ա՛ռ ինձ քո մօտ, քո ծոց, քո կիրկ,
Ինչո՛ւ անտէր թողեցիր,
Իմ աստղիկն ասա նոյնպէս,
Որ չը փայլի. հերիք է.
Ա՛յս աշխարհը ինձ առանց քեզ,
Մութն ու խաւար մի բանտ է»։

—

Այ մարդ չը կար, որ նկատէր,
Որ հետևեալ գիշերին
Պակասեցաւ երկնքիցը
Մի պայծառ աստղ խնդագին։
Երրորդ օրը շատ սգաւորք
Փորեցին մի գերեզման,
Ուր թաղվեցաւ իւր հօր մօտին
Մարմինը խեղճ աղջկան։

—

«Հայրիկ, տես, տես, աստղը թռաւ,
Ցետքից պայծառ դիծ թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը
Միւս անգամ այլ չերևեց....»

կոմս Խմմանուէլ։

ՐՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ.

ԹԷ Ի՛ՆՉ Է ՐՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ։

Ազգերան փոթորիկների մէջ ծլում է խաղաղութեան սերմը. այսպէս ևս բնագիտութիւնը անցած գնացած օրերի պատերազմի մէջ աճել է և արձակել է իւր ճիւղերը, և մի չտեսած ու չլսած փափագով ցանկանում են ամենեքեան մասնակից լինել նորա արդիւնքին։ Ասես թէ փոթորիկը շարժելով զարթնեցրել է ժողովուրդը մի թմրութեան քնից. ասես թէ ժողովուրդը այժմ միայն հասկացել է, թէ ինչքան հարուստ էր իւր ժամանակը նորանոր գիւտերով և յայտնագործութիւններով,

Նայեցէ՛ք թէ ինչպէս անց ու դարձ են առնում գետերի և ծովերի վերայ անառագաստ նաւեր, և գոլորշարձակ սայլերի բազմութիւնը գլորվում են երկաթաշէն ճանապարհների վերայ, որ երկրի երակների պէս, գործակատար կենսական հեղեղները մղում են դէպ ի իւրեանց մեծ մեծ կենտրոնները։ Ահա լսում ք դուք, թէ ինչպէս գղրդումն գործատների պատերը աղմկարար մեքենայք, և տեսանում ք թէ ինչպէս դրքա, ասես թէ, հաղարաւոր անտեսանելի ձեռքերից մղվելով պատրաստում են բազմարուեստ հիւսուածներ։ Նայեցէ՛ք այն տեղ, թէ ինչպէս օդագնաց նաւեր տանում են ադամորդին ամպերի միջով դէպ ի երկինք, և աւելի վեր քան թէ այն սահմանքը, ուր կարող էր բարձրանալ արծուի թռիչքը։ Թեթև հայելի պատկերներ դադերրոտիպ և ֆօտոգրաֆեան արուեստի կախարդութեամբ ձևանում են ձեր առաջև տախտակի կամ թղթի վերայ, և էլեքտրօմագնիտեան տելեգրաֆի լարերի վերայով վազում են մարդու մտքի խորհուրդները այնպէս արագ անցանելով ահագին տարածութիւնները, ինչպէս նոյն իսկ մտածութեան թռիչքը։ Այս տեղ, մանրատեսիկ ակնոցի ներքոյ կենդանանում է գետինը ձեր ոտքի տակ, և հսկայամարմին սարեր երևում են որպէս շէնքեր մինչև այժմ չտեսած կենդանական ու տնկական աշխարհի։ Այն տեղ, հեռադիտքը լնակաւորում է երկինքը անհամար, երբէք չտեսած աշխարհներով, և ամենայն տարի բաշխում է մեր երկրին նոր նոր ուղեկիցներ նորա ճանապարհորդութեանը արեգակի չորս կողմով։ Ինչ վերջապէս պատմեմ ձեզ, թէ չորս տարի յառաջ այն մեծ կղզիաբնակ ազգի մայրաքաղաքումը, այսինքն Լոնդոնի մէջ, որպիսի զարմանալի ապարանք շինվեցաւ մարդկեղէն ձեռքով. մի այնպիսի ապարանք, որի նմանը ոչ մի դար տեսած չէր, մի ապակաշէն և երկաթանիւթ ապարանք, ամիսներով իւր առաստաղի տակ ծառեր։ Նորա սրահների մէջ հաւաքած էին բոլոր ազգերի յօրինուածքը, և ամեն օր հաղարներով գալիս էին երկրի բոլոր աշխարհներից, որ ականատես լինին մարդու մեծագործութիւններին և հասկանան թէ արդարև մարդը յաղթող է բնութեան։

Յիրաւի պատճառ կայ հիանալու մեր ճոխագիւտ ժամանակի հրաշքների վերայ։ մանաւանդ մարդիկ զուշակումն ահա, թէ ամբողջ ազգերի որպէս և ամեն մի մասնաւոր մարդու կեանքը պիտոյ է կերպարանափոխ լինի։ Եւ դիցուք թէ այս օրըստօրէ ղօրացող սէրը դէպ ի ընագիտութիւն, այս ձգտողութիւնը պայծառապէս վերահասու լինելու նորա հրաշքներին; դեռ ևս ըստ մեծի մասին բղխումը մի հիացող նորասքրութիւնից, կամ թէ այն նիւթական օգտից որ հասուցանումը ընագիտութիւնը։ բայց միւս կողմից, այդ ձգտողութիւնը նոյնպէս յաճախ

ունէր մի աւելի խորին, աւելի աղնիւ շարժառիթ։ Սկսեալ գարաւոր ժամանակներից, մարդուս քննող հայեացքը օրէ օր ժողովելով և պահպանելով հատուկտոր յայտնութիւնքը բնութեան մէջ, կազմել է դոցանից մի մեծաշուք համաշխարհական ըմբռնողութիւն, որի մէջ ամեն մի առանձին յայտնութիւն ունի իւր սահմանեալ տեղը, ամեն մի ջոկ էակ ունի իւր սահմանեալ պաշտօնը։ Հատուկտոր բաների վերայ կապած լինելով բնագիտութիւնը, մնում էր մի նեղսիրտ մարդկային գործ, բայց ուղղելով իւր աչքը բոլորի վերայ, լինում նա ճշմարիտ գիտութիւն, ներգործում բարոյապէս աշխուժացնելով և հոգեպէս աղատելով, ակամայ և անզգալի կերպով դրաւում ամենայն միտք, որ միանգամ ընդ-վիակվել էր նորա բոլորակի մէջ։ Ա՛յս է ահա այն կարող ազդեցութեան խորհուրդը, որ բնագիտութիւնը մեր օրերումը սկսել է արդէն ներգործել ամենայն մտածողների վերայ· այս է ահա այն մեծ խնդիրը, որին, ինչպէս յոյս ունի ժամանակը, պիտոյ է կատարումն տայ բնագիտութիւնը։ Արդարև, որպէս մի լուսափայլ աստղ խաւարի մէջ, ողջունում են դորան գուշակող (մարգարէական) ձայները։

Ներկայիս խաւարը լուսաւորել, այս է ահա բնագիտութեան խորհուրդը· բայց ինչպէս կարելի է խաւարի վերայ խօսել մեր լուսաւոր դարու մէջ։ Ո՛չ· անցած ժամանակների գիշերը դեռ ևս տարածանում երկար ու ձիգ ստուերներ շատ ազգերի վերայ, նոցա վաստակարարութեան, նոցա իմացականութեան, բարքուվարքի և հաւատի վերայ։ Այդպիսի ազգերի կարգումն են և Հայք, մեր հոգով չափ սիրելի եղբայրակիցքը։ Եւրոպացոց գիտնականքը գրումն բազմաթիւ ուսուցանողական գրեանք գիւղապահ և անտառապահ տնտեսների, քաղաքացիների և շինականների համար· թէ ինչքան հարուստ է միայն գերմանական լեզուի մատենագրութիւնը մանուկների ընթերցանութեան համար, այդ բանին տեղեակ էր ամենայն Եւրոպացի որ գիտէր գերմաներէն և կարդացել էր Ֆրանց Հօֆմանի բազմահատոր գեղեցիկ գրուածները, Նիրիցի և միւս ժողովրդական հեղինակների աշխատութիւնքը։ Հայերի համար աշխատումն մինչև այսօր պապական աբեղաներ ագրիատեան ծովախորշերի մօտ և Վիեննայի մէջ նստած, և սոքա աւելի հիմնաւոր կերպով, քան թէ նոքա, որովհետև գերմանական քաջ ուսումնականութեան ուսերի վերայ գործ են կատարում, թէպէտ միապէս անյարմար աշխարհիկ հայախօսութեամբ, այսինքն չարդուիշուր առնելով հայկական լեզուի գեղեցիկ ձայները և անարատութիւնը, որպէս թէ պլպլպէս չէր կարելի բան հասկացնել ժողովրդին, եթէ ոչ նորա պէս ծռմռելով լեզուն և գռնհկաբանելով։ Թողունք այս քննողութիւնը, միտք դարձուցանելով այս տեղ այն բանի վերայ, թէ ինչքան կասկածելի բան էր մի ազգի

լուսաւորութիւն նեղսիրտ, փոքրոգի և նախանձոտ աբեղաների ձեռքով և այն պապական աբեղաների· և թէ մի ազգ մնալով միայն դոցա տուած լուսին, դոցա ձեռքով պատրաստած կերակուրին, ինչքան լաւերի մէջ կարող էին անչափ պղտոր և սխալ տեսութիւնք յառաջանալ, ինչպէս արդարև յառաջացած էն արդէն այնպիսի հայ մարդերի մէջ, որոնց հաւատ փակ էին եւրոպական լուսն և մաքուր աղբիւրները: Այս բանը քաջայայտ է մեր պատուելի եղբայրակիցներին Տաճկաստանումը, որ և հասկանալով իւրեանց իրաւունքը, այսինքն, ազգային հարազատ ձեռքով գործել ազգի լուսաւորութեան անդաստանը և ոչ թէ թողուլ այդ մեծակշիռ բանը աբեղաների ձեռքին ու կամքին, ժողովրդի կրթութիւնը շինել են մի ազգային գործ և դրել են նորան ազգի խորհրդականների հոգաբարձութեան տակ: Եթէ քննենք մեր լուսաւորեալ դարու Հայերի դրութիւնը Ռուսաստանի մէջ, սոցա ոչ աբեղայքը և ոչ աշխարհականքը ժամանակ ունին մտածելու ազգային լուսաւորութեան վերայ· ունինք մտածումն ևս, թէ դա ինքն ըստ ինքեան ոտք կ'առնու և յառաջ կ'երթայ, առանց որ և իցէ գլխացաւութեան և առանձին հոգաբարձութեան, որպէս թէ կարելի էր այն տեղ հնձել, ուր ոչ ոք սերմանել չէ: Գիտեմ, որ ատելի եմ կայուցանումս իմ անձը, այսպիսի խօսքեր խօսելով մեր ազգի մէջ, ըստ որում, ստոյգը ասելով, թշնամի էի դառնում շատ մարդերի· բայց փառք Ամենակարողին որ պարգևել է ինձ այնքան լայն սիրտ, որ կարող իմ տանել այն սեաւ բամբասանքներին որոնց սովոր է ասիացի Հայը: Մեր եղբարքը կամենում էին ինձանից քաղցր գովասանութեան մեղը, բայց ես միտ դնելով նոցա ջերմեռանդութեանը, կարող եմ միայն տալ նոցա դառն խինին, և այս էր նոցա ցաւի փրկաւէտ ճար ու դեղը:

Ռուսաստանի Հայերի դրութիւնը այսպէս լինելով, աւելորդ էր հարց ու փորձ առնել այս տեղ, թէ դոցա գիւղական տնտեսը ինչ գիտէր քիմիական գործողութիւնների մասին, արուեստաւորը ներգործող զօրութիւնների, շարժողութեան և հաւասարակշռութեան օրէնքների մասին, վաճառականը ինչ կրթութիւն ունէր բայ ի մի փորձով ստացած հաշուարարութիւնից և հաշուապահութիւնից: Պատճառ, ժողովրդին անյայտ էին գիտութեան սկզբունքը, որովհետև ոչ ոք պատրաստել չէ դորան այս մեր նոր ժամանակի համար· և ինչ որ ազգի որպէս թէ հոգաբարձու ուսումնականքը տուած էին դորան, էին մի քանի անուտելի և անմարսելի նիւթեր, բայց ոչինչ, ժամանակին յարմար մնուդ: Այսպիսի դրութեան մէջ մնալով ազգը, մեռել է Հայերի մէջ ամենայն խիզճական և աղնիւ պիտոյք, և արմատացել է նոցա մէջ մի հոգևոյան նիւթապաշտութիւն, մի կոպիտ ու սոպռ արծաթասիրութիւն, որի առաջև լըռ-

ված ու սասանված կայ ամենայն մարդավայելուչ զգացողութիւն։ Հնարը դարձել է նպատակ· ինչ որ արծաթ չէ, կամ թէ արծաթ վաստակելու ճանապարհ, ոչինչ է Հայի աչքումը· ինչ է գիրք ասած բանը, մի անպիտան անօթ, աւելորդ գլխացաւութեան պատճառ· ընթերցանութիւնը, դորանով մի նոր բան ուսանել և լուսաւորել իւր աստուածատուր բանականութիւնը—իսկոյն լսումեմ «մի թէ աբեղայ էինք», որպէս թէ աբեղան միայն պիտոյ է գիրք կարդար, դա միայն բանական մարդ էր, իսկ միւսերը անբանք։ Ցաւելի, հաղար անգամ ցաւելի ազգ· բայց այդպէս կը լինի ամենայն ազգի դրութիւն այնպիսի տրտում ու դառն հանգամանքների մէջ, որոնց մէջ կային մեր Հայերը Ռուսաստանումը, որ և թէ ինչ աղբիւրներից յառաջանումէին, ասվեցաւ արդէն մեր օրագրի ձակատումը դրած թերթերի մէջ, և հերիք էր ամենայն բանագէտ և խոհական ընթերցողի։ Ուրեմն ժամանակ չէր այժմ, մեր Հայկական վերքի վերայ գոնեայ մի փոքր սպեղանի դնել, եթէ կարելի չէ իսկոյն Հայոց ոտքից մինչև գլուխ վերաւոր մարմինը բոլորովին բժշկել· արդեօք ժամանակ չէր մեր սիրելի ժողովուրդը փոքր ի շատէ դուրս հանել այդ անարժան դրութենից, նորա սիրտը և հոգին բանալ գիտութեան ջերմացուցիչ ճառագայթների առաջև, Հայազգի հօրերի և մօրերի հետ խօսել մի քանի բառ նոցա սիրելի զաւակների իմացական օգտի վերայ և տեղեկացնել նորանց թէ իւրեանց պարտականութիւններին դէպ իւրեանց զաւակը, և թէ մեր լուսաւոր դարու մտածող մարդերի փորձերին այն սուրբ բանի մասին, որ ասվումէ մանուկների դաստիարակութիւն։

Ո՛եր ժամանակներումը շատ մարդիկ կան, որ իւրեանց ասումէին կրթեալ մարդ, բայց երկնքի կամ տունկերի կազմութեան հրաշքներից, բնութեան զօրութիւնների գործողութիւնից և նորա միջնջենաւոր օրէնքներից ոչինչ չը գիտեն, թերի մի քանի անուններ, ձևեր և թուեր։ Քանի՛ մարդիկ Հայերի մէջ, թէ ուսումնական, թէ հոգևոր և թէ աշխարհական ծանօթ էին իւրեանց երկրի վաղաժամանակեայ դրութեանը, այն հողի տեսակ տեսակ յեղափոխութիւններին, որ նոցա երկրաւոր բնակարանն է, այն մարմնի կերպարանագործութեանը որ նոքա ասումէին իւրեանց անմահ հոգու պատեանը։ Բայց ես աւելի մութ տեսանումեմ այն տեղ հաւաքված ու կուտած Հայոց ներկայ հորիզոնի (երկնակամարի) վերայ· Հայոց մարդը ինչ գիտէ իւր սեփական ազգի, իւր նախահարց, իւր բնիկ աշխարհի պատմութիւնը, թողունք հեռաւոր եւրոպական ազգերինը։ Հայոց հնագոյն ուսումնականը Ռուսաստանի մէջ, եթէ կային մի քանի այդպիսի մարդիկ և որպէս թէ պատիւ ունէին հին Հայկազանի անունով, ինչ գիտէ, թէ այն հնախօս լեզուն

որով կատարվել է մեր Հայկական նախահարց լուսաւորութիւնը, անկարելի է խիստ ստիպրաբար հասկանալ առանց քննելու հելլենական լուսաւորութեան աղբիւրքը, որոնցից մեր երանելի Թարգմանիչքը, Մեսրոպ, Սահակ Պարթեւացի, Մովսէս Խորենացի, Եղիշէ, Ղազար փարպեցի, Կորիւն և այլն, ստացել են իւրեանց կրթութիւնը և մտաւեն. գրական ճաշակը: Մեր ժամանակի Հայերը հաւարեա թէ ամենայն բանի մէջ անփորձ երեխայք են. փոքր ի շատէ ուսածքը ևս, ինչպէս պատահել է բազդի բերմամբ, առանց կարգի և ուշադրութեան, ըստ մեծի մասին մի պատառ հաց ճարելու համար, առանց հիմնաւոր փիլիսոփայական կրթութեան, ի հարկէ մտածել ևս չը գիտեն ոչինչ առարկայի վերայ, և ինչ բանի վերայ ևս խօսէին, աւելի քան թէ մի քանի վայր ի վերոյ դատողութիւնք, կցկտուր խօսք և ըղձայ չէ կարելի լսել դոցա բերանից. խօսելը մտածել է, ով չը գիտէ խօսել, նա չը գիտէ և մտածել. բայց մտածելը կարելի է հիմնաւոր ուսմամբ և դաստիարակութեամբ: Հայք դատողութիւն են առնուտ, առանց ուսած լինելու, թէ ինչպէս պիտոյ էր մտածել. և ինչ աղգի մէջ առողջ դաղափարք չը կան, այն տեղ պիտոյ է ներգործէ միայն կիրքը (սրտի ախտաւոր յօժարութիւնը). և դորա հետևանքը էր մի ողբալի խառնակութիւն և անկարգութիւն աղգային կեանքի մէջ:

Ա.յսպիսի նկատողութիւնք առնելով այս տեղ, չը կամէինք ոչ միևնը մեր եղբայրակիցներից վերաւորել. այլ մեք այնպէս ենք մտածում, որ ամենայն անձն թէ առանձին մարդ և թէ մի ամբողջ աղգ նախ և յառաջ պարտական է ճանաչել ու խոստովանել իւր պակասութիւնքը, որ կարողանայ ուղղել ու բարւոքել իւր դրութիւնը որ և իցէ մտքով. կուրութիւնը կործանիչ է և թշնամի ամենայն յառաջադիմութեան: Եւ ինչ օգուտ անձնախաբէութենից. հարկաւոր է ճշմարիտ լուսաւորութիւն և գործք աղգի մէջ, որպէս պտուղ ճշմարիտ լուսաւորութեան. մեծախօսութեամբ և անմիտ ամբարտաւանութեամբ ոչինչ բան չէ կարելի ապացուցանել: Հիւանդը ճանաչելով իւր ցաւագարութիւնը և կանուխ դեղ ու ճար խնդրելով, կարող է փրկել իւր անձը, բայց անտես առնելով իւր ցաւը, այլև առողջ ձևանալով, կը կորուսանէ իւր անձը:

Ի՞նչպէս պիտոյ էր օգնել մեր սիրելի աղգին, թէ՛ւղ մտածեն աղգի հոգևոր և աշխարհական իշխանքը, թէ՛ւղ գործով ապացուցանեն իւրեանց բարի և լուսաւոր կամքը: Մեք կատարեցինք մեր պարտականութիւնը, հաւարձակապէս ասելով մեր մտածութիւնքը: Այժմ յաջառաջ տանենք մեր խօսելիքը քննադատութեան վերայ, ցոյց տալով այդ ուսման խորհրդաւորութիւնը ամենայն մարդու համար մեր ժամանակներում: Քննելով և ճանաչելով արարածքը, կարող է մարդս ճա-

նայէլ իւր աստուածեղէն Արարիչը։ Երկինքը պատմում Աստուծոյ փառքը և նորա ձեռքի արարածքը պատմում հաստատութիւնը (երկնակամարը)։ Իմաստուն սաղմոսասաց մարգարէի խօսքերը անխորհուրդ բառեր չեն, որ բերանով միայն կրկնելով նորանց, վերջանար գործը· ամենևին ոչ· գորա միտքը այն է, որ և Հայը աշխատէ քննել արարչագործութիւնը, աշխատէ ուսանել հասկանալ բնութեան բարբառը, բնութեան խօսուածքը, եթէ կամք ունի նա հասկանալ այն սուրբ կարգը, որի մէջ տեղումը դրել է նորան Աստուած։ Խելացնորը միայն սովոր է մտածել, թէ միշտ կանգնած էր նա բնութեան անքննելի գաղտնիքի առումը· նա միայն գանգատաւոր ու խնդացող է բնութեան խոր ծածկած էութեան վերայ։ Բայց բնական կարգը մի բանաւոր կարգ է, և բնութեան խորհուրդը չէ այս մեր աշխարհից դուրս մի անըմբռնելի բան։ Անատունը միայն մարմնաւոր աչքով նայումէ արարչագործութեան վերայ, մարդս քննելով վերահասու է լինում այն բանին, որով աշխարհը շէն ու հաստատ է պահվում իւր ներքին տնտեսութեան մէջ· մարդս հասկանումէ մշտնջենաւորը ժամանակաւորի մէջ, հոգին տիեղերքի մէջ։ Մարդուս գիտութիւնը է հաշտութիւն Աստուծոյ և աշխարհի մէջ, բնութեան և հոգու մէջ։ Այն բնական օրէնքը, որի հետ մարդը երկար ժամանակ թշնամական պատերազմ ունէր, հասկանումէ նա այժմ որպէս մի մշտնջենաւոր բան և շինումէ նորան իւր սեփական աղատ օրէնքը։

Հաշտութիւն պիտոյ է բերէ բնագիտութիւնը· այս է նորա երկրորդ վսեմ (բարձր) խնդիրը։ Մի ահագին ճեղքուած տեսանվումէ մարդկութեան բոլոր կերպարանագործութեան մէջ, ինչպէս մանաւորի բոլոր խնդրած ու փափագածի մէջ։ Մարդս սովորած լինելով ղգալ իւր անձը որպէս մի երկպատիկ էակ, տեսանումէ ամենայն բան ներհակութիւնների պատատոտութեան մէջ։ Ցիրաւի, մաքով գուշակումէ նա աշխարհի և կեանքի սկզբնական միութիւնը, բայց սա հեռի է նորանից, յետ մնալով կորուսեալ դրախտի ժամանակումը։ Գիտութեան հետ միասին յառաջացաւ երկպառակութիւնը։ Աշխարհը հրաժարվեցաւ Աստուծուց, մարդիկ բաժանվեցան լուսի և խաւարի հրեշտակներ, բնութիւնը բաժանվեցաւ երկինք և երկիր։ Այնուհետև սկսեցին ատել մեղաւոր մարմինը, որ այդպէս կարողանան աղատել աստուածեղէն հոգին իւր բանտի միջից· այնուհետև սկսեցին անիծել երկրաւոր հայրենիքը որպէս սատանայի բնակարան, որ այդպէս արժանաւոր կացուցանեն իւրեանց անձը գալոց կեանքի օթևանին։ Այնուհետև զարթնեցաւ այո և մի խաւարամիտ կասկածանք, որպէս թէ մարդկային ճարտարութիւնը և գիտութիւնը դժոխքի ծնունդք էին։ Մինչև այժմ ևս չէ լուսացել

խաղաղութեան օրը՝ դեռ ևս սաստիկ ներհակութիւնք ճնդքումեն մարդու սիրտը երկու կտոր։ Նոյն ինքն կրօնը և գիտութիւնը եղել են պատերազմի դաշտեր, ուր կռուած էին այս թշնամի ղօրութիւնքը։ Ահ տեղ է հասել բանը, որ, ինչպէս ասումէ Շիլլեր բանաստեղծը, մեք անբան բնութեան մէջ տեսանումենք միայն մի աւելի բաղդաւոր քոյր, որ չետ էր մնացել իւր մօր տանը, որից մեք մեծամտելով մեր ազատութեան վերայ, դուրս փախչելով հեռացել էինք։ Կարօտագին փափագով ցանկանումենք մեք չետ դառնալ դէպ ի նա, երբ որ սկսած էինք ղգալ մեր մէջ արուեստական կրթութեան տառապանքը և լսումենք մեր մօր սրտաշարժ ձայնը։ Ինչքան որ մեք էինք լոկ որդիք բնութեան, երջանիկ էինք և կատարեալապէս։ մեք դարձել ենք աղատ, բայց ղերկվել ենք երկուքից ևս։

Այսպէս ահա յորդորումէ մեղ մի գուշակող ղգայողութիւն, թէ միակ հոգի կենդանութեան և միութեան փչումէ տիեզերքի մէջ, թէ բոլորը կենդանի, բոլորը սուրբ, բոլորը աստուածեղէն է, և թէ չէր դա չարի փորձութիւնը, ինչպէս մի խաւար ծածկամտութիւն յօժար էր հաւատացնել մեղ։ Արդէն հազար տարիներով յառաջ, այս գուշակողական հոգին դրդել է մարդիկ դէպ ի այն հաշտողական մտածութիւնը, որ է, բնութեան մէջ որոնել հոգու ձևը և դգեստը։ Ճշմարիտ հնութեան տեսութիւնն է, որ Դրիադներով և Նիմֆաներով (յաւերժահարսունքով) կենդանացուցել էր ծառերը և վտակները։ այդ է բոլոր հին ժամանակների բանաստեղծական տեսութիւնը, որ շինել է բնութիւնը հոգեղէն կենդանութեան ղգալի պատկերներ։ Բայց պատկերների և ստուերների մէջ երջանիկ է միայն երևակայութիւնը։ դոքա օտար բաներ էին մտախոհութեան համար։ Մտախոհութիւնը տեսանումէ բնութեան մէջ այն հիմքը, որի մէջ արմատացած է հոգին, այն նիւթերը, որ ստանումէին հոգուցը պայծառակերպութիւն, այն ծիլը որի միջից կերպարանագործելով հասկանումէ նա ինքը իւր անձը։ Բայց ծիլը կրումէ իւր մէջ կատարելութիւն։ բնութիւնը հոգի է, բանականութիւն է։ Այս մի այնպիսի տեսութիւն է, որ ղուգակցութիւն է բերում կեանքի մէջ, որ կորուսեալ հայրենիքը չետ է բերում սրտի մէջ, այս է ճշմարիտ գիտութեան հայեացքը, որ չէ սպանում, չէ օտարացնում մարդը նոյն իսկ կեանքից, որ հոգեպէս ղուգահառնվումէ ընկերութեան բոլոր յարաբերութիւնների հետ։

Այս մի կենդանի և բանաւոր բնութիւն, որ շրջապատումէ մեղ, որի զաւակները ենք մեք։ միութիւնը նորա մէջ առաջնորդումէ մեղ դէպ ի միութիւն նորա հետ։

Այս միութիւնը գտանումենք մեք ձևերի բազմօրինակ լեզութեան

մէջ. պատճառ, ամէնայն կերպարանագործուելիւն հաւասար է. պայմանները միայն բաղմատեսակ են և գոյացնումեն ձևերի բաղմերիևակուելիւնը: Ամէնայն կերպարանագործուելիւն մի պատերազմ է ներհակուելենների մէջ, սեռերի, ձգտողուելենների մէջ. նա սկսանումէ սաղմից որ է մի հիւղէ, մի խորշիկ, մի ձու. նա վերջանումէ յառաջացնելով պտուղը որ է մի բիւրեղ (կրիստալլ), մի սերմ, մի երեխայ: Եւ աշխարհամարմինը սկսանումէ իւր ծնունդը աշխարհաձուի, օդագունդի մէջ: Եւ մարդուս կամքը ստանումէ իւր կատարելուելիւնը նորա գործերի և արարքի մէջ:

Այս միութիւնը գտանումենք մեք արարիչ ղօրուելենների լեուելեան մէջ: Մի հատ սկզբնական ղօրուելիւն շարժումէ բոլոր տիեզերքը, և երևոյթների բաղմերիևակուելիւնը միայն պատճառ է տուել մեզ հնարաստեղծելու շատ ղօրուելիւններ: Նիւթը ղօրուելիւն է, և ղօրուելիւնը կեանք է, բայց կեանքը մի է: Ծանրուելիւնը քարշումէ քարը դեպ ի երկիր և կապումէ մոլորակը իւր արեգակի հետ: Ջերմուելիւնը, լոյսը, մագնիսականուելիւնը և էլեքտրականուելիւնը յառաջացնումեն քարի քիմիական (բաղադրական) կեանքը, ինչպես բուսականների և շնչաւորների օրգանական (գործարանաւոր) կեանքը: Դոքա ներգործումեն որպես ամենահետաւոր երկնային տարածուելեններին, նոյնպես և մեր ատմոսֆերայի (օդապատի) մէջ: Մենք ինքներս կարող չենք ոչ մի անդամ շարժել, ոչ մի մտածուելիւն ըմբռնել, առանց ձայն տալու, որ այդ ղօրուելիւնքը արթնանային և գործ կատարէին: Մեր հոգու ղօրուելիւնքը կրումէին միայն այլ անուններ, բայց իսկուելեամբ մի են:

Մենք գտանումենք այս միութիւնը բնուելեան օրէնքների մէջ: օրէնքը է միութիւն, կարգ և բանականուելիւն: Անբանուելիւնը միայն գիտէ կամապաշտուելիւն և բռնաւորուելիւն: Օրէնքը է բոլորի ընդհանուր և աղատ կամքը, և այդ պատճառով մշտնջենաւոր և սուրբ է: Թոյղ նիւթերը փոփոխվին, մարմինքը շարժվին, ղօրուելիւնքը պտտրազմեն. թոյղ բուսականքը և շնչաւորքը գոյանան ու եղծանվին, մտածուելիւնքը գան ու գնան, բայց օրէնքը կայ և մնումէ հաղարաւոր տարիների մէջ այնպես, ինչպես տիեզերքի անչափելի տարածուելեան մէջ: Սա տալիս է մեզ երաշխաւորուելիւն մեր ղրուելեան տևողականուելենի, մեր ներգործականուելեան յաջողուելենի մասին: Որպիսի վստահուելեամբ մեք մուրճի ղարկողուելիւնը կառավարումենք և բահը խրումենք հողի մէջ, նոյնպիսի ստուգուելեամբ աստեղաբաշխը հաշվումէ արեգակի գալոց խաւարմունքը և երբէք չտեսած մոլորակների շաւիղքը: Բայց մեք ենք արդեօք, որ յայտնի ենք կացուցանումէ բնուելեան օրէնքները և մեր չափով չափումենք նորա մշտնջենաւորուելիւնը. մի

Թէ չէր դա մեր յատուկ Հոգին, որ մեզ վերստին գտանումենք բնութեան կեանքի մէջ. մեր սրտի ներքին օրէնքը, որ հաստատումէ արտաքին (դուրսում եղած) օրէնքները։ Այսպէս ահա բնութիւնը մի է իւր մէջ և մի է մեր հետ։

Մի ժամանակ համարվումէր մարդուս բան ու գործը պայծառակերպել բնութիւնը. բայց թէ ինչքան սակաւ յօժար էր մարդս կատարել այդ բանը, ցուցանումեն Ցունաստանի այրած տեղերը, ստուերաշունչ Ասորեստանը, անտառաշէն Սպանիան։ Այժմ մարդուս բան ու գործը դարձել է մի այլ բան, այսինքն իւր անձը պայծառակերպել բնութեան ձեռքով։ Նա զննել է երկնքի և երկրի օրէնքները. թող ապա դորանից խորհրդաւոր կացուցանէ և իւր կեանքի մէջ. նա գտանումէ իւր անձը դուրսումը, թող գտանէ իւր մէջ և աշխարհը։ Թող լինի նա աշխարհը փոքրիկ չափով, մի միկրոկոսմոս։ Նոյն ինքն բնութիւնը ուսուցանումէ նորան այդ բանը, ամենայն իրողութեան մէջ ցուցանելով նորան բոլորը, թէ ամենափոքրի և թէ ամենամեծի մէջ։ Նա գտանումէ բոլոր բնութիւնը և թզկաբոյսի և ահագին կաղնու մէջ, ինֆուզօրեան փոքրիկ ժժմանկների և թէ վաղաժամանակեայ հսկայամարմին շնչաւորների մէջ, աւաղահատի և թէ արեգակնագունդի մէջ։ Նա գտանումէ բնութիւնը իւր օթևանի սովորական շրջակայքումը և թէ Ալպեան սահմանի հրաշափառ աշխարհումը, վաստակասիրութեան ամենապարզ գործողութեանների և թէ ատմոսֆերայի ահարկու տեսիլների մէջ։ Նա գտանումէ նորան իւր մարմնի կենսական տեսիլների մէջ և թէ երկրագունդի ւրոթորկալից կերպարանագործութեան անցքերի մէջ, իւր հայրենական երկրի և Արևադարձերի բնացոյց պատկերագիրների մէջ, ճախինների, տղմի (ցեխ) և թէ ովկիանոսի ալիքների մէջ, երեխայի խաղալիքների և թէ աշխարհների շրջանաւոր կաքաւողութեան մէջ։ Թող մարդը և իւր մէջ յատկապէս ճանաչէ բոլորը, թող նմանագործէ իւր մէջ բնութեան ընթացքը, այնուհետև կը լինի նա այնպէս աղատ, ինչպէս բնութիւնը։

Այց ով որ մեր սիրելի Հայ մարդերից կամենումէ մանակից լինել այն պարգևներին որ ունի տալու բնագիտութիւնը, այն բանական Հայը որ կամենումէ լուսաւորութիւն, խաղաղութիւն, պայծառակերպութիւն ստանալ բնութենից, թող հետևի մեզ ոտք կոխելով այն սեամի վերայ, որից կանխակալ (յառաջուց մտքումը դրած) կարծիք և սուտ կասկածանք մինչև այժմ հեռի են պահել նորան. թող նա նստի այն աշակերտական տախտակի վերայ, որից չունի պատճառ ամաչելու ոչ մանուկը և ոչ հասակաւորը. դա մեր ամենեցուն պատշաճաւոր տեղն է, ամենայն սեռի, թէ տղամարդու և թէ կնամարդու և ամենայն ծնա-

ծի, մինչև մեր երեկոյեան արևի մոռանելը։ Մի քաղցր ուսուցիչ սպասումէ նորան. նա չէ գլխացաւութիւն տալու նորան մաթեմատիքական ձևերով, չէ խառնաշփոթելու նորան գաղտնածածուկ հայեցողութիւններով. նա ամեն օր բանալու է նորա առաջև մարմինների և հոգիների կեանքի ամենախոր գաղտնիքը։ Բայց արեցէք ձեր աչքերը. դուք այս ուսումնարանի մէջ էք, այս աղատ բնութեան մէջ, Արարչագործութեան սուրբ տաճարի մէջ։

Մարդավայելուչ կրթութիւն, եթէ առնուէք այս խօսքը նորա շատ ալնիւ մտքովը, անապաշտութեան և կանխակալ մոլորութենների կործանութիւն գիտութեան լուսովը, ժողովրդի կեանքը նորա շատ ցած և արհամարհ շրջաններումը ևս, բարձրացնել և ալնուացնել վերահասու կացուցանելով մեծին փոքրի մէջ. սրբել բնութիւնը հոգեղէն նկատողութեան նուիրանքով, այս է ահա պաշտօնը որ պիտոյ է մեզ լցուցանել. այս է պաշտօնը և բնագիտութեան օրին տալու է հիւսիսափայլ օրագիրը իւր թերթերի չափաւոր բաժինը։

Ս. Նազարեանց.

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ.

Այո, հոգով չափ ցանկալի էր մեզ, մեր գրչի միշնորդութեամբ, աւետաւոր լուրեր տալ մեր աղգին, բայց մի չար բաղդով այս րոպէիս հարկադրված ենք մեր գրիչը շաղախել արտասուքով. պատճառ, պիտոյ է մեզ այսօր բօթաբեր լինել մի առաքինի հայաշնեայ երիտասարդի վաղահաս վախճանի մասին, որի վերայ, անտարակոյս, սուգ առնելու է ա-

մենայն, իւր աղգի օգտին և յառաջադիմութեան ցանկացող, Հայ մարդը։ Շատ չունի Հայաստանը այսպիսի առաքինիք իւր զաւակների մէջ, և այս է պատճառը, որ առաւել զգալի է անկեղծ սրտերին, եթէ փոքրանուամբ և այդ սակաւ եղած ընտիրների թիւը։

Այս առաքինի երիտասարդը, որ Թռաւ գնաց մեզանից, էր աղնուատոհմ, Գէորգ Նազարեան Գեղամեանցը։ Կարծումենք, ախորժ կը լինի մեր բարեմիտ Հայերին մի քանի տեղեկութիւնք ստանալ դորա կեանքի հանգամանքների մասին, որ Համառօտիւ դնումենք այս տեղ, ինչպէս յայտնի են դոքա նոյն իսկ հանդուցեալոյ բերանից լսվելով։

Վաղաքով Երևանցի էր նա, որդի աղնուատոհմ Նազարի Գեղամեանց, որ իւր նախահարց ժառանգութեամբ տիրումէր Գեղամայ ծովակին, մինչ դեռ Հայաստանը գտանվումէր Պարսից իշխանութեան տակ։ Գէորգ Գեղամեանցը, ինչպէս վկայումէ նորա ծննդաբանական թուղթը, կայսերական Համալսարանի դիւանատան մէջ, ծնած է 1831 թուականին։

Իւր սկզբնական կրթութիւնը ստացաւ նա Երևան քաղաքում, երևելի Հայկազն Խաչատուր Ապովեանի [1]) ձեռքով, որ, 1835 թուա-

---

[1]) Այս արժանաւոր, մեծ ազգասէր Հայը, որդի իշխանապատիւ Ապովի Վիբապեան, Հանաքեռ գիւղից, ուրարակիր սարկաւագ Էջմիածնու վանքի Եփրեմ Կաթողիկոսի օրերումը, իւր առաջին դաստիարակութենից յետոյ Էջմիածնու խցերի մէջ, իւր հոգաբարձու Աստոն եպիսկոպոսի հետ գալիս է Հաղպատ։ Այս տեղից տեղափոխվելով յետոյ դէպ ի Թիֆլիզ յանձնվումէ Ղարաբաղցի Պօղոս վարդապետին, որ սկսեալ մօտ 1820 թուական, Թիֆլիզի Յափխաղի վանքումը իւր խցի մէջ ուսուցանումէր աշակերտներ։ Ապովեանը, ինչպէս որ միւս հայազգի պատանեակքը, որոց մինն էր և այս բառերի գրողը, աշխատուէր օր ու ցերեկ գլուխ ջարդելով Հանճեանի քերականութեան, Ադոնց Սահմանոսի Ճարտասանութեան և Թեսաւրոսի վերայ։ Պօղոս վարդապետը կարող էր միայն մեքենաբար ուսուցանել, առանց կենդանացնելու իւր դասատուութիւնքը հին, մեռեալ Հայկաբանութեան մասին, որ միայնակ ուսանելիքն էր նորա երկաթի վարժապետական գաւազանի տակ. և պիտոյ է ասել, որ այդ վարժապետը աւելի ծեծ քան թէ ուսումն է տուել իւր աշակերտներին. այսպէս էր այն ժամանակվի հայկական ուսումն, և այս բանի մէջ մեղաւոր չէ Պօղոս վարդապետը, այլ նորա կոպիտ ու խաւար ժամանակը. և անյաղ օրերը չափել ու կշռել մեր այժմեան — փառք Աստուծոյ — յառաջադէմ և բանական օրերի կշռով, է հարկէ անտեղի բան է։ 1823 թուականին Ներսիսեան դպրոցը բացվելով և Մոսկվայից հրաւիրված Յարութիւն Աղամդարեանց քահանայի գործակցութեամբ փոխվելով Հայոց զաւակների դաստիարակութեան եղանակը Թիֆլիզի մէջ, Պարոն Ապովեանը և նորա աշակերտակիցքս տեղափոխվեցանք նորաշէն ուսումնարանի մէջ, ուր բաց ի մի կոտ Հայերէնից կորելի էր ուսանել փոքր ի շատե ռուսերէն, պարսկերէն, վերջումը և ֆրանսիարէն, երբ որ Յակոբ Շահանեան Քրպետը հոգալարձութեամբ Ներսէս վիճակաւոր արքեպիսկոպոսի բերել էր տրված փարիզից։ Ապովեանը ուսանելով այս տեղ մինչև 1828 թ. և լինելով չափահաս աշակերտներից մինը գուցե և աւելի մտախոհը իւր ընկերների մէջ, նշանաւոր էր մանաւանդ թէ իւր շատ ջրաւոր յիշողութեամբ։ Ապովեանը մի մեծ ուսումն դուրս չը տարաւ Ներսիսեան ուսումնարանից (ինչպէս ոչ ոք մեզանից), և անկարելի էր այդ բանը այն վայր ի վերոյ, չքաւոր ուսումնատուութեան մէջ. բայց պիտոյ է ասել

կանին վերադարձած Դօրպատեան ճոխ և պայծառ Համալսարանից, աշխատուէր, որքան հնար ունէր, վառել Հայերի սրտի մէջ լուսաւորութեան և ուսման եռանդը, որով, ինչպէս ամենայն աղնուամիտ բանագէտ մարդ, յոյս ունէր ջերմացնել այն սառնութիւնը և պաղութիւնը, որով պաղած էին Հայերը առ հասարակ։ Հանդուցեալը քանի մի տարի ուսանելով յիշեալ Աբովեանի մօտ, Հայերէն, ռուսերէն, դերմաներէն և թուաբանութիւն, և մեծ յոյսեր տալով իւր ապագայ յառաջադիմութենից, այնպէս դրաւել էր իւր դաստիարակի աշխոյժ և կրակոտ աղգասէր սիրտը, որ Ապովեանը աշխատուէր նորա վերայ, որպէս իւր հարազատ զաւակի վերայ։

1846 Թուականին, մինչ դեռ Ներսես Արքեպիսկոպոսը, ստանալով կաթողիկոսական գաւազան, վերադառնում էր Թեսսարաբիայից դէպ ի Էջմիածին, Ապովեանը իւր յառաջադէմ աշակերտների հետ միասին, որոնց մէջ կար և Հանդուցեալը, Երևանից մի իջևան տեղ յառաջ գնաց կաթուղիկոսին։ Սա Հանդիպեցաւ Ապովեանին և խօսելով նորա ուսումնական գործունէութեան վերայ, հարց էր արել, թէ ունի՞ ար-

---

արդարութեամբ, որ մի քանի կենդանի սերմեր, մի աղնիւ ձգտողութիւն դեպ ի ուսումն յառաջացան այդ ուսումնարանից մի քանի մանաւորների մէջ։ Եւ Ապովեանը հրաժարվելով Թիֆլիզից դեպ ի Էջմիածին, տարաւ իւր սրտի մէջ մի վառ ուսումնասիրութեան կրակ. ինչքան սակաւ կարողացել էր ուսումնարանը տալ նորան, այնքան ևս կարօտ ու տաճած սրտով դուրս գնաց նա։ Խորհրդաւոր դրութիւն։ Ապովեանի ուսումնասիրութեան կրակը շատով կը շիջաներ արդարև, եթէ մնայած լինէր ասիական խեղդանիւթեայ ատմոսֆերայի (օդապատի) մէջ. բայց նորա բաղդը այլապէս էր կամեցած։ Եւ Ապովեանը քնած չը մնաց, երբ որ բաղդը եկել էր զարկելու նորա դուռը։ Դօրպատեան Համալսարանի ուսուցչապետ Պարրոտի գալուստը Հայաստան, 1829 Թուականին, բաց ի նորա ուսումնական ձանապարհորդութեան նպատակից, որ էր քննել և յայտնի կացուցանել Մասիս սարի սրպխութիւնքը և դիտութեան արժանի յատկութիւնքը, շատ արժանայիշատակ իրողութիւն էր, եթէ մեր դնենք դորա հետևանքներին մեր Հայոց լուսաւորութեան համար։ Պարրօտը լինելով Էջմիածնի հողի վերայ, ծանօթանում Ապովեանի հետ և նկատելով նորա խոհականութիւնը, ընտրում նորան որպէս հայ տեղացի, իւր դեպ ի Մասիս սարի կատարը բարձրանալու ձանապարհորդակից։ Ապովեանը մտնելով Եւրոպացի բանագէտ օտարականին, և այդպէս պողպատը զարկվելով ու սրորվելով գայլախազի վերայ, դուրս է թռչում կայծը, որ պիտոյ էր միայն կերակուր տալով անուշացնել։ Ապովեանը յայտնում Պարրօտին, թէ կամի աշակերտվիլ Եւրոպական ուսման, բայց չունի դորա հարկաւոր նիւթական ձանապարհը։ Օտարական Պարրօտը, բայց մարդկութեան ընտանի ու բարեկամ Պարրօտը, յանձնառու է լինում հոգալ Ապովեանի դաստիարակութեան ծախքը Դօրպատի մէջ. և վերադառնալով դեպ ի Պետերբուրգ, բարեխօս է լինում լուսաւորութեան նախարար պայծառատեսյ Ուվարովի առաջև Ապովեանի համար, և թագաւորութեան գանձարանից տոնում Ապովեանը երեք տարու ապրուստ և ձանապարհի ծախք, որ գայ ուսանի Դօրպատում և վերադառնայ դեպ ի իւր հայրենիքը։ Ճշմարիտ, Ապովեանի ուսումնասիրութեան հասակը անցած էր և դժուար էր նորան ամենևին փոխարինել իւր կորուստը. բայց պիտոյ է ասել, թէ նորա երեք տարու կեցութիւնը, ուսումը և նկատողութիւնքը Դօրպատեան գիտուն և բարեմիտ մարդերի մէջ, մի նոր խա-

դեօք յառաջադէմ աշակերտներ· երբ լսել էր Ապովեանի ստորասական պատասխանը այդ մասին, խոստացել էր կաթողիկոսը այդ յառաջադէմ աշակերտներից տասն տղայ ուղարկել Բեռլին, որ այն տեղ պարապէին դանազան ուսման ճիւղերի։ Ապովեանի ուրախութիւնը չափով չէր չափվում։

Ընդամէն այն բանի վերայով մի քանի ամիսներ· Ապովեանը չէր դադարում ամենայն խնամիտարութեամբ կրթել և վարժել իւր աշակերտքը գերմանական լեզուի մէջ, քարոզելով նոցա, թէ այդ լեզուն մանաւանդ լինելու էր նոցա համար բանալի մի այնպիսի լուսաւոր տաճարի, որի լոյսը բաւական էր ցրուել Հայաստանի ասիական թանձր խաւարը։

Ընդամէնը սորա վերայ մի քանի ամիս· և կաթողիկոսը արդէն օծված ու նստած լինելով հայրապետական աթոռը, Ապովեանը դիմում դեպ ի նա խնդրելով որոշել ժամանակը, երբ կամք էր վեհափառ տիրոջը աշակերտքը Բեռլին ուղարկելու, որպէս զի Ապովեանը կարողանայ այդ միջոցին պատրաստել իւր աշակերտքը։ Կաթողիկոսը ցոյց է տալիս մեծ յօժարութիւն, դովում և օրհնում Ապովեանին և խոստանում կատարել նորա խնդիրը, մանաւանդ թէ իւր հայրապետական խոստումնքը, միայն թէ փոքր ինչ թեթևանար իւր գործերից։ Ապովեանը

ցական միրութեան աւազան դարձաւ նորա հոգու համար, և վերստին ծնաւ նորան։ Այն ընդհանուր կրթութիւնը, այն ազգասիրական հոգին, այն անօրինակ սէրը դեպ ի հայոց մանկունքը, այն առաքինի հոգին, որ նա դուրս տարաւ իւր հետ Դօրպատից, 1835 ին վերադառնալով դեպ ի Հայաստան, մի այնպիսի վաստակ էր, որ կարող էր միայն վաստակել Ապովեանի պէս ազնիւ տղամարդը։ Ուսումնական լազմահայեաց կրթութիւն չը ստացաւ նա Դօրպատումը, բայց ուսաւ ճանաչել իւր անձը, սիրել իւր ազգը և աշխատել նորա զաւակների կրթութեան վերայ, որպէս քաջ դաստիարակ, որպէս սիրող ուսուցիչ, որպէս քաղցր խնամակալու հայր և բարեկամ իւր աշակերտների համար։ Ափսոս միայն, որ մեր ազգը չը կարողացաւ գնահատել մի այդպիսի արժանաւոր, չատ պիտանի մարդ. ցաւելի, որ ազգի իշխանքը, մանաւանդ թէ հոգևորների կարգից, որովհետև դոցա վերայ միշտ աւելի մեծ պատասխանատուութիւն կայ, քան որուամ աւելի մեծ են և դոցա իրաւունքը, պարզ ասեմ, չատ ցաւելի է, որ Ներսես Կաթողիկոսի պէս մարդը, չը կարողացաւ կամ թէ չը կամեցաւ այնպիսի դրութիւն տալ Ապովեանին, որ սա իւր ազգին պիտանի կացուցանէր իւր անձը բոլորսանան չափով, այնքան, ինչքան կարող էր։ Պատուական Ապովեանը Թիֆլիզից Երևան, Երևանից Թիֆլիզ տարուբերվելով, անվերջ հալածանքի և տհաճութիւնների մէջ, հուսկ յետոյ անձնատուր է լինում մի խաւար յուսահատութեան, և յանկարծ չքանում իւր ընտանիքի և բարեկամների միջից, բայց թէ ուր, ոչ ոք չը գիտէ մինչև այժմ։ Մխո գնելով նորա տրտում և յուսահատուր երդերին, որ մեր բարեկամներից մինը ուղարկել էր ինձ Թիֆլիզից, պիտոյ է եզրափակել, որ Ապովեանը մի խաւար րոպէի մէջ մահու է տուել իւր անձը։ Հայոց հելիկոնի վերայ դաբնիք չեն լուսանում արժանի դլխի համար, բայց փոյթ չէ· Ապովեանը, ազգի մեծ բարերարը, թէև վաղուց արդէն մոռացած իւր հայրենիքումը, այնու ամենայնիւ փառաւորվում և պիտի միշտ փառաւորվի արդարադատ Եւրոպական մարդկութեան պատմագրքի մէջ։

Ծան։ Հրատարակողի կողմից։

քաջալերութիւն ստանալով այն կրկին անգամ խոստմունքից, ևս առաւել լարում իւր և աշակերտների զօրութիւնքը, մեծապէս աշխատելով և աշխատեցնելով նորանց գերմանական լեզուի վերայ։

Ընդունում համարեա թէ մի տարի ժամանակ։ Ապովեանը, մնանալով որպէս աշխոյժ և ջերմ բնաւորութեամբ մարդ, վերջապէս յուսահատվում տեսանելով իւր աշակերտների անորոշ վիճակը։ Հաւանում էջմիածին գնալ Երևանից, կաթողիկոսի վճռական խօսքը լսելու համար։

Բայց ով վատաբաղդութեան ազդիս։ կաթողիկոսը ժամանակ չունի մտածելու աղգային լուսաւորութեան վերայ, նորա ձեռքը պարապած չէ զանազան վիճակային գործերի մասին իւր յատուկ ձեռքով կնդրակներ գրելուց այս և այն գործակալին։ վիհսահատ տերը ժամանակ չունի ուշ և միտք դարձուցանել Հայոց աղգի նախապատիւ հոգալի օգտի վերայ, նորա թանգագին ղաւակների իմայական բարօրութեան վերայ։

Վրաստանի և Հաշտարխանի Թեոնակալ Եպրապետ և Սերովբէ արքեպիսկոպոսների հետ յարուցել էր կաթողիկոսը անվերջանալի վէճ և խռովութիւն, որ ոչինչ խորհուրդ չունէին վերաբերութեամբ գէպ ի Հայոց աղգային օգուտը և եկեղեցու պայծառութիւնը [1]։

Այս իրողութիւնների մէջ ահա ժամանում Ապովեանը էջմիածին, բայց ինչպէս պատմումեր հանգուցեալը, Ապովեանը մինչև փարաքար գնդը, որ գտանվում Երևանի և էջմիածնի մէջ, ունեցել է սրտումը մի յայտնութեան յոյս, իսկ որքան մօտենում Մայր-վանքին, այնքան ևս զօրանում երկմտութիւնը նորա մէջ, նորա հոգին գուշակում

---

[1]) Գիտենք, որ, մերկապարանոց կացուցանելով այս իրողութիւնքը, պիտոյ է համարվինք աղգային ամենի մերկացուցիչ. պիտոյ է վատամարդիկ դառնանք մի քանի նեղսիրտ, պղտոր տեսութեամբ պարոններէն առաջև, որ ծածկելով աղգի պակասութիւնքը, խառնափնդորութիւնն ամենայն դատողութիւնը, յանցանքը որպէս առաքինութիւն ձևացնելով և առաքինութիւնը որպէս յանցանք. բայց մեք որպէս ուսումն և խրատ ամենեցիս համար, պարտական ենք տեղեկանալ մեր բարեկական ցաւերին ու խոցերին, և այդպէս վերքարշել մի վարագոյր, որի տակ ամենայն ղգուշութեամբ աշխատումէին տգէտ մարդիկ թագուցանել ճշմարտութիւնը։ Ցայտնի է մեզ լատինական առածը, ,,Մեռածների վերայ կամ լաւ, կամ ոչինչ խօսել,,. բայց մեր դատաստանի առաջև աւելի յարդ ու արժանաւորութիւն ունի աղգի լուսն օգուտը և նորա յառաջադիմութեան չարժառիթքը։ Խնդրումենք այդ պարոններից, որ բամբասելու էին մեզ, ձեռքը սրտի վերայ դրած վկայել մեր առաջին, և խղճմտանքով, և առանց կողմնապահութեան դատաստան առնել. բայց ուշաբարձութիւնը սովոր է հրաժարվիլ ամենայն պայմանից. այդպիսի վատաբաղդ դիպուածում ևս մեր հոգին հանգարտ է և խղճմտանքը հանդիստ։ Մեք գիտենք, որ ապագայքը, որ կարող էին տալն աչքով նայել անցած գնացած իրողութիւնների վերայ, և ամենայն բանի տալ իւր արժանի վարձը, դնահատելու են մեր խօսքերը և արդարացնելու մեր անձը. վոյթ չէ, որ այն ժամանակ դրած կը լինինք հոգի տակին յաւիտենական քնով հանգստացած։

դալոց անյաջողութիւնը։ Շատ մեծ է անկեղծ և առաքինի հոգիների բնական աղմկոտութիւնը։

Այս անգամ շատ տառն կերպով ընդունուեմ Նորան Կաթողիկոսը, որպէս երբեք չէր ընդունած. և Ապովեանի հարցմունքին, թէ վեհափառ տէր, ինչպէս է ձեր կամեցողութիւնը ուղարկելի աշակերտների մասին. պատասխանուեմ Կաթողիկոսը. «օրհնած, ինչ անհանգիստ մարդ ես. քեզ մի բան ասացին, այլևս ձեռք չես վեր առնում դու»։ Այս տխուր խորհրդաւոր խօսքերը Կաթողիկոսի բերանից, որպէս թէ մուրճի զարկով մի վայրկեանի մէջ փորեցին ու քանդեցին Ապովեանի յոյսերի հիմքը, որոնց աւերակը լուացվեցան յետոյ առաքինի հոգու աղջամուղջային արտասուքի հեղեղով։

«Վարժապետ, ինչ լուր, ինչ հաճաւ», հանդէպ են դուրս գալիս աշակերտքը, որոնց մէջ գտանվումէր մեր հանգուցեալը. այս անմեղ մանուկների սիրտ կտրատող հարցմունքի պատասխանը լինում Ապովեանի դէմքի տխուր գծագրութիւնը և արտասուքը, որ փայլում են նորա աչքերում։ Այն օրը սուգի օր է եղած և վարժապետի և աշակերտների համար։ Միւս օրից արդէն ուսման ընթացքը ընդունում այլ ուղղութիւն, «ռուսերէն, երեխայք, ռուսերէն», ասում այնուհետև Ապովեանը. «դուք ինքներդ պիտի բանաք ձեր ճանապարհը»։

Այդ պայմանների մէջ պատրաստվում մեր հանգուցեալը մտանել Թիֆլիզի արքունական ճեմարանը (գիմնազիա)։ Բայց այս բանի մէջ հանգուցեալ Գեղամեանցի հօրեղբայրը, ինչպէս լսած ենք նորա բերանից, շատ ընդդիմութիւն է ցոյց տալիս։ Տիկին Գեղամեանցը, այսինքն հանգուցեալը մայրը, չունէր այնքան արծաթ, որ հոգար իւր որդու ընակութեան, կերակրի, զգեստի, և այլ հարկաւոր պիտոյքը։ Ինչ ճար գտանել սորա համար. Ապովեանցը տեսանում ուսման հանդիսում մեծ յառաջադիմութիւն հանգուցեալ մէջ. նորա ժրաջան աշխատութիւնը շատ բան էր խոստանում ապագայումը։

Մի կողմից արծաթի պակասութիւնը, միւս կողմից հանգուցեալ հօրեղբօր ընդդիմութիւնը արգելք էին լինում պատանի Գեղամեանցի Թիֆլիս ուղարկվելուն։ Նորա հօրեղբայրը ստիպանքով առել էր նորա մօր հասանութիւնը, որ նորա որդին ծառայէ քաղաքական պօլիցիայի մէջ, որպէս պարզապէր. և ահա մանուկ Գեղամեանցը երևում պօլիցիայի մէջ։

Այդ այս ծառայութիւնը չէր կարող գովացնել նորա հոգեկան ծարաւը. այս պատճառով, մօր գիտութեամբ և Ապովեանի օգնականութեամբ, իւր հօրեղբօրից թաքուն, ուղարկվեցաւ Թիֆլիզ, ուր Ապովեանի բարեխօսական նամակի հիման վերայ, ընդունեց իւր ինա-

մարկուԹեան տակ, այժմ Հանգուցեալ ԴաւիԹ Թամամշեանը։ Այս տեղ մնաւ նա դաւառական ճեմարանը, ուր ամենայն ժրաջանուԹեամբ աշխատելով դրաւեց բոլոր վարժապետների և կառավարիչների ուշադրուԹիւնը։ Աւարտելով իւր ուսման ընԹացքը ճեմարանում, նա չգադարեց այն լուսաւորուԹեան աստիճանի վերայ, ուր Հասել էր նորան ճեմարանը, այլ ցանկանալով աւելի ևս յառաջ գնալ իւր ասպարէզի մէջ, մեքենեց որոնել իւր Համար վերին դպրոցի բազմահայեաց կրԹուԹիւն։ Այս խորհրդով ուղարկվեցաւ նա վերոյիշեալ Թամամշեանի հոգաբարձուԹեամբ դէպ ի Պետերբուրգ, այժմ Հանգուցեալ Ագաթոն Ակիմեանցի վերայ։ Հանգուցեալս խորհուրդը էր, նմանող լինելով իւր գաստիարակին, Դորպատ գնալ և այն տեղ կատարել իւր ուսման ընԹացքը, բայց զանազան պատճառներ Հարկադրեցին նորան դառնալ Մոսկվա, և այն տեղ ուսանել Կովկասեան կօմիտեի ծախքով։

Ա.յսպիսի Հանգամանքներով, 1851 ԹուականԹ Օգոստոս ամսուն, քսան տարեկան Հասակում մնաւ Հանգուցեալը Մոսկվայի կայսերական Համալսարանը, որպէս ուսանող բժշկականուԹեան։ Բժշկական ֆակուլտետի Դեկան և ուսուցչապետ Անքէ վարդապետը խնդրն սիրեց նորան, միտ դնելով այն բանագիտուԹեանը, որ ցոյց տուեց Հանգուցեալը ընդունելուԹեան Հարցաւորձի մէջ։

Տկար կաղմուածքի վիճակված էր առՀասարակ մեր բարեկամը, և արդեօք անընդՀատ աշխատուԹենից, ԹէԹ Մոսկվայի ցուրտ եղանակի ազդեցուԹենից, որին անսովոր են առՀասարակ Հարաւի բնակիչքը, Հանգուցեալը սաստիկ տկարացաւ իւր ուսումնական ասպարէզի առաջին ընԹացքում, այնպէս, որ անՀնար եղաւ նորան, տարու վերջումը ևնԹարկվել ՀարցաւորձուԹեան, տեղափոխ լինելու դէպ ի երկրորդ ուսումնակարգը։ Ամառը, քաղաքից դուրս, բնակվելով և զանազան բժշկական Հնարներ գործ դնելով, բաւական ամրացաւ իւր առողջուԹիւնը այնքան, որ կարողացաւ աւարտել իւր ուսման ամբողջ ընԹացքը անցեալ 1857 ԹուականԹ Մայիս ամսում։

Նորա ազգասէր և միշտ վառ Հոգին, Թէև շատ պարապած լինէր առանձին գործերով, քաղցր ՀամակուԹեամբ սովոր էր մտածել ազատ րոպէների մէջ իւր ազգի վերայ։ դեռ ևս ուսման ժամանակին ԹարգմանեԹ էր գերմանական լեզուից Հօֆմանի «Մաքս, կամ կարիքն ամենամեծ, օգնուԹիւնը ամենամերձ» անունով դեղեցիկ գործը մեր ազգային կենդանի լեզուով։ Աւարտելով այդ աշխատուԹիւնը, սպասում էր մի յարմար ժամանակի, տալ նորան երկու խորհրդով։ առաջինը որ ժամանգուԹիւն դարձուցանէ այդ բարոյապես արժանի գործը և Հայ մարդ-

կութեան, երկրորդ, որ նուիրելով նորան հանգուցեալ Դաւիթ Թամամշեանի, իւր բարերարի յիշատակին, փոքր ի շատէ պարտավճար լինի նորա հոգու առաջև [1]։

Նայց այս երկրորդական պարագումնքը երբէք արդելք չեղան նորա յառաջադիմութեանը, իւր առանձին բժշկական գիտութեան մէջ։ Նա սրտի յօժարութեամբ ուսումնասիրելով իւր գիտելի առարկայքը, միշտ յայտնի էր համալսարանի մէջ, որպէս գովելի և ժրաջան աշակերտ։ Նա լաւ գիտէր, թէ մրքան մեծ և ծանրակշիռ է իւր կոչումը, բժիշկ լինել, որին մարդիկ պիտոյ է մի օր հաւատային իւրեանց կեանքը, իւրեանց ընտանիքը։ Այս բարոյական և փիլիսոփայական մտածութիւնքը մանաւանդ մեծ ազդեցութիւն ունէին նորա սրտի և հոգու վերայ։ այս էր պատճառը, որ չը խնայելով իւր թոյլ առողջութիւնը, ղօհեց միանգամայն և իւր կեանքը։ Գեղեցիկ խօսեց Պ։ Նաղարեանց վարդապետը իւր գամբանական ճառի մէջ։ «Դորա համար արևը մնայուն է մտել, գրքի մէջ նստած, քրտնելով, ուսանելով, նկատելով։ և առաւօտու լոյսը բացվել է դորա վերայ, նոյնպէս գիրքը ձեռքին, պարապելով իւր ուսմանը, քունը հատանելով»։ Այս օրինակ ահա պարապելով ամբողջ վեց տարի, երբ աւարտումեր իւր ուսման ընթացքը, միտք ուներ պատրաստվիլ բժշկականութեան վարդապետի աստիճան ստանալու համար։ Շատ անգամ խօսումեր մեր հետ այդ մասին, դեռ ևս իւր ուսման ընթացքը աւարտելուց մի տարի յառաջ, երբ բնակվումէինք տունը միասին կոմս Շերեմետեվի գիւղում։ բայց մեք տեսանելով նորա առողջութեան թուլութիւնը, հեռացնումէինք նորան այդ խորհրդից։ Բայց նորա վառ հոգին և աղնիւ ձգտողութիւնքը չը կամէին ներել, որ իւր մարմնի նիւթական ղօրութեան նուազութիւնը արդելք լիներ գլուխ բերելու այն պիտաւորութիւնը, որ յղացել էր նորա անխիւթ հոգին։ Նա լաւ ճանաչելով իւր անձը բարոյապէս, հաւատի էր, թէ այնքան բազմակողմանի գիտութեամբ կարող էր հանդէս դուրս գալ այդ տարժանելի քննութեան պարտիքը հատուցանելու։ Այս խորհրդի վերայ դիմեց նա դէպ ի Ֆակուլտէտի Դեկան և ուսուցչապետ Անքէ վարդապետը։ բայց սա շատ սիրելով հանգուցեալը, բարեմտաբար խորհուրդ տուեց նորան մի քանի ժամանակ յետ դնել այդ դիտաւորութեան իրագործութիւնը, մինչև իւր բարոյական զօրութեանը համեմատ զգալու էր իւր մէջ և նիւթական զօրութիւն։

Պ։ Անքէի խորհուրդը անպտուղ չը մնաց։ առ ժամանակ մի հրա-

---

[1]) Քաղցր պարտականութիւն կը համարինք մեզ, հրատարակել այս աշխատութիւնը տպագրութեամբ, հանգուցեալ խորհրդին և յանկութեանը համեմատ։

ժարվելով իւր մոադրութենից, կամէր Հանգուցեալը ասպարէզ մտանել ներկայ 1858 թուականի մէջ։ Աւարտած լինելով իւր ուսումը կովկասեան կօմիտետի ծախքով, արդէն արքունական կանոնադրութեամբ ենթարկվումէր այս կօմիտետի իշխանութեանը։ Կօմիտետի գլխաւոր գործակատար, պետական քարտուղար քաջափայլ Պարոն Վլադիմիր Պետրովիչ Բուտկովը, տեսանելով նորա արժանաւորութիւնը և յառաջադիմութիւնը, պաշտօնական թղթակցութեամբ յանձնեց նորան բժշկականութեան և վիրաբուժութեան երևելի վարդապետ և կայսերական Համալսարանի ուսուցչապետ Պարոն Ֆէօդօր Իվանովիչ Ինոզեմցովին, որ կրթէ նորան հանքային ջերով բժշկելու մէջ, որովհետև իշխանութիւնը մոածումէր ուղարկել նորան Կովկասու Բորջոմ ասացեալ տեղը, ուր դիմումեն անհամար հիւանդներ, հանքային ջերով բժշկվելու համար զանազան ցաւերից։ Պ. Ինոզեմցովը ճանաչելով նորան որպէս ընտիր ուսած աշակերտ, այլև միտ դնելով Դեկան Անքէ վարդապետի վկայութեանը, սիրեց նորան իբրև մի բարի անդամ մարդկութեան բարեկամ ընկերութեանը, և առաջարկեց Պ. Կրէյզեր բժշկին ընդունել նորան իւր հիւանդանոցի մէջ, ուր բժշկվումեն սառն ջրով, որպէս բանագէտ բժիշկ։ Այս երկու պաշտօնների մէջ ևս, նա գրաւել էր բոլոր ընկեր բժիշկների և վարդապետների սէրը դէպ ի ինքը և այնպիսի մեծ մեծ քայլերով յառաջ էր խաղում իւր ասպարիզումը, որ շուտով ահա և առանց տարակուսի ստանալու էր վարդապետութեան աստիճանը։

Այդ այլապէս էր Նախախնամութեան կամքը։ Հանգուցեալը պարապելով անդադար և ել ու մուտ առնելով Պ. Կրէյզերի հիւանդանոցի մէջ, ուր, ինչպէս ասացինք, միայն սառն ջրով են բժշկում, մրսեցաւ քանի անդամ, զօրացուց իւր թոքախտութիւնը (բարակացաւը) որով և շտապեցուց իւր ցաւելի և կսկծալի վախճանը։ Ընդհակառակ 1857 թուականի Դեկտեմբերի սկզբումը արդէն կարողութիւն չունէր տանից դուրս գալու. տկարութիւնը զօրանումէր առաւել և առաւել, մինչև որ Պ. Ինոզեմցովը խորհուրդ տուեց նորան տեղափոխվիլ դէպ ի կայսերական հիւանդանոցը, ուր աւելի խնամարկութեամբ կարելի էր դարման տանել ցաւին։

Հանգուցեալը Յունուարի սկզբումը տեղափոխվեցաւ դէպ ի յիշեալ հիւանդանոցը. բայց, բանը բանից անցել էր ահա։ Շուտով սաստիկ արիւնհոսութիւն բացվեցաւ նորա թոքերից, որ խլեց նորա ձայնը և քամեց վերջին զօրութիւնը։

Փետրվարի 16 ին, առաւօտեան 6 ժամին, այլևս չը կար նա կենդանի մարդերի կարգում. մայրը մնաւ նորա աչքը . . . . . .

Ա՛հվից քանի օր յառաջ, մինչ տկարութիւնը զայրանալով զայրանում էր, նորա մտածութիւնը էր միայն իւր մայրը, որի մասին խընդրում էր և մեր բարեկամ, պատուելի քժիշկ Յարութիւն Յովհաննէսեան Մարկոսեանից, որ անխնամ չը թողու նորան։

Փետրվարի 18 ին, առաւօտեան լինն ժամին, բոլոր Հայ ուսանողքը Մոսկվայի Կայսերական Համալսարանի և Հանդուցելու մերձաւոր և հեռաւոր ծանօթքը և բարեկամքը հաւաքված էինք Համալսարանի հիւանդանոցի մատուռի մէջ, ուր դրած էր Հանդուցելու մարմինը։ Եկեղեցու ուխտը, Հոգևհանգիստ կատարելով այն տեղ յառաջ շարժվեցաւ դէպ ի մեր եկեղեցին. որի քամակից լուռ և տխուր հանդիսաւորութեամբ հետևում էր սգաղգեաց խումբը։ Հանդուցելու մերձաւոր բարեկամքը և ուսանողքը ձեռքի վերայ հասուցին նորա դագաղը մինչև Հայոց եկեղեցին։

Ա՛ռաջու ժամերգութեան աւարտվելուց յետոյ, երբ որ պիտոյ է լսկանվէին Ննջեցելու վերայ տան և եկեղեցական կարգերը, գերապատիւ Ստեփանոս Եսայեան Նաղարեանց վարդապետը հանդէս գուրս եկաւ բազմութեան միջից և ասաց մի դամբանական ճառ, այնպիսի սրտաշարժ, այնպիսի տխուր և ներդաշնակ առոգանութեամբ, որ բոլոր ներկայ գտանվողքը արտասուեցին։ Եկեղեցական կարգի աւարտվելուց յետոյ, մինչ պիտոյ է երգէին «Ժողովեալքս ի հրաժարումն» մեր նուաստութիւնը նոյնպէս կարգաց մի դամբանական ճառ, տալով հանգուցելու մարմնին իւր հրաժարական ողջոյնը։

Մինչ այս պաշտօնը կատարվումէր, եկեղեցու մէջ ներկայ էին բաց ի ուսանողներից և հանդուցելու մերձաւոր և հեռաւոր մերաշնեայ բարեկամներից, նաև բժշկական ֆակուլտետի Դեկան և ուսուցչապետ Անքէ Վարդապետը և այլ Ռուս բարեկամք և ընկերք հանդուցելուն, որ եկած էին մասնակից լինելու այս տխուր հանդիսին։

Ագասիրտ խումբը յառաջ շարժվեցաւ դէպ ի Վագայնկով [1]. մի երկու ժամից յետոյ պիտոյ է հողին տայինք մեր հանդուցելու հողը։

Վերեղմանի վերայ ասացին դամբանական ճառեր Մոսկվայի Կայսերական Համալսարանի ուսանող պ. Փուղինեանցը և պ. Լազարեանց ճեմարանի աշակերտ, պ. Շահազիզեանը։ Մեք բոլոր յուղարկաւորքս բաժանվեցանք գերեզմանից, այն ժամանակ, երբ քահանայն գրեց խաչի կնիքը նորա մարմնի յաւիտենական օթևանի վերայ. . . .

Ա՛յսպէս վերջացաւ մեր բարեկամի կեանքը աշխարհի երեսին. նորա աշակերտութեան և առհասարակ կենդանութեան միջոցին արտացաւ

---

[1]) Հայոց գերեզմանատունը գտանվումէ Վագայնկով արուարձանի մէջ։

էին նորա համար Պ· Նաղարեանց վարդապետը, Պ· Մարկոսեան լժիշկը, և Պ· Սիմէօն Նիկոլայոսեան կանդինեանցը, որունք և օգնումէին նորան ամենայն կերպ։

Ա՛յս տեղ պարտականութիւն ենք համարում նոյնպէս, յայտնել մեր աս ի սրտէ անկեղծ շնորհակալութիւնը ազնուական Հայկազն, Պ· Մկրտիչ Սարգիսեան Սանասարեանցին։ Ա՛յս պատուելի և ազնիւ հոգով, մարդասէր Հայկազնը տեղեկանալով, որ հանգուցեալը բաց ի իւր վարքից ու գիտութենից, ոչինչ նիւթական պաշար չէր ձարել, իւր սեպհական արծաթովը հոգաց, ոչ թէ միայն հանդիսաւոր թաղման հարկաւոր պիտոյքը, այլև փառաւոր ճաշ պատրաստեց գերեզմանատունում 70 յուղարկաւորի համար։

Պարծանք քեզ, Հայաստան, որ, թէև փոքր, այնու ամենայնիւ ունիս զաւակներ, որունք իւրեանց ազգասիրութեամբը փառաւորումէին քո մոռացված ու փոշոտված անունը, որի յիշատակը անգամ ջնջված է քո շատ զաւակների սրտերից։ Մի մեծատուն մարդու մարմին մեծարել պատուով ու յարգութեամբ, նորա մահից յետոյ, դժուար բան չէ· բայց մի աղքատ և չքաւոր առաքինութիւն ճանաչել ու մեծարել, այդ է ահա գործը։

Ա՛յսպէս յայտնումենք մեր մաքուր սրտով շնորհակալութիւնը և լժիշկ Պ· Յարութիւն Յովհաննիսեան Մարկոսեանին, որ ինչպէս հանգուցեալու կենդանութեան և հիւանդութեան միջոցին, նոյնպէս և մահից յետոյ, անձանձիր աշխատութեամբ և եղբայրական ջերմ սիրով դլխաւոր գործակատար գտանվեցաւ այս մեր պատմած բոլոր բաների մէջ։ Գերեզմանատունում սեղանի վերայ, մինչ Պ· Սանասարեանցի առաքութենից և Պ· Մարկոսեանի հոգաբարձութեամբ, բոլոր յուղարկաւորքս ճաշ էինք վայելում, ամենայն ոք մեզանից խօսումէր հանգուցեալու մասին· յիշումէինք զանազան դիպուածներ նորա կեանքից, նորա խօսքերը և գործածական ղուարճալի առածները, պատմումէինք միմեանց ոմն ինչ գիտեր նորա վարքից· մի խօսքով, բոլոր ընկերութիւնը ոգևորված էր նորա քաղցր և բարի յիշատակովը։

Ա՛յս միջոցին, նորա ըստ պաշտօնի ընկեր, լժշկականութեան վարդապետ Պ· Օրանսկին, ասաց մի ռուսերէն համառօտ ճառ։ Հայկերութիւնը և հոգևհանդիստը աւարտված, յուղարկաւորքս բաւական ժամանակ մնացինք գերեզմանատունում, որպէս թէ մի բան քարշումէր և պահումէր մեզ այն տեղ· յետոյ Հայկազն լժիշկ Սարաչեանը հրաւիրեց մեզ ի միասին իւր տուն, որովհետև այն տխուր օրը, ոչ ոք մեզանից չէր կամենում բաժանվիլ իւր ընկերից։ Բաւական երկար միջոց մնացինք

պ· Սարաջեանի օթևանում, ուր անդադար խօսումէինք դարձեալ Հանգուցելու վերայ։

Ա.յս տեղ ըստ պաշտօնի ընկեր Հանգուցելուն պ· Սեվաստինսկին, պ· Մարկոսեանը, և պ· Օրանսկին ասացին սրտաշարժ խնամտներով անդիր ճառեր, ապացուցանելով իւրեանց սէրը և ջերմեռանդութիւնը դէպ ի Հանգուցեալը։

Ա.յսպէս աւարտվեցաւ մեր սիրելի ընկերի, եղբօր և բարեկամի թաղումը, մի այնպիսի թաղում, որին պատճառ ունէին նախանձել շատ մարդիկ։

Մ· Նալբանդեանց։

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌԵՐ.

Ա·

ՔՐԻՍՏՈՆԵԱՑ ԵՂԲԱՐՔ·

Ա.յն լաց ու արտասուքը որ մի քանի օր յառաջ իբրև քրիստոնէական պարտականութիւն կատարեցինք մեք մի հայրենակից, օտարութեան մէջ վախճանած եղբօր վերայ, այդ լաց ու արտասուքը դեռ ևս չը լըռված, դեռ ևս չը ցամաքած, — և ահա Աստուծոյ անքննելի տնտեսութիւնը ուղարկել է մեզ նոր սուգ, նոր արտասուք մի ծաղկափթիթ հասակում չորացած, մահու անգութ հարուածից չէիք դարձուցած կեանքի վերայ· ո՛հ, մի այնպիսի կեանքի վերայ, որ տալիս էր մեզ ամենագեղեցիկ յոյսեր, որ խոստանում մեզ մի ճոխ պտղաբերութիւն, որ պիտոյ է մի օր առաքինութեան վաստակներ վաստակէր իւր ազգի և եկեղեցւոյ համար։ Ա.յս բոլոր հոգեպայծառ յոյսերը, այս քաղցր ակընկալութիւնքը պիտոյ է մեզ այսօր դէպ ի գերեզման տանել, հողի մ'ը ամփոփել· տրտո՛ւմ մնածութիւն, քրիստոնեայ եղբարք, տխո՛ւր պարտականութիւն, սիրելի ընկերակիցք։ Բայց թոյլ տուեցէք ինձ մի փոքր չափի ու սահմանի տակ դնել մեր տրտմութիւնը այս ծանր զրկանքի վերայ· թո՛յլ տուեցէք ինձ մի քանի լաւ խաղաղ հոգով խօսել ձեր հետ այս րոպէիս։ Սա, այս վաղամեռիկ պատանին, իւր այրի մօր մի հատիկ որդի, իւր ծնողի ծերութեան միայնակ նեցուկ, ուր ամբողջ տարիք պանդխտանալով այս քաղաքումս, որպէս աշակերտ բժշկականութեան, պատերազմելով մի չքաւոր կարօտութեան հետ, այնու ամենայնիւ յաղթութեամբ աւարտել էր իւր ուսման ասպարէզը, և կամենում մի քանի ժամանակ ևս աշխատելով արժանանալ աւելի բարձր պատուի իւր գիտութեան հանդէսի մէջ։ Ա.յդ գեղեցիկ դիտաւորութեան պսակը դարձաւ նորա համար մի տխուր մեռելապսակ։ Ինձ, որ մեր Հան-

դուցեալ քրիստոնեայ եղբօր հետ երկար տարիներ ունեցած եմ աւելի մերձաւոր բարեկամական յարակցութիւնք, հարկաւոր է ասել ձեզ, սիրելի եղբարք, թէ այս պատանին եղել է մի շնորհալարդ, անչափ աշխատասէր աշակերտ իւր ծանր, բազմամանեայ գիտութեան մէջ։ Սորա ուսումնասիրութիւնը, սորա ջանքը և ջանադրութիւնը այն է եղած միշտ, որ ամենայն կողմից բովանդակալար ծանօթանալով իւր առուեստին, քննելով իւր գիտութեան բոլոր գաղտնիքը, կարողանայ մի օր արժանապէս լցուցանել իւր պաշտօնը որպէս բանագէտ բարեկամ մարդկութեան, որպէս ձեռնտու և օգնական, հիւանդի տխուր մնհճի մնտ։ Մեծ և խորհրդաւոր է, սիրելի եղբարք, մի բժիշկ մարդու պարտականութիւն մարդկային ընկերութեան մէջ. դորա ճարտարութենից կամ անփորձութենից կախ է շատ անգամ մի գերդաստանի հօր և մօր կեանքը և քաղաքացիների մարմնաւոր բարին։ Երանի՛ այն բժշկականութեան աշակերտին որ ճանաչելով իւր պարտականութեան մեծութիւնը, բարեխիղճ կերպով պատրաստել էր իւր անձը այդ սուրբ սպասաւորութեան համար մարդկութեան օգտին։ Մի այդպիսի շրջանկատ, օր ու գիշեր ուսանող ու մտածող պատանի էր այս մեր հանգուցեալ եղբայրը. դորա համար, երեկոյի արևը մայր է մտել, գրքի մնտ նըստած, քրտնելով, ուսանելով և նկատելով. և առաւօտու լոյսը բացվել է դորա վերայ, նոյնպէս գիրքը ձեռքին, պարապելով իւր ուսմանը, քունը հատանելով։ Ահա՛ մի գովելի օրինակ ուսումնասիրութեան, ահա՛ մի ընտիր դաղափար պատանի մարդերի համար, որ նուիրել էին իւրեանց կեանքը այդպիսի արժանաւոր կոչման։ Ձեր հետ է իմ խօսքը, Հայաղնեայ պատանիք, որ այժմ եղբայրօրէն շրջապատելով ձեր ննջեցեալ եղբօր դագաղը, մանկիկ էք այս տխուր ուղարկաւորութեան հանդիսին։ Ոչինչ բանով կարող չէք դուք աւելի արժանապէս մեծարել ձեր եղբօր յիշատակը, եթէ ոչ աշխատելով ամեն մինը ձեզանից ձեր ուսումնական ասպարէզի մէջ խմաստութեամբ գործ դնել ձեր կեանքի պատուական օրերը, և պատրաստել ձեր անձը, պիտանի մարդիկ լինելու ձեր ազգի մէջ, որ մեծ ակնկալութիւնք ունի ձեզանից, որ ամենայն օր աղօթումէ ձեր վերայ, որ դուք աճելով ու զօրանալով մտաւորապէս և բարոյապէս, պարծանք լինէիք Հայկական անուանը Ռուսաստանի մէջ։ Դուք պարտական էք մի օր լինել ձեր ազգի շինողքը և բարձրացնողքը. ձեր վերայ է ազգի յոյսը, ձեր վերայ բոլոր բարեացակամ Հայերի աչքը։ Պատանի՛ Հայկազունք, չը մոռանաք այս մեծ խօսքը որ ես ասումեմ ձեզ այսօր Աստուծոյ սուրբ տաճարի մէջ և նորա երկրպագելի սեղանի առաջև։ Գրեցէ՛ք այդ բառերը հրեղէն տառերով ձեր սրտի մէջ։

Ա՛յժմ դարձուցանեմ իմ դէմքը դէպ ի քեզ, յաւերժացեալ եղբայր, դու քաղցր ընկերակից մեր։ Երանի՛ քեզ, որ այսօր քո տեառնաբանը կարող է հրապարակով այնպէս խօսել, ինչպէս նա զգուէր իւր սրտի մէջ, առանց կասկածելու թէ իւր բերանը պղծել էր, անարժանապէս գործ դնելով խօսքի աստուածեղէն պարգևը։ Դու որպէս ժրադլուխ աշակերտ ուսման, որպէս արի սպասաւոր գիտութեան տաճարի մէջ, որպէս առաքինի քրիստոնեայ, աւարտել ես քո երկրաւոր կեանքի ասպարէզը և պատրաստվումես ահա ոտք կոխել այն ճանապարհի վերայ, որ մեր ամենեցուն ճանապարհն է, այն ճանապարհի վերայ որ պիտոյ է տանի քեզ դէպ ի անանց միշտնջենաւորութիւնը։ Երանի՛ քեզ, վերափոխեալ եղբայր, որ այդ քո ճանապարհը ցանած է այսօր քաղցր յիշատակի վարդերով, և քո ընկերակիցների անկեղծ արտասուքը պիտոյ է այսօր ղարդարեն քո գերեզմանը։ Երանի՛ քեզ, բարեկամ, որ ղուր և անխորհուրդ չէ եղել քո կեանքը աշխարհի վերայ· ոչ թէ երկրաւոր ունայն վայելչութիւնք հալումաշ արեցին քեզ, այլ քո անօրինակ աշխատասիրութիւնը քո առաքինական ասպարէզի մէջ։ Ար դարև իմացար դու գիտութեան հոգս ու տառապանքը, բայց կեանքի քաղցրութիւնը ոչ ճաշակեց քո սիրտը· բայց ինչ է այս երկրաւոր կեանքի առօրեայ քաղցրութիւնը որ շատերի համար դարձել է մի պաշտելի կուռք և մեռուցել է նոցա մէջ ամենայն ազնիւ, երկնաքաղաքայի ձգտողութիւն։ Թող ուրախանայ քո մաքուր հոգին· այս աշխարհիս ընտրեցիր դու քեզ առաւել լաւ մասը, առաւել գեղեցիկ բաժինը, այսինքն ջանք և աշխատութիւն առաքինութեան իշալից ասպարէզումը։ Բարեա՛ մնաս, քաղցր եղբայր, մինչև մեր ուրախալից կրկին տեսութիւնը հանդերձեալ կեանքի խորհրդաւոր առաւօտուն։

Ս· Նալբեանց,

Փետրվարի 18ին· 1858·
Մոսկվա։

Ը

ԲԱՐԵՊԱՇՏ ՔՐԻՍՏՈՆԵԱՑ·

Ա՛հա մարդուս կեանքը աշխարհի երեսին· երեկ խօսուն, շարժուն և զգայուն էակ, այսօր դրած դագաղի մէջ լուռ, անշարժ· և միթէ ճշմարիտ չէ Մարգարէի խօսքը, թէ մարդը վայրի ծաղկի պէս ծաղկումէ· ինչումէ նորա վերայ քամին և ահա չը կայ· չէր երևումէ և նորա տեղը ևս։ Ստոյգ է այս նմանութիւնը նիւթական կողմից, որովհետև մարդու

Նիւթական շօշափելի և ըմբռնելի մասը, այսինքն, մարմինը, արդարև գոյանում է, աճում, ծաղկում և չորանում ապա· բայց միթէ մարդը մարմին էր միայն· եթէ այսպէս հաւատայինք, ապա զուր էր Քրիստոսի մահը մեր համար, անարդիւն նորա փրկարար արիւնը· քաւ լիցի մեր կողմից այսպիսի անարժան մտածումին· հեռի մեզանից այդպիսի նիւթապաշտութիւն: Ինչ որ մեր առաջնում, դագաղի մէջ դրած է այս րոպէիս, չէ՛ նա, որին կորուսինք մեք, նորա բարեկամքս, այլ միայն մի հողեղէն թանձր պատեան, որի մէջ, երեք օր յառաջ ընակվում էր մի աննիւթ էակ, մի ղգայուն, բանական և յաւիտենական էակ, որ այս րոպէիս անտեսանելի է մեր մարմնաւոր աչքին: Մեր, սովորաբար անուանած կեանքը է մի ժամանակամիջոց, սկսած հոգու թանձրանալուց մարմնի մէջ, մինչև նորա բաժանվելը· բայց միթէ մի իր: մի էակ, ղգայուն կամ անղգայ, հաւաբվելու էր աւարտած իւր կեանքը, եթէ տեղափոխվել էր մի տեղից մի այլ տեղ· մի նիւթական, ախտաւոր և ալէկոծուն աշխարհից, դէպ ի մի աննիւթ, անախտ և խաղաղ աշխարհ, Ա՛յո՛, Մարգարէն նմանեցնում է մարդը ծաղկի այն ժամանակամիջոցում միայն, երբ նորա հոդին ներգործում է մի նիւթական շրջապատի մէջ, երբ կրում է իւր վերայ այն կաւեղէն ղգեստը, որ, այս րոպէիս, մեք ամենքեան ունինք:

Այսպիսի տխուր և խորհրդաւոր հանդիսում, եթէ աչքերս ձգենք միայն այն ժամանակամիջոցի վերայ, երբ հանգուցեալը ապրում էր մի նիւթական շրջապատի մէջ, այն ժամանակ չափից անցանում է մեր կորուստը և բարեկամական անկեղծ սրտի կսկիծը նորա հետ միասին· բայց որպէս Քրիստոնեայ հասկանալով մարդկային կեանքի խորհուրդը, արժան էր չափաւորել մեր սուգը, որովհետև հաւատում էինք, թէ հանգուցեալը մերկանալով իւր վերայից այս ծանր և ախտաւոր ղգեստը, վերացել էր դէպ ի մի այլ աշխարհ, ուր չը կայ ոչ ախտ, ոչ ցաւ, ոչ ծանրութիւն և ոչ վիշտ· ուր մի հիւրընկալ ծերունի տանուտէր գիրկը բաց հանդիպումէր իւր նոր դնացող զաւակներին, նորանց հանգստացնելու համար այն օթևանում, որ վաղուց ահա պատրաստել էր նորա որդին, նոցա համար, որ ճանաչել էին ճշմարտութիւնը, այն ճշմարտութիւնը, որ էր ինքը այդ տանուտիրոջ միածին որդին Յիսուս Քրիստոս:

Նորա համար, որ ճանաչել էր ճշմարտութիւնը, ինչ ունէ· նա յաւիտենական է· նա անմահ է: Նոյն իսկ մեր փրկութեան միայնակ միջնորդը, երկնաւոր հօր հետ խօսելով, թէ այս է յաւիտենական կեանքը, որ ճանաչեն քեզ ճշմարիտ Աստուած և քո ուղարկած Յիսուս Քրիստոսը, վկայում մեր խօսքին: Օրհնեալ է Աստուած որին ճանաչելը պարգևում մեզ անմահութիւն: Ուրեմն եղբայրք, չափաւորելով մեր

տրտմութիւնը, տանք մեր վերջին հրաժարական ողջոյնը հանգուցեալ մարմնին. չափաւորենք սուգը, մեր բարեկամի մեղանից բաժանվելու վրայ, որովհետև գնացել էր նա մի աւելի երջանիկ և նախանձելի աշխարհ, իւր հայրենիքը, իւր արարչի գոգը, մեր բոլորի կենդանութեան աղբիւրը և շարժառիթը։ Արի՛ք ուրեմն խառնենք մեր աղօթքը Աստուծոյ քահանաների և տաճարի սպասաւորների աղօթքի հետ և խնդրենք Աստուծուց, մեր երկնաւոր Հօրից, միաւորել հանգուցեալը այն լուսի հետ, դէպ ի որը նայում էինք մեք ամենքին։ Աղաչենք և Հոգին սուրբը, այն մխիթարիչը սգաւորների, մեղմել և ամոքել հանգուցեալ ծերունի և այրի մեր սրտի կսկիծը, որ անհամեմատ մեծ էր, քան թէ մերը, թէև սիրած լինէինք հանգուցեալը իբրև մեր անձը. սփոփել և մխիթարել սիրտը այն մեր, որ կապվում էր աշխարհի հետ մի միայն իւր որդու կենդանութեամբը։

Ախ դու, բարեկամ մեր, որ այս րոպէիս հեռացած ես, ընդունիր մեղանից մեր տխուր սրտի ղգայմունքը, որպէս մի յաւիտենական դրամական մեր բարեկամութեանը։ Քո քաղցր յիշատակը ապրելու է մեր սրտում, քանի սա ղարկում էր մեր կուրծքի մէջ. չենք մոռանալու քեզ և ոչ քո աշխի և առաքինի ունակութիւնը, ոչ այն րոպէները, որոնց միջոցին բաժանորդ էինք գտանված միմեանց վշտին և ուրախութեանը։ Քեզ ողջոյն, սիրական, դնա խաղաղութեամբ դէպ ի խաղաղութիւն, Աստուծոյ հրեշտակը քեզ առաջնորդ. նա թող հասուցանէ քեզ այն օթևանը, ուր և մեք կարճ միջոցում հաւաքվելու էինք։

Մ. Նալբանդեանց։

արի Փետրվ18 ին 1858.
Հայկական եկեղեցու մէջ։

Վ.

ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐԱԿԻՑՔ.

Հ՞ատ ժամանակ չէ, որ մեր պատուելի վարդապետներից մինը ասաց, թէ եղբարք, մահը սաստկանում մեր մէջ. արդեօք մեր երիտասարդ ընկերութիւնը չէ՞ պիտոյ ասէ մի և նոյն խօսքը. պատճառ, դու ես երկու օր է, որ մեր ընկերներից մինը գնաց մեր ձեռքից, որ նոր ծաղկում էր. աչքերս չը կարողացանք սրբել արտասուքից և ահա մահը խլեց մեզանից մի այլ ընկեր, որ ծաղկել էր արդէն և պտուղ էր բերում։ Եղբարք, դուք լաւ գիտէք, որ մեր սիրելի Գևղամեանցը մի տարի է, որ աւարտել էր իւր ուսման ընթացքը. ձեզ քաջ յայտնի է նորա ժրաջան

աշխատասիրութիւնը, որին ղօհ գնայ վերջապէս, այն աշխատասիրութիւնը, որի արդիւնքը ինքը վայելելու չէր միայն, որ իւր համար չէր միայն օգտակար, այլ ամենայն ազատորդու։

Ա՛ր սիրելի ընկեր, նոր ազատվեցար դու քո աշխատանքներից, որ թանգ պիտոյ է գնահատենք մեք։ Դու կամիր նոր կեանք վարել, հայրենիք յետ դառնալ, մայրդ և ազգականքդ ուրախացնել։ բայց այդ ըոլորը մնայ անկատար։ Աւաղ և քո մօրը։ ո՛րքան արտասուք կը թափիե նա, եթէ լսէ, որ այս տեղ, օտարութեան մէջ, յաւիտենիս յաւիտենից բարեաւ մնա ասացիր մեզ։ Անմոռանալի կը մնայ մեր մէջ քո սէրը, քո ազգասիրութիւնը մանաւանդ, որով վառված մոռածումիր անդադար Հայոց ազգի վերայ։ քանի՛, քանի՛ անգամ ասումիր մեզ, «եղբարք ժամանակ է, աշխատենք մեր ազգի համար»։ Հա, սիրելի Գեղամեանց, քո այս խօսքերը մեր մտքումն են, թէև ափսոս դու հեռացած ես մեղանից, այսուհետև չես յորդորելու մեզ այդպիսի ազգասիրական խօսքերով, բայց դորա փոխանակ, առաջուց ասածներդ միշտ հնչելու են մեր ականջի մէջ։ ափսոս և հազար ափսոս, որ քո մարմինը չը կարողացաւ պահպանել իւր շինուածքի ամբողջութիւնը այնքան ժամանակ, որքան հարկաւոր էր քո հոգուն, գովելի ցանկութիւնքդ կատարելու, ազգասիրական գաղափարներդ իրագործելու համար։ Գնա՛, մեր քաղցր ընկեր, Աստուած լուսաւորեսցէ քո հոգին։

Ռաֆայէլ Նէլսեան Փոլէնեանց։

Գ.

ԱՐԳՈՑ ՀԱՑՐԵՆԱԿԻՑՔ [1]։

Յաւելի տեսարան դրած է աչքիս առաջև, որից սաստիկ շարժվումի սիրտս։ անշնչացած մարմին դրած է այս դագաղի մէջ, մարմին եւ՛ աստուա՛ր իմ սիրելի հայրենակից Գէորգի, որ իւր մահովը մեզ բոլորիս սուգի մէջ թաղեց։ Դէպ ի քեզ են իմ խօսքը, ո՛վ եղբայր, նայիր իմ վերայ։ բայց աւա՛ղ աչքերդ փակված են, ի՛նչպէս կարող էիր մեզ տեսանել, ի՛նչպէս կարող էիր խօսել։ կապված է ահա յաւիտենիս քո քաղցր լեզուն։ ո՛ւր է այն գեղեցիկ ժպիտը որ քանի օր յառաջ փայլումէր քո շրթունքի վերայ, նորա փոխանակ մնհի գունաթափ վարա-

[1]) Բուն ճառը իւր լեզուի հնութեամբը անհամաձայն լինելով հիւսիսափայլ օրագրի ընդհանուր՝ ուղղութեանը և հոգուն, ազգային կենդանի լեզուով թարգմանած դրեցինք այս տեղ մի և նոյն բանը։

գոյրը ծածկել է քո երեսը։ Ցայտնի թող լինի ձեզ, սիրելի Հայրենակիցք, որ Հանգուցելու նպատակը արժանի էր ամենայն գովեստի։ Նորա միտքը և խորհուրդը ուղղեցած էին անդադար դէպ ի լուսաւորութեան տաճարը, դէպ ի եւրոպական կրթութիւնը։ Այս բաների Համար, թողնելով իւր սիրելի մայրը և անտես առնելով նորա արտասուքը, շտապեց դէպ ի Մոսկվայի Կայսերական Համալսարանը, իւր սրտի ցանկութիւնը լցուցանելու, այսինքն, իւր միտքը ճոխացնելու լուսաւոր գաղափարներով, որպէս ղի կարողանայ մի օր օգնական լինել ազգի լուսաւորութեանը և մխիթարութիւն իւր ալրացեալ մօրը։ Շատ տարիներ աշխատելով բժշկական արուեստի վերայ, աւարտեց իւր ուսումը մեծ յառաջադիմութեամբ, հիմնաւորապէս ուսած լինելով, որ իւր հաստատ և անխորտակելի աշխատութեան արդիւնքն էր։ Իւր ուսման ընթացքը աւարտելուց յետոյ, դարձեալ չը դադարեցաւ աշխատելուց, այլ մնաւանդ իւր առանձին պարապմունքի վերայ յաւելացուց և ազգային օգտի վերայ պարապելը, սկսեց թարգմանել եւրոպական լեզուներից զանազան բաներ, որ նորա Հայրենասէր ընկերքը տպելու են։

Ափսոս, որ չը կարողացաւ տանել այնքան աշխատութիւնների տառապանքին· ընկաւ հիւանդութեան ճանկը և չը կարողացաւ այնուհետև աղատել իւր անձը։ Ափսոս և նորա մօրը, որ անթարթ աչքով սպասումի իւր որդու վերադարձին· որքան արտասուք թափելու է նա, լսելով իւր սիրական զաւակի վախճանելու սև Համբաւը, այն սիրական զաւակի մահու բօթը, որ էր նորա միայնակ յոյսը, ապաւէնը, մխիթարութիւնը։

Ոչինչ չէ մնում մեզ, արդ՝ Հայրենակիցք, եթէ ոչ օրհնել Աստուծոյ անքննելի նախասահմանութիւնը և աղաչել միաբերան· Տէր, ընդունիր քո ծառայի հոգին խաղաղութեամբ և օգնական եղիր նորա անպատասպար մօրը։

Ս· Շահազիզեանց, աշակերտ
Պ· Լազարեանց դպրոցին։

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Ինագիտական ճառեր, այսինքն Բնութեան օրէնքների և դոյա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր գանազան ֆիզիկական յայտնագործութիւնների, հասարակաթոռ Աստեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Թիւղիսօկիայի վերայ· այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի լոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ դիւտերի և յայտնագործութիւնների մասին:

3. Խարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով· թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութիւնից· այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ցանկացողքը առանձ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս Въ Редакцію Армянскаго Журнала «Сѣверное Сіяніе». Въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца, կամ թէ Մոսկվայի նամականատանը այսպիսի հասցեով. Въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ:

Печатать позволяется. С. Петербургъ, Февраля 17-го, 1858 года.

Цензоръ П. Лажечниковъ.